

Լրամշակված Դրամաշնորհի Համաձայնագիր N C20636/EBSF-2010-09-140REV

## ԼՐԱՄՇԱԿՎԱԾ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Հայաստան. Կոտայքի կոշտ թափոնների կառավարում-շրջակա միջավայրի և սոցիալական ուսումնասիրություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

և

ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՋԱՐԳԱՑՄԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԲԱՆԿԻ

միջև

որպես Դրամաշնորհային միջոցների ղեկավար՝ տրամադրված ՎՋԵԲ Բաժնետերերի հատուկ հիմնադրամի կողմից ՎՋԵԲ Բաժնետերերի հատուկ հիմնադրամի ներքո

Հունվարի 26, 2011թ.

## ԼՐԱՄՇԱԿՎԱԾ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՄԱՉԱՅՆԱԳԻՐ

Սույն լրամշակված Դրամաշնորհային Համաձայնագիրը N C20636/EBSF-2010-09-140rev, կնքված 2011թ. հունվարի 26-ին **ՀՀ քաղաքաշինության նախարարության** (այսուհետ՝ «Պատվիրատու»), հասցեն՝ ՀՀ, 0010, Երևան Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3, և **Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի** միջև (այսուհետ՝ «Բանկ»), գլխավոր գրասենյակի հասցեն՝ Ուան Էքսչենջ հրապարակ, Լոնդոն EC2A 2JN, Միացյալ Թագավորություն, միջազգային ֆինանսական հաստատություն, որը կազմավորվել է Բանկի ստեղծման համաձայնագրի շրջանակներում, ստորագրված 1990թ. մայիսի 29-ին Փարիզում, և հանդես է գալիս որպես ՎԶԵԲ դրամաշնորհի միջոցների ղեկավար՝ 2006-2009թթ. Տեխնիկական համագործակցության կանադական ֆոնդ, որը տրամադրվում է տարբեր երկրների կառավարությունների կողմից (այսուհետ՝ «Դոնոր»):

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

**ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼՈՎ**, որ Բանկին հանձնարարվել է ուսումնասիրել Հայաստանում տեխնիկական համագործակցության տրամադրումը հետևյալ ոլորտում. **Կոտայքի կոշտ թափոնների կառավարում. Շրջակա միջավայրի և սոցիալական ազդեցության պատշաճ ուսումնասիրություն** (այսուհետ՝ «Ծրագիր»):

**ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼՈՎ**, որ COWI A/S (այսուհետ՝ «Խորհրդատու») կնքել է կամ մտադիր է կնքել Խորհրդատվական ծառայությունների տրամադրման պայմանագիր Պատվիրատուի հետ (այսուհետ՝ «Խորհրդատվական պայմանագիր»), պայմանագրի ձևը կցված է Հավելված Բ-ում՝ Հայաստան. **Կոտայքի կոշտ թափոնների կառավարում. Շրջակա միջավայրի և սոցիալական ազդեցության պատշաճ ուսումնասիրություն** (այսուհետ՝ «Ծառայություններ»),

**ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼՈՎ**, որ Խորհրդատուն համաձայնվել է տրամադրել Ծառայություններ Ծրագրի համար սույն Խորհրդատվական Պայմանագրում սահմանված պայմաններով և ժամկետներում՝ **120,000.00 եվրո** առավելագույն գումարով,

**ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼՈՎ**, որ, Դոնորի և Բանկի միջև կնքված Տեխնիկական համագործակցության հիմնադրամի համաձայնագրի համաձայն, Դոնորը հաստատել և համաձայնել է մինչև **120,000.00 եվրո**, որպես դրամաշնորհ, միջոցներ տրամադրել (այսուհետ՝ «Դրամաշնորհ»)՝ ֆինանսավորելու Խորհրդատուի տրամադրած Ծառայությունները Պայմանագրում սահմանված պայմաններով և ժամկետներում,

**ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼՈՎ**, որ Բանկը համաձայնել է ղեկավարել Դրամաշնորհի միջոցները սահմանված պայմաններով և ժամկետներում,

**ՆԵՆԵԼՈՎ ՎԵՐՈՂՅԻՇՅԱԼԻՑ** կողմերը սույնով համաձայնության են եկել հետևյալ պայմանների շուրջ.

## ՀՈՂՎԱԾ I – Սահմանումներ

### 1.01 Սահմանումները և դրանց մեկնաբանությունները

Եթե Համաձայնագիրը այլ բան չի պահանջում, ապա Համաձայնագրում օգտագործվող հասկացություններն ունեն հետևյալ նշանակությունները.

ա) «**Բանկ կամ ՎԶԵԲ**» նշանակում է Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ:

բ) «**Բյուջեի բացվածք**» նշանակում է. (1) Վճարման վրա հիմնված պայմանագրի դեպքում այն ժամանակացույց է, որտեղ նշվում են գումարի չափը, օրապահիկը և ցանկացած փոխհատուցվող ծախսեր, և (2) Միանվագ գումարով վճարման պայմանագրի դեպքում այն ժամանակացույց է, որտեղ Պայմանագրի առավելագույն արժեքը արտահայտված է ամբողջական վճարումների տեսքով:

գ) «**Պատվիրատու**»՝ այն կողմն է, ում տրամադրվում են Խորհրդատվական պայմանագրով

սահմանված Ծառայությունները:

դ) «**Խորհրդատու**»՝ այն կողմն է, որը տրամադրում է Ծառայություններ:

ե) «**Խորհրդատվական պայմանագիր**» նշանակում է Ծառայությունների իրականացման համար Պատվիրատուի և Խորհրդատուի միջև կնքված կամ կնքվելիք պայմանագիր, ներառյալ բոլոր կից ներկայացվող և պայմանագրին առնչվող այլ փաստաթղթերը:

զ) «**Առաջադրանքի իրականացման երկիր**» նշանակում է այն երկիրը, որտեղ տրամադրվելու են Ծառայությունները և/կամ Պատվիրատուի երկիրը (երկրները):

է) «**Դոնոր**» նշանակում է դրամաշնորհային միջոցներ տրամադրող մարմինը, ինչպես նշված է սույն Համաձայնագրի Ներածությունում:

ը) «**Վճարման վրա հիմնված պայմանագիր**» նշանակում է պայմանագիր, որի ներքո Ծառայությունները տրամադրվում են ֆիքսված գումարով վճարման համար սահմանված ժամկետում:

թ) «**Դրամաշնորհային**» այն միջոցներն են, որոնք տրամադրվում են Դոնորի կողմից Բանկին, որը հանդիսանում է միջոցների ղեկավար՝ Խորհրդատվական պայմանագրի ֆինանսավորման նպատակների համար:

ժ) «**Դրամաշնորհի Համաձայնագիր**» նշանակում է սույն Համաձայնագիրը և կցված բոլոր լրացումները , քանի որ ժամանակ առ ժամանակ այն կարող է փոփոխվել:

ի) «**Միանվագ գումարով վճարման պայմանագիր**» նշանակում է պայմանագիր, որի ներքո Ծառայությունները տրամադրվում են համաձայնեցված ամբողջական վճարումներով:

լ) «**Պայմանագրի առավելագույն արժեք**» նշանակում է այն առավելագույն արժեքը, որը պետք է վճարվի Խորհրդատուին Խորհրդատվական պայմանագրի շրջանակներում՝ ներառյալ բոլոր վճարումները, նպաստները և ծախսերը:

խ) «**Իրականացվող աշխատանքների ղեկավար**»՝ Բանկի աշխատակազմի այն անդամն է, որը Բանկի կողմից պատասխանատու է Խորհրդատվական պայմանագրի իրականացման մոնիտորինգի համար:

ծ) «**Ծառայություններ**» նշանակում է Ծառայություններ, որոնք պետք է Պատվիրատուին տրամադրի Խորհրդատուն, ինչպես սահմանված է Խորհրդատվական պայմանագրում:

կ) «**Տեխնիկական առաջադրանք**» նշանակում է Պատվիրատուի կողմից մշակված փաստաթուղթ, որում սահմանվում են Ծառայությունների տրամադրման պահանջները և նպատակները՝ սահմանելով Խորհրդատուի կողմից կիրառվելիք համապատասխան մեթոդները և ռեսուրսները և/կամ ձեռք բերվելիք արդյունքները:

## 1.02 Մեկնաբանումը

(ա) Սույն Համաձայնագրում վերնագրերը միայն հարմարավետության համար են և չպետք է ազդեն սույն Համաձայնագրի իմաստի վրա:

(բ) Սույն Համաձայնագրում օրենքին հղում կատարելը նշանակում է համապատասխանել այդ օրենքին և նորմերին, իսկ այդ օրենքները կարող են ժամանակ առ ժամանակ լրացվել կամ փոփոխվել և ուժի մեջ մտնել, ինչպես նաև ցանկացած օրենքին կան նորմերին, որը կարող է

լրացնել կամ փոխարինել այդ օրենքը կամ նորմերը:

(գ) Սույն Համաձայնագրում տղամարդ նշանակում է նաև կին, եզակին նշանակում է նաև հոգնակի, ինչպես նաև այդ ամենը հակառակ իմաստներով, անձանց հղում կատարելը նշանակում է նաև իրավական կարգավիճակ ունեցող կամ չունեցող մարմիններ և ընկերակցություններ: Անձին հղում կատարելը ներառում է նաև այդ անձի կողմից նշանակված փոխարինող անձը և իրավահաջորդը:

## **ՀՈԴՎԱԾ II – Գրամաշնորհ**

### **2.01 Գրամաշնորհը**

(ա) Բանկը համաձայն է Պատվիրատուին տրամադրել 120,000.00 եվրո կամ համարժեք գումարը չգերազանցող դրամաշնորհ սույն Համաձայնագրում նշված ժամկետով և պայմաններով:

(բ) Գրամաշնորհը կօգտագործվի միայն Խորհրդատուի աշխատանքներում ներգրավման ժամանակահատվածի ընթացքում՝ Ծառայությունները ֆինանսավորելու նպատակով:

### **2.02 Գումարների տրամադրումը**

(ա) Պատվիրատուն և Բանկը համաձայնում են, որ Բանկն իրավասու է Պատվիրատուի անունից գումարներ տրամադրել անմիջապես Խորհրդատուին:

(բ) Բանկը Գրամաշնորհի գումարը կտրամադրի անմիջապես Խորհրդատուին Պատվիրատուի անունից և վերջինիս ցուցումները ստանալուց հետո՝ Խորհրդատվական պայմանագրի Հոդված III-ի դրույթների համաձայն:

(գ) Խորհրդատուից հաշիվ-ապրանքագիրը և այլ առնչվող փաստաթղթերը ստանալուց հետո, որոնք ներկայացվել են Խորհրդատվական պայմանագրի աղյուսակ Բ-ի դրույթներին համապատասխան, Պատվիրատուն պետք է անհապաղ ստուգի և հաստատի հաշիվ-ապրանքագիրը և Խորհրդատուի կողմից բավարար կերպով իրականացված այն Ծառայությունները, որոնց վերաբերում է այդ հաշիվ-ապրանքագիրը և:

(դ) Եթե Ծառայությունները բավարար կերպով իրականացված են և Պատվիրատուն համոզվում է, որ հաշիվ-ապրանքագրում նշված գումարը համապատասխանում է Խորհրդատվական պայմանագրի աղյուսակ Բ-ում սահմանված գումարին, ապա հաշիվ-ապրանքագիրը, առնչվող փաստաթղթերը և Ծառայությունների հաստատումը հավաստող տեղեկանքը (ինչպես նշված է Գրամաշնորհի Համաձայնագրի Հավելված Ա-ում) պետք է ներկայացվեն Բանկի հիմնադրամի ֆինանսական հսկողության բաժին՝ դրանց վճարումը կատարելու նպատակով:

### **2.03 Հարկեր և տուրքեր**

(ա) Պատվիրատուն համաձայնում է, որ Գրամաշնորհի գումարները չպետք է օգտագործվեն հարկերի վճարման համար (ներառյալ ցանկացած անուղղակի հարկ, օրինակ՝ ԱԱՀ), որոնք առնչվում են Ծառայություններին կամ պետք է վճարվեն սույն Համաձայնագրով՝ Առաջադրանքի երկրում գործող օրենքների և նորմերի համաձայն:

(բ) Պատվիրատուն պետք է տեղեկացնի Բանկին Խորհրդատվական պայմանագրի հետ կապված վճարման ենթակա ցանկացած անուղղակի հարկի մասին (ներառյալ ԱԱՀ):

(գ) Պատվիրատուն համաձայնում է, որ վճարման ենթակա ցանկացած անուղղակի

հարկ (ներառյալ ԱԱՀ) պետք է վճարվի Խորհրդատուին Պատվիրատուի կողմից:

(դ) Եթե պետք է վճարվի ցանկացած անուղղակի հարկ (ներառյալ ԱԱՀ), 2.02 դրույթի (դ) կետի համաձայն Բանկին փաստաթղթերը տրամադրելիս, Պատվիրատուն պետք է նաև հաստատի ըստ Խորհրդատուի նախորդ հաշիվ-սպրանքագրերի կատարած անուղղակի հարկերի (ներառյալ ԱԱՀ) վճարումները և կատարի անուղղակի հարկերի (ներառյալ ԱԱՀ) վճարումները՝ ընթացիկ հաշիվ-սպրանքագրի համաձայն:

(ե) Ցանկացած անուղղակի հարկի (ներառյալ ԱԱՀ) չվճարումը Պատվիրատուի կողմից կարող է հանգեցնել սույն Համաձայնագրի գործողության դադարեցմանը՝ 5.03 դրույթի համաձայն:

### **ՀՈՒՎԱԾ III – Ծրագրի Իրականացումը**

#### **3.01 Համագործակցություն և տեղեկացվածություն**

(ա) Բանկը և Պատվիրատուն պետք է սերտորեն համագործակցեն Խորհրդատվական պայմանագրի ղեկավարման առնչությամբ:

Բանկը և Պատվիրատուն, նրանցից յուրաքանչյուրի խնդրանքով, պետք է ժամանակ առ ժամանակ Ծրագրի իրականացման ընթացքի, Ծառայությունների մատուցման, Դրամաշնորհի նպատակների իրականացման, սույն Համաձայնագրի շրջանակներում Պատվիրատուի պարտավորությունների կատարման և Խորհրդատվական պայմանագրի շրջանակներում Պատվիրատուի և Խորհրդատուի պարտավորությունների իրականացման մասին կարծիք փոխանակեն և մյուս կողմի խելամիտ խնդրանքի դեպքում պետք է տրամադրի վերջինիս բոլոր ունեցած տեղեկությունները:

(բ) Պատվիրատուն պետք է արագ կերպով տեղեկացնի Բանկին Ծրագրի կամ Ծառայությունների կամ Պատվիրատուի աշխատանքի բնույթի կամ շրջանակի որևէ փոփոխության, ինչպես նաև ցանկացած իրավիճակի կամ պայմանի մասին, որը կարող է էապես խոչընդոտել Ծրագրի իրականացմանը կամ Ծառայությունների մատուցմանը կամ Պատվիրատուի գործառույթների իրականացմանը:

(գ) Առանց նախապաշարմունքի վերը նշվածի առումով, Պատվիրատուն առանց Բանկի գրավոր համաձայնությունը ձեռք բերելու չպետք է որևէ էական փոփոխություն կատարի Խորհրդատվական պայմանագրում, ներառյալ առաջադրանքի և ենթակապալի պայմանագրի հետ կապված ցանկացած որոշման կայացում: Բոլոր դեպքերում Խորհրդատվական պայմանագրում կատարվող բոլոր փոփոխությունների մասին Պատվիրատուն պետք է տեղեկացնի Բանկին:

#### **3.02 Գրառումներ/արձանագրություններ և հաշվետվություններ**

(ա) Պատվիրատուն պետք է.

(1) վարի համապատասխան գործընթացներ և գրառումներ՝ արձանագրելու և հսկելու համար Ծառայությունների տրամադրման ընթացքը (այդ թվում դրանց արժեքը և օգուտները), և որոշի Դրամաշնորհի միջոցներից ֆինանսավորվող Ծառայությունները, ինչպես նաև Բանկի պահանջելու դեպքում այդ արձանագրությունները ներկայացնի Բանկի ներկայացուցչին:

(2) վարի հաշիվները և ֆինանսական հաշվետվությունները (հաշվեկշիռներ, եկամուտների և ծախսերի մասին հաշվետվություն և այլ առնչվող հաշվետվություններ), որոնք անհրաժեշտ են Ծառայությունների տրամադրման ընթացքի նկատմամբ մոնիտորինգ վարելու և դրանք արձանագրելու համար,

ներառյալ՝ ծախսերը և Ծառայությունների իրականացումից ստացված օգուտները, և Բանկի պահանջելու դեպքում այդ տեղեկությունների պատճենները ներկայացնել Բանկին այն մանրամասներով, ինչպես որ վերջինս պահանջում է:

- (3) հնարավորություն տա Բանկի ներկայացուցչին Բանկի խնդրանքով այցելել Ծրագրի կամ Խորհրդատվական պայմանագրի հետ առնչվող ցանկացած վայր և ուսումնասիրել Դրամաշնորհի միջոցներից ֆինանսավորվող Ծառայությունները և սույն Համաձայնագրի կամ Խորհրդատվական պայմանագրի շրջանակներում Պատվիրատուի կամ Խորհրդատուի պարտավորությունների իրականացմանն առնչվող ցանկացած գործարան, սարքավորումներ, աշխատանքի իրականացման վայր, աշխատանքներ, կառույցներ, սեփականություն, գրառումներ և փաստաթղթեր:
- (4) ներկայացնի Բանկի ներկայացուցչին Բանկի պահանջած բոլոր այն տեղեկությունները, որոնք վերաբերում են Ծրագրին և Ծառայությունների տրամադրմանը, դրանց արժեքին և դրանց իրականացումից ստացված արդյունքներին, եթե այդպիսիք կան, ինչպես նաև Դրամաշնորհի միջոցների ծախսերին:
- (5) ներկայացնել կամ պատրաստել ներկայացնելու Բանկի ներկայացուցչին այն բոլոր ծրագրերը, մասնագրերը, հաշվետվությունները, պայմանագրերը, փաստաթղթերը (ներառյալ Խորհրդատվական պայմանագրի ներքո ձեռք բերված արդյունքները), այդ փաստաթղթերում կատարված ցանկացած փոփոխությունը կամ այդ փաստաթղթերին կցված լրացումները այն մանրամասներով, ինչպես որ պատշաճ կերպով պահանջում է Բանկը:

(բ) Ծառայությունների տրամադրման ավարտից անմիջապես հետո Պատվիրատուն պետք է նախապատրաստի և Բանկին ներկայացնի Ծառայությունների իրականացման և ներգործության, ծախսերի և դրանց իրականացումից ստացված օգուտների, ինչպես նաև սույն Համաձայնագրի կամ Խորհրդատվական պայմանագրի շրջանակներում Պատվիրատուի, Խորհրդատուի և Բանկի համապատասխան պարտավորությունների իրականացման վերաբերյալ հաշվետվություն սահմանված լեզվով և այն ծավալով ու մանրամասներով, ինչպես որ պահանջում է Բանկը:

(գ) Պատվիրատուի կողմից պատրաստված բոլոր հաշվետվությունների և արձանագրությունների փաստաթղթային և էլեկտրոնային տարբերակները պետք է պատրաստվեն Microsoft Word և/կամ Excel ծրագրերով և համատեղելի լինեն Acrobat ծրագրի հետ:

### **3.03 Գաղտնիությունը**

Բացառությամբ այն դեպքերի, երբ նախապես առկա է Բանկի գրավոր համաձայնությունը, Պատվիրատուն չպետք է տարածի, ստիպի կամ թույլատրի իր աշխատակիցներին կամ ենթակապալառուներին հայտնել երրորդ կողմին և ոչ էլ իրենց անձնական նպատակների համար օգտագործել Ծառայությունների, Ծրագրի կամ Բանկի, ինչպես նաև սույն Համաձայնագրի կամ Խորհրդատվական պայմանագրի ֆինանսական հարցերի հետ կապված ցանկացած տեղեկություն: Պատվիրատուն կարող է տրամադրել նման տվյալներ և տեղեկություններ, եթե դա պահանջվում է օրենքով կամ կիրառվող կանոնադրությամբ, սակայն տվյալները և տեղեկությունները ներկայացնել միայն այն ծավալով, որը թույլատրվում է համապատասխան օրենքով կամ օրենքի պահանջներով: Եթե առկա է նման պահանջ, Պատվիրատուն պետք է անհապաղ այդ մասին տեղեկացնի Բանկին:

### **3.04 Գործունեության իրականացում**

Եթե Բանկի հետ այլ համաձայնություն ձեռք չի բերվել, Պատվիրատուն պետք է

իրականացնի իր աշխատանքները և գործունեությունը (այդ թվում որևէ մասնաճյուղի գործունեությունը) միջազգայնորեն ընդունված հուսալի վարչարարական, տեխնիկական, ֆինանսական և շրջակա միջավայրի ստանդարտների և փորձի համաձայն՝ որակավորված և փորձառու կառավարման հսկողության ներքո, որին կաջակցի անհրաժեշտ քանակությամբ աշխատակիցներից կազմված իրավասու անձնակազմը:

#### **ՀՈԴՎԱԾ IV – Ներկայացուցչություն**

##### **4.01 Իրավասու ներկայացուցիչներ**

Սույն Համաձայնագրի շրջանակներում ցանկացած գործողություն, որ պահանջվում կամ թույլատրվում է ձեռնարկել և ցանկացած փաստաթուղթ, որ պահանջվում կամ թույլատրվում է գործածել, պետք է ձեռնարկվի կամ իրականացվի:

(ա) Պատվիրատուի անունից՝ Ավագ Հակոբյանի կամ լիազոր ներկայացուցչի կողմից, և

(բ) Բանկի անունից՝ Խորհրդատվության և գնումների վարչության տնօրենի կամ Բանկի որևէ լիազորված ներկայացուցչի կողմից:

##### **4.02 Ծանուցումներ և խնդրանքներ**

Ցանկացած ծանուցում, խնդրանք կամ համաձայնություն, որը պահանջվում կամ թույլատրված է սույն Համաձայնագրով, պետք է կատարվի գրավոր եղանակով և անգլերեն լեզվով: Նախատեսվում է, որ ներկայացվող կամ ձեռք բերվելիք այդպիսի ցանկացած ծանուցում, խնդրանք կամ համաձայնություն պետք է փոխանցվի Կողմի լիազորված անձին, որին ուղղված է ուղերձը, կամ ուղարկվի նշված հասցեով, էլեկտրոնային հասցեով կամ ֆաքսով:

##### **Պատվիրատուի հասցեն է.**

Ում՝ Ավագ Հակոբյանին

Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3,

ՀՀ, 0010, Երևան

Հեռ.: + 37410 565 131

Էլ.հասցե. [av.hakobyan@mud.am](mailto:av.hakobyan@mud.am)

##### **Բանկի հասցեն է.**

Ում՝ Լեվան Շարվադզեին, Աշխատանքների ղեկավար

Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ

Ուան Էքսչենջ հրապարակ

EC2A 2JN, Լոնդոն, Մեծ Բրիտանիա

Ֆաքս. + 44 20 7338 6964

Էլ.հասցե. [sharvadl@ebrd.com](mailto:sharvadl@ebrd.com)

(ա) Նախատեսվում է, որ ծանուցումը ուժի մեջ կլինի հետևյալ դեպքերում.

- եթե ներկայացվում է անձամբ կամ ներկայացնելուց հետո էլեկտրոնային հասցեով, և
- եթե էլեկտրոնային և ֆաքսով ուղարկված ծանուցմանը հաջորդում է հաստատումը:

(բ) Կողմերից մեկը կարող է փոխել իր հասցեն՝ այդ մասին գրավոր ծանուցելով մյուս Կողմին՝ սույն դրույթի համաձայն:

## **ՀՈԳՎԱԾ V – Գումարի տրամադրման դադարեցում և Համաձայնագրի խզում**

### **5.01 Պատվիրատուի ծանուցումը**

Պատվիրատուն պետք է արագ կերպով ծանուցի Բանկին Խորհրդատվական պայմանագրի խզման կամ դադարեցման մասին կամ ցանկացած իրավիճակի մասին, որը կարող է հանգեցնել Խորհրդատվական պայմանագրի խզմանը կամ դադարեցմանը:

### **5.02 Գումարների տրամադրման դադարեցումը**

Եթե տեղի են ունեցել և շարունակվում են ստորև նշված դեպքերից որևէ մեկը, Բանկը, գրավոր ծանուցում ուղարկելով Պատվիրատուին, կարող է անմիջապես դադարեցնել գումարի լրիվ կամ մասնակիորեն վճարումը Խորհրդատուին՝ սույն Համաձայնագրի պայմանների համաձայն.

(ա) Բանկը դադարեցրել է Պատվիրատուին տրամադրել Ծրագրի դրամաշնորհի գումարները կամ բաժնետիրական ներդրումները, եթե այդպիսիք կան,

(բ) Խորհրդատվական պայմանագիրը դադարեցվել կամ խզվել է Խորհրդատվական պայմանագրի պայմանների համաձայն,

(գ) Պատվիրատուն ժամանակին չի վճարել Խորհրդատուի ներկայացրած հաշիվ-ապրանքագրերի անուղղակի հարկերը (ներառյալ ԱԱՀ)՝ Խորհրդատվական պայմանագրի պայմանների համաձայն,

(դ) ի հայտ է եկել ցանկացած այլ պայման, որը Բանկի հիմնավորված կարծիքով, խոչընդոտում է կամ խոչընդոտելու սպառնալիք է ներկայացնում Ծառայությունների տրամադրման կամ Ծրագրի կամ սույն Համաձայնագրի նպատակների հաջող իրականացման համար:

### **5.03 Սույն Համաձայնագրի դադարեցումը Բանկի կողմից**

(ա) Բանկը կարող է, Պատվիրատուին գրավոր ծանուցելու միջոցով, դադարեցնել սույն Համաձայնագիրը, եթե.

- Բանկի կողմից Խորհրդատուին գումարի լրիվ կամ մասնակիորեն վճարումը դադարեցնելուց և Պատվիրատուին այդ մասին գրավոր ծանուցելուց հետո երեսուն (30) օրվա ընթացքում 5.02 դրույթում նշված պայմաններից որևէ մեկը շարունակվում է, կամ
- Ծրագրի դրամաշնորհի համաձայնագրի կամ բաժնետիրական ներդրումների պայմանագրի, եթե այդպիսին կա, կամ Խորհրդատվական պայմանագրի գործողության ժամկետը լրացել կամ դադարեցվել է՝ համապատասխան պայմանների համաձայն, կամ
- Պատվիրատուն և Բանկը համաձայնում են դադարեցնել Համաձայնագիրը՝ սույն Համաձայնագրի պայմանների համաձայն, կամ
- Դոնորը չեղյալ է հայտարարում Դրամաշնորհի ֆինանսավորումը:

(բ) Բանկը կարող է ցանկացած պահի խզել սույն Համաձայնագիրը ցանկացած իրադարձության առաջացման դեպքում՝ այդ մասին ոչ պակաս, քան քառասուն օր առաջ գրավոր ծանուցելով Պատվիրատուին:

### **5.04 Համաձայնագրի դադարեցման գործընթացը**

Սույն Համաձայնագրի 5.03 դրույթի համաձայն՝ Համաձայնագիրը դադարեցնելուց հետո Պատվիրատուն պետք է անհապաղ քայլեր ձեռնարկի՝ Խորհրդատվական պայմանագրի շրջանակներում կորուստները նվազեցնելու և հետագա ծախսերը նվազագույնի հասցնելու նպատակով:



## ՀՈԴՎԱԾ VI – Ընդհանուր դրույթներ

### 6.01 Պատասխանատվության բացառումը

Չնայած սույն Համաձայնագրի ցանկացած այլ դրույթին, Բանկը չպետք է պատասխանատու լինի Պատվիրատուին կամ Խորհրդատուին սույն Համաձայնագրի կամ Խորհրդատվական պայմանագրի շրջանակներում կամ դրանց հետ կապված Բանկի անուշադրության կամ բացթողումների պատճառով առաջացած ցանկացած կորստի կամ հասցված վնասի համար: Այս դրույթը չի վերաբերում Բանկի կողմից ցուցաբերված այն կարգի անուշադրությանը կամ բացթողումներին, որոնք Պատվիրատուի կամ Խորհրդատուի անձնակազմի կամ փորձագետների անձնական վնասվածքների կամ մահվան պատճառ են հանդիսացել:

### 6.02 Երաշխավորություն

Պատվիրատուն՝ համաձայն Բանկի արտոնությունների ու անձեռնամխելիությանը, պարտավոր է պաշտպանել և անվնաս պահել Բանկին, նրա տնօրեններին, գրասենյակային աշխատողներին, աշխատակիցներին, գործակալներին և կապալառուներին բոլոր տեսակի դատական հայցերից, վնասներից, ծախսերից, պարտավորություններից, դատական վարույթներից, կորուստներից, որոնք առաջացել են Պատվիրատուի կամ Խորհրդատուի, իրենց աշխատակիցների, ենթակապալառուների կամ գործակալների որևէ գործողության կամ բացթողումների, լինի դա ոչ անկողծ վերաբերմունքի, անուշադրության կամ ցանկացած այլ պատճառով կամ սույն Համաձայնագրի կամ Խորհրդատվական պայմանագրի շրջանակներում իրենց պարտավորությունների խախտման կամ օրենքներին, կանոններին կամ կանոնակարգերին չհետևելու պատճառով:

### 6.03 Խարդախություն և կոռուպցիա

Բանկը, առանց Համաձայնագրի պարտավորությունների որևէ խախտում ուղղելու նախապաշարմունքի, կարող է անմիջապես դադարեցնել սույն Համաձայնագիրը, եթե Բանկի կարծիքով, Պատվիրատուն և/կամ Խորհրդատուն Խորհրդատվական պայմանագրի մրցակցային գործընթացի կամ իրականացման ընթացքում ներգրավված է եղել կոռուպցիոն կամ խարդախ գործունեության մեջ:

«կոռուպցիոն գործունեություն»՝ նշանակում է որևէ արժեք ներկայացնող իրի ուղղակի կամ անուղղակի առաջարկումը, տրամադրումը, ստացումը կամ դրա վերաբերյալ համաձայնության գալը՝ ընտրության գործընթացի կամ Պայմանագրի իրականացման հետ կապված մյուս կողմի գործողությունների վրա ազդեցություն ունենալու նպատակով,

«խարդախ գործունեություն»՝ նշանակում է որևէ գործողություն կամ փաստերի բացթողում, այդ թվում կեղծ տվյալների ներկայացում կամ խեղաթյուրում, որը գիտակցաբար կամ չնտածված կերպով փորձում է մոլորության մեջ գցել մի կողմին՝ ֆինանսական կամ այլ շահույթ ստանալու կամ պարտավորությունից խուսափելու նպատակով,

«հարկադրանքի գործունեություն»՝ նշանակում է որևէ կողմին կամ կողմի գույքին ուղղակիորեն կամ անուղղակի վնաս պատճառելը կամ վնաս պատճառելու սպառնալիքների առաջ քաշումը՝ մի կողմի գործողությունների վրա ազդեցություն ունենալու նպատակով,

«թաքնված պայմանավորվածության գործունեություն»՝ նշանակում է երկու կամ ավելի կողմերի միջև ձեռք բերված համաձայնություն սահմանված նպատակին ոչ պատշաճ կերպով հասնելու և մյուս կողմի գործողությունների վրա ազդեցություն ունենալու նպատակով, ինչպես նաև խորհրդատուների միջև ձեռք բերված ցանկացած համաձայնություն (մինչև առաջարկներ ներկայացնելը կամ դրանից հետո), ըստ որի սահմանվում են մրցութային արժեքները արհեստական, ոչ մրցակցային մակարդակի վրա և զրկում են Պատվիրատուին ազատ և բաց մրցույթի հնարավորությունից:

**6.04 Բանկի կողմից իրականացվող ստուգումներ և աուդիտ**

Պատվիրատուն պետք է թույլատրի, որպեսզի Բանկը կամ Բանկի լիազորված ներկայացուցիչը ստուգումներ իրականացնի վերջիններիս հաշիվների և գրառումների նկատմամբ, որոնք առնչվում են սույն Համաձայնագրի, Խորհրդատվական պայմանագրի և Ծառայությունների կատարմանը, ինչպես նաև պետք է թույլատրի, որպեսզի այդ հաշիվները աուդիտի ենթարկվեն Բանկի կողմից նշանակված աուդիտորների կողմից, եթե Բանկը ներկայացնի նման պահանջ:

**6.05 Միտումնավոր դատարկ է թողնված**

**6.06 Համաձայնագիրը կարգավորող օրենքը և վեճերի լուծումը**

(ա) Սույն Համաձայնագիրը պետք է մեկնաբանվի անգլերեն լեզվով գրված օրենքի համաձայն: Սույն Համաձայնագրից բխող կամ դրա հետ կապված ցանկացած ոչ պայմանագրային պարտավորություն պետք է ղեկավարվի և մեկնաբանվի անգլերեն լեզվով գրված օրենքի համաձայն:

(բ) Ցանկացած վեճ, վիճաբանություն կամ պահանջ, որն առաջանում կամ վերաբերում է սույն Համաձայնագրին, կամ Համաձայնագրի խախտում, դադարեցում կամ անվավեր ճանաչում կամ սույն Համաձայնագրից բխող կամ դրան վերաբերող ցանկացած ոչ պայմանագրային պարտավորություն, որը չի կարող խաղաղ լուծվել, պետք է լուծվի արբիտրաժի միջոցով՝ սույն Համաձայնագրի ամսաթվի կտրվածքով ուժի մեջ մտած և գործող Միջազգային արբիտրաժի օրենքի գծով Միացյալ Ազգերի հանձնաժողովի (ՄԱՕ ՄԱԿՀ) արբիտրաժի ընթացակարգերի կանոններին համաձայն: Վեճի լուծման համար պետք է լինի մեկ դատավոր, իսկ ՄԱՕ ՄԱԿՀ արբիտրաժի ընթացակարգերի կանոնների նպատակները նշանակող մարմինը պետք է լինի Լոնդոնի Միջազգային արբիտրաժային դատարանը: Դատավորի նստավայրը և աշխատատեղը կլինի Լոնդոնում, Անգլիա, իսկ արբիտրաժային գործողությունների ամբողջ ընթացքը կընթանա անգլերեն լեզվով: Այսպիսով, Կողմերն ազատվում են 1996թ. Արբիտրաժային օրենքի ներքո սահմանված որևէ իրավունքից կամ արբիտրաժային որոշումը Անգլիայի դատարաններում կամ այլ տեղերում բողոքարկելու հնարավորությունից: Անկախ ՄԱՕ ՄԱԿՀ արբիտրաժի ընթացակարգերի կանոնների որևէ դրույթից՝ դատավորը լիազորված չէ ձեռնարկել կամ ապահովել որևէ միջանկյալ միջոցներ Բանկի շահերը պաշտպանելու և որոշումները մեղմացնելու ուղղությամբ, և Պատվիրատուն համաձայնում է, որ վերջինս չունի դատական որևէ ազդեցություն:

(գ) Սույն Համաձայնագրում սահմանված ոչ մի դրույթ չպետք է մեկնաբանվի որպես Բանկի որևէ արտոնությունից, առավելությունից և բացառությունից հրաժարում, չընդունում կամ դրանց փոփոխություն Բանկի կողմից, քանի որ դրանք համաձայնեցված են Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի ստեղծման մասին Համաձայնագրով, միջազգային կոնվենցիայով կամ ցանկացած այլ կիրառվող օրենքով:

**6.07 Ուժի մեջ մտնելը**

Սույն Համաձայնագիրը ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրումից հետո վերը նշված ամսաթվով, և եթե Հոդված V–ի համաձայն Համաձայնագրի գործողությունը չի դադարեցվում կամ այն չի խզվում, ապա մնում է ուժի մեջ մինչև Խորհրդատվական պայմանագրի շրջանակներում սահմանված Ծառայությունների տրամադրումը և բոլոր վճարումների կատարումը ավարտվի:

**6.08 Համաձայնագրի փոփոխումը**

Սույն Համաձայնագիրը կարող է փոփոխվել միայն Բանկի և Պատվիրատուի միջև գրավոր համաձայնության դեպքում՝ պատշաճ կերպով իրականացված լիազորված ներկայացուցիչների կողմից:

#### **6.09 Ընդհանուր համաձայնագիրը**

Սույն Համաձայնագիրը իր բոլոր հավելվածների հետ միասին, քանի որ, 6.08 դրույթի համաձայն, այն ժամանակ առ ժամանակ փոփոխվում է, պարունակում է Կողմերի միջև համաձայնեցված բոլոր պարտավորությունները և պայմանավորվածությունները և բացառում է սույն Համաձայնագրի առարկային վերաբերող մնացած այլ առաջարկները կամ համաձայնությունները: Կողմերից ոչ մեկը իրավասու չէ խոստումներ տալ կամ պայմանավորվել, իսկ Կողմերը պատասխանատու կամ կապված չեն այն ամենի հետ, ինչը սույն Համաձայնագրում շարադրված չէ:

#### **6.10 Իրավահաջորդը**

Սույն Համաձայնագիրը պետք է կապի և ծառայի սույն Համաձայնագրի կողմերի կողմից նշանակված համապատասխան փոխարինողի և իրավահաջորդի օգտին:

#### **6.11 Երրորդ կողմի իրավունքների բացառումը**

Սույն Համաձայնագիրը չի նախատեսում որևէ իրավունք 1999թ. Պայմանագրերի մասին ակտի շրջանակներում (Երրորդ կողմի իրավունքները), որը հարկադրվում է Համաձայնագրի կողմ չհանդիսացող այլ անձի կամ մարմնի կողմից, բացառությամբ, եթե այդ անձը կամ մարմինը սույն Համաձայնագրի կողմերի իրավունքների իրականացման փոխարինողը կամ իրավահաջորդն է:

#### **6.12 Որոշ դրույթների գործողության պահպանումը**

Սույն Համաձայնագրի 3.03, 6.01, 6.02, 6.03, 6.04 և 6.06 դրույթների գործողությունը պետք է պահպանվի սույն Համաձայնագիրը խզելուց կամ գործողության ժամկետը ավարտվելուց հետո:

#### **6.13 Համաձայնագրի լեզուն**

Սույն Համաձայնագրի պաշտոնական լեզուն անգլերենն է, եթե այլ բան համաձայնեցված չէ Բանկի հետ կամ չի պահանջվում վերջինիս կողմից: Սույն Համաձայնագրի և Խորհրդատվական պայմանագրի շրջանակներում բոլոր տեսակի նամակագրությունը, փաստաթղթերը և հաշվետվությունները պետք է պատրաստվեն և ներկայացվեն անգլերեն լեզվով: Լեզվի հետ կապված ցանկացած վիճաբանության ժամանակ կգերակայի անգլերեն տարբերակը:

#### **6.15 Լրացուցիչ գործողություններ**

Ցանկացած պահին և ժամանակ առ ժամանակ Պատվիրատուն կարող է կամ կարող է պահանջել Խորհրդատուից պատրաստել և ներկայացնել այլ լրացուցիչ փաստաթղթեր և կատարել այնպիսի աշխատանքներ և գործողություններ, որոնք Բանկը կարող է պահանջել՝ սույն Համաձայնագրի ժամկետները, պայմանները, բովանդակությունը և իմաստը հաստատելու, իրականացնելու և լիարժեք իրավական ուժ ապահովելու նպատակով:

#### **6.16 Ժամանակի էական դերը**

Սույն Համաձայնագրի ներքո ժամանակը էական դեր է խաղում:

#### **6.17 Համաձայնագրի լրացումները**

Սույն Համաձայնագիրը կարող է իրականացվել մի քանի լրացումներով, որոնցից յուրաքանչյուրը պետք է լինի բնօրինակ, իսկ բոլորը միասին պետք է կազմեն մեկ և միևնույն Համաձայնագիրը:

**6.18 ՎՁԵԲ-ի լոգոն**

Պատվիրատուն տեղեկացված է, որ Բանկի լոգոն՝ գրանցված ծառայությունների նշանն է, և առանց Բանկի գրավոր թույլտվությունը ունենալու Պատվիրատուն չպետք է կրկնի այդ լոգոն:

**Ի ՀԱՍՏԱՏՈՒՄՆ ՎԵՐՈՂԻՇՅԱԼԻ՝** կողմերը, որոնք ներկայանում են իրենց լիազորված ներկայացուցիչների միջոցով, ստորագրել են սույն Պայմանագիրը անգլերեն լեզվով, վերը նշված ամսաթվով:

**Պատվիրատուի կողմից և անունից**

.....  
**Ավագ Հակոբյան**  
**ՀՀ քաղաքաշինության նախարարի տեղակալ**  
**Ամսաթիվը. 02 փետրվարի 2011թ. (ստորագրվել է)**

**Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի կողմից և անունից**

.....  
**Ջոան Բեռք**  
**Խորհրդատվական ծառայությունների բաժնի պետ**  
**Ամսաթիվը. 26 հունվարի 2011 թվական (ստորագրվել է)**

ՀԱՎԵԼՎԱԾ Ա. ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ

ՀԱՎԵԼՎԱԾ Բ. ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Վերապահում. սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրումից հետո Պատվիրատուի պետության ազգային օրենսդրությամբ նախատեսված ներպետական ընթացակարգերն անցնելու մասին ծանուցումը Բանկի կողմից ստանալու օրվանից:

**ԼՐԱՄՇԱԿՎԱԾ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՀԱՎԵԼՎԱԾ Ա**

**ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ**

*Պետք է ստորագրվի Պատվիրատուի կողմից և Ծառայությունների տրամադրման հաշիվ-ապրանքագրերի հետ միասին ուղարկվի Խորհրդատուի կողմից*

Հաշիվ-ապրանքագրի No: Հաշիվ-ապրանքագրի ամսաթիվը. Հաշիվ-ապրանքագրի գումարը.  
Դրամաշնորհի Համաձայնագիր No C20636/EBSF-2010-09-140rev  
ԱՂ՝ **Լեվան Շարվաղզե**

1. Համաձայն «Կոտայքի կոշտ թափոնների կառավարում. շրջակա միջավայրի և սոցիալական հարցերի պատշաճ ուսումնասիրություն» Խորհրդատվական պայմանագրի (այսուհետև՝ «**Ծառայություններ**»)՝ կնքված 2011թ. հունվարի 26-ին ՀՀ քաղաքաշինության նախարարության (այսուհետև՝ «**Պատվիրատու**») և COWI A/S միջև (այսուհետև՝ «**Խորհրդատու**»), և համաձայն Ծառայությունների տրամադրման Դրամաշնորհային Համաձայնագրի 2.02 դրույթի (գ) ենթակետի՝ կնքված 2011թ. հունվարի 26-ին **Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի** (այսուհետև՝ «**Բանկ**») և Պատվիրատուի միջև՝ Պատվիրատուն հաստատում է, որ.
  - (1) Պատվիրատուն ստացել է և գոհ է լրանված խորհրդատվական պայմանագրում նշված Խորհրդատուի կողմից տրամադրված ծառայություններից, որոնք փոխհատուցվել են կից ներկայացված հաշիվ-ապրանքագրով (հաշիվ-ապրանքագրերով),
  - (2) Պատվիրատուն ստուգել է, որպեսզի հաշիվ-ապրանքագիրը (հաշիվ-ապրանքագրերը) և Ծառայությունների տրամադրմանն առնչվող բոլոր փաստաթղթերը համապատասխանեն լրանված Խորհրդատվական պայմանագրի Աղյուսակ Բ-ում սահմանված գումարին (գումարներին), և գոհ է մնացել, որ.
    - ա) հաշիվ-ապրանքագիրը (հաշիվ-ապրանքագրերը) Խորհրդատուի կողմից տրամադրված Ծառայությունների իրական ապացույց է (ապացույց են), և
    - բ) հաշիվ-ապրանքագրում (հաշիվ-ապրանքագրերում) նշված գումարը (գումարները) համապատասխանում է (համապատասխանում են) Խորհրդատվական պայմանագրի Աղյուսակ Բ-ում նշված գումարին (գումարներին):
  - (3) հաշիվ-ապրանքագիրը (հաշիվ-ապրանքագրերը) և բոլոր առնչվող փաստաթղթերը սույն Տեղեկանքի հետ միասին փոխանցվել են Բանկի հաշիվ-ապրանքագրերի ստուգման հարցերով զբաղվող բաժնի թիմին՝ վճարումները կատարելու նպատակով:
  - (4) Պատվիրատուն Խորհրդատուին վճարել է նախորդ հաշիվ-ֆակտուրաների հետ կապված բոլոր անուղղակի հարկերը՝ ներառյալ ԱԱՀ, և նախատեսում է վճարել կից ներկայացված հաշիվ-ապրանքագրի (հաշիվ-ապրանքագրերի) հետ կապված անուղղակի հարկերը՝ ներառյալ ԱԱՀ, սույն Հաստատման տեղեկանքի ստորագրման օրվանից հետո 30 օրվա ընթացքում:
2. Պատվիրատուն հաստատում է, որ սույն փաստաթուղթը ստորագրելով, լիազորում է Բանկին Պատվիրատուի անունից Խորհրդատուին վճարել Խորհրդատվական պայմանագրով համաձայնեցված գումարը:

**Ի ՀԱՍՏԱՏՈՒՄՆ ՎԵՐՈՂԻՇԱԼԻ՝** կողմը, ներկայանալով իր լիազորված ներկայացուցչի միջոցով, ստորագրել է սույն Տեղեկանքը ..... /ամսաթիվը/:

**Պատվիրատուի կողմից և անունից**

-----  
**ՀՀ քաղաքաշինության նախարարի տեղակալ**

**ԼՐԱՄՇԱԿՎԱԾ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՀԱՎԵԼՎԱԾ Բ**

**ԼՐԱՄՇԱԿՎԱԾ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**

Պայմանագիր N C20636/EBSF-2010-09-140rev

**ԼՐԱՄՇԱԿՎԱԾ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**

**Հայաստան**

**Հայաստան. Կոտայքի կոշտ թափոնների կառավարում. Շրջակա միջավայրի և սոցիալական ուսումնասիրություն**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ**

**և**

**COWI A/S**

**միջև**

**Հունվարի 26, 2011թ.**

## ԼՐԱՄՇԱԿՎԱԾ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Պայմանագիր No. C20636/EBSF-2010-09-140REV, կնքված 2011թ. հունվարի 26-ին **ՀՀ քաղաքաշինության նախարարության** (այսուհետ՝ «Պատվիրատու») հասցեն՝ ՀՀ, 0010, Երևան Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3, և **COWI A/S -ի** (այսուհետ՝ «Խորհրդատու») հասցեն՝ Փարալելվեյ 2, LYNGBY, DK -2800, Դանիա միջև:

### ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

**ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼՈՎ**, որ Վերակառուցման և զարգացման եվրոպական Բանկը (այսուհետ՝ «Բանկ»), գլխավոր գրասենյակի հասցեն «One Exchange Square» Միացյալ Թագավորություն, Լոնդոն EC2A 2JN միջազգային ֆինանսական հաստատություն է, որը կազմավորվել է Բանկի ստեղծման համաձայնագրի շրջանակներում, ստորագրված՝ 1990թ. մայիսի 29-ին Փարիզում, համաձայնվել են տրամադրել տեխնիկական համագործակցություն Կոտայքի կոշտ թափոնների կառավարման ծրագրի շրջակա միջավայրի և սոցիալական հարցերի պատշաճ ուսումնասիրության համար (այսուհետ՝ ծրագիր):

**ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼՈՎ**, որ Պատվիրատուն խնդրել է Խորհրդատուին տրամադրել ծառայություններ (այսուհետ՝ «ծառայություններ»), որոնք անհրաժեշտ են ծրագրի արդյունավետ նախապատրաստման և/կամ կատարման համար,

**ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼՈՎ**, որ Խորհրդատուն համաձայնվել է տրամադրել ծառայություններ այս պայմանագրով սահմանված ժամկետներում և պայմաններում,

**ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼՈՎ**, որ Պատվիրատուի և Բանկի (այսուհետ՝ «Դրամաշնորհային պայմանագիր») միջև համաձայնագրով կնքված՝ 2011 թվականի հունվարի 26-ին, Բանկը համաձայնել է ստեղծել նվիրատվական նպատակ հետապնդող հիմնադրամներ՝ ՎՋԵԲ-ի Կանադական Տեխնիկական Համագործակցության Հիմնադրամի 2006-2009թթ. ծառայությունների ֆինանսավորման համար, ֆոնդը կկազմի 120,000.00 եվրո, որպես դրամաշնորհ:

**ԵԼՆԵԼՈՎ ՎԵՐՈՇԻՇՅԱԼԻՑ՝** կողմերը սույնով համաձայնության են եկել հետևյալ պայմանների շուրջ.

### ՀՈՐԿԱԾ I

#### 1.01 Սահմանումներ

Այս Պայմանագրում, հետևյալ արտահայտություններն ունեն հետևյալ նշանակությունները.

**ա) Բանկ կամ ՎՋԵԲ՝** նշանակում է Վերակառուցման և զարգացման եվրոպական



Բանկ:

**բ) Բյուջեի բացվածք՝** նշանակում է. (1) Վճարման վրա հիմնված պայմանագրի դեպքում այն գրաֆիկն է, որտեղ նշվում են գումարի չափը, օրապահիկը և ցանկացած փոխհատուցվող ծախսեր, և (2) Միանվագ գումարով վճարման Պայմանագրի դեպքում այն գրաֆիկն է, որտեղ Պայմանագրի առավելագույն արժեքն արտահայտված է ամբողջական վճարումների տեսքով:

**գ) Պատվիրատու՝** այն կողմն է, ում տրամադրվում են Խորհրդատվական Պայմանագրով սահմանված Ծառայությունները:

**դ) Խորհրդատու՝** այն կողմն է, որը մատուցում է Ծառայություններ:

**ե) Առաջադրանքի իրականացման երկիր՝** նշանակում է այն երկիրը, որտեղ տրամադրվելու են ծառայությունները և/կամ Պատվիրատուի երկիրը:

**զ) Դոնոր՝** նշանակում է դրամաշնորհային միջոցներ տրամադրող, ինչպես նշված է Դրամաշնորհային համաձայնագրի ներածության մասում:

**է) Փորձագետներ՝** նշանակում է աղյուսակ Բ-ի ցանկում ընդգրկված անհատներ, ովքեր Ծառայություններ են մատուցում:

**ը) Վճարման վրա հիմնված Պայմանագիր՝** նշանակում է Պայմանագիր, որի ներքո Ծառայությունները տրամադրվում են ֆիքսված գումարով վճարման համար սահմանված ժամկետում:

**թ) Դրամաշնորհ՝** այն միջոցներն են, որոնք տրամադրվում են Դոնորի կողմից Բանկին, որը հանդիսանում է միջոցների ղեկավար՝ Խորհրդատվական Պայմանագրի ֆինանսավորման նպատակների համար:

**ժ) Դրամաշնորհային համաձայնագիր՝** նշանակում է Բանկի և Պատվիրատուի միջև կնքված Համաձայնագիր և բոլոր լրացումները, քանի որ ժամանակ առ ժամանակ կարող են փոփոխվել:

**ի) Միանվագ գումարով վճարման պայմանագիր՝** նշանակում է Պայմանագիր, որի ներքո Ծառայությունները տրամադրվում են համաձայնեցված ամբողջական վճարումներով:

**յ) Պայմանագրի առավելագույն արժեք՝** նշանակում է այն առավելագույն արժեքը, որը պետք է վճարվի Խորհրդատուին այս Պայմանագրի շրջանակներում՝ ներառյալ բոլոր վճարումները, աշխատավարձերը և փոխհատուցման ծախսերը, որոնք նշված են Հավելված 1-ում, բացառությամբ վճարման ենթակա անուղղակի հարկերը (ներառյալ ԱԱՀ), որոնք վերաբերում են այս Պայմանագրին կամ տրամադրած ծառայություններին, որոնք հակառակ դեպքում չեն փոխհատուցվում Խորհրդատուի կողմից:

**խ) Իրականացվող աշխատանքների ղեկավար՝** Բանկի անձնակազմի այն անդամն է, որը Բանկի կողմից պատասխանատու է Խորհրդատվական Պայմանագրի իրականացման մոնիտորինգի համար:

**ծ) Ծառայություններ՝** այն Ծառայություններն են, որոնք պետք է կատարի Խորհրդատուն, ինչպես սահմանված է այս Պայմանագրում:

**կ) Տեխնիկական առաջադրանք՝** Ծառայությունների տրամադրման պահանջներն ու նպատակներն են՝ սահմանելով Խորհրդատուի կողմից կիրառվելիք համապատասխան մեթոդները և ռեսուրսները և/կամ ձեռք բերվելիք արդյունքները, ինչպես սահմանված է աղյուսակ Ա-ում:

### **1.02 Մեկնաբանություն**

(ա) Սույն Պայմանագրում վերնագրերը միայն հարմարավետության համար են և չպետք է ազդեն դրա մեկնաբանության վրա:

(բ) Սույն Պայմանագրում օրենքին հղում կատարելը նշանակում է համապատասխանել այդ օրենքին և նորմերին, իսկ այդ օրենքները կարող են ժամանակ առ ժամանակ լրացվել կամ փոփոխվել և ուժի մեջ մտնել, ինչպես նաև ցանկացած օրենքին կամ նորմերին, որը կարող է լրացնել կամ փոխարինել այդ օրենքը կամ նորմերը:

(գ) Սույն Պայմանագրում տղամարդ նշանակում է նաև կին, եզակին նշանակում է նաև հոգնակի, ինչպես նաև այդ ամենը հակառակ իմաստներով, անձանց հղում կատարելը նշանակում է նաև իրավական կարգավիճակ ունեցող կամ չունեցող մարմիններ և ընկերակցություններ: Անձին հղում կատարելը ներառում է նաև այդ անձի կողմից նշանակված փոխարինող անձը և իրավահաջորդը:

### **1.03 Ծառայությունները**

Խորհրդատուն այս Պայմանագրի ներքո պետք է մատուցի Ծառայություններ, Տեխնիկական առաջադրանքին համապատասխան, որը նշված է աղյուսակ Ա-ում:

### **1.04 Ծառայությունների մատուցման մեկնարկը**

Խորհրդատուն կսկսի Ծառայությունները ոչ ուշ քան այն ամսաթիվը և միջոցառումները, որոնք նշված են Հավելված 1-ում:

### 2.01 Փորձագետ(ներ)

(ա) Ծառայությունները պետք է մատուցվեն Փորձագետների կողմից Պայմանագրով պահանջված համապատասխան ժամկետներում, աղյուսակ Բ-ին համապատասխան: Խորհրդատուն և Պատվիրատուն պետք է համաձայնության գան նախատեսված ժամկետների աննշան կարգավորումների շուրջ, երաշխավորելով ծառայությունների որակյալ մատուցումը, այն պայմանով, որ պայմանագրով նախատեսված նման կարգավորումները վճարումների պատճառ չեն հանդիսանա, գերազանցելով պայմանագրի առավելագույն գումարը:

(բ) Խորհրդատուն կարող է Փորձագետին տրամադրել հանգստյան օրեր և հիվանդության արձակուրդ համապատասխան իր սովորական գործունեությանը, որը մատուցել են ծառայությունները Հավելված 1-ով և Աղյուսակ Ա-ով սահմանված ժամանակահատվածում: Եթե հանգստյան օրերը և հիվանդության արձակուրդը Պայմանագրի ծրագրի խափանման պատճառով է, Պատվիրատուն կարող է պահանջել հանգստյան օր չորս (4) շաբաթվա չափով ամբողջ տարվա ընթացքում:

(գ) Բացառությամբ այն դեպքերի, երբ առկա է Պատվիրատուի համաձայնությունը որևէ գումարներ չեն գանձվի փորձագետից այն պայմանով, որ, եթե որևէ պատճառով, որը դուրս է Խորհրդատուի հսկողությունից, անհրաժեշտ է դառնում փոխարինել Փորձագետներից որևէ մեկին, ապա Խորհրդատուն անմիջապես ձեռնամուխ է լինում փոխարինելու՝ համարժեք կամ ավելի լավ որակավորում ունեցող մասնագետով, Աղյուսակ Բ-ում նշված նույն վարձատրությամբ: Այս դեպքում անհրաժեշտ կլինի Պատվիրատուի նախնական գրավոր համաձայնագիրը:

(դ) Այն դեպքում, երբ Պատվիրատուն գտնում է, որ Փորձագետներից որևէ մեկը համապատասխան որակավորում չունի իրեն հանձնարարված պարտականությունները կատարելու համար, ապա Պատվիրատուն կարող է անմիջապես Խորհրդատուից պահանջել փոխարինել փորձագետին Պատվիրատուի համար ընդունելի որակավորում և փորձ ունեցող մասնագետով:

(ե) 2.01 (գ) կամ (դ) կետերի համաձայն փորձագետների փոխարինումից առաջացած ծախսերը կհոգա Խորհրդատուն: Բացառությամբ այն դեպքերի, երբ առկա է Պատվիրատուի համաձայնությունը՝ Խորհրդատուն կհոգա բոլոր լրացուցիչ ճամփորդական և փոխարինման հետևանքով առաջացած այլ չնախատեսված ծախսերը, իսկ փոխարինված անձին վճարվելիք վարձատրությունը չի գերազանցի փոխարինված անձին վճարման ենթակա վարձատրությունը:

### 2.02 Ծրագրի ղեկավար

Պատվիրատուն պետք է երաշխավորի, որ առաջադրանքի իրականացման երկրում մատուցվող Ծառայությունների ամբողջ ընթացքում, Պատվիրատուի համար ընդունելի ծրագրի ղեկավարը պետք է պատասխանատվություն կրի նման գործառույթների համար (այսուհետ՝ «Ծրագրի ղեկավար»): Ծրագրի ղեկավարը պատասխանատու կլինի Խորհրդատուի գլխավոր գրասենյակի և Պատվիրատուի միջև կապի համար: Ծրագրի

ղեկավարը պատասխանատու է Ծառայությունների մատուցման մասին ընթացիկ Հաշվետվություններ ներկայացնելու համար, համապատասխան ժամկետներում և Պատվիրատուի կողմից պահանջ ներկայացնելու դեպքում:

### ՀՈԴՎԱԾ III

#### Խորհրդատուին վճարվող գումարներ

##### 3.01 Պայմանագրի առավելագույն արժեքը

(ա) Սույն պայմանագրով սահմանված վճարները չպետք է գերազանցեն «Պայմանագրի առավելագույն արժեքի» ընդհանուր գումարը:

(բ) Պայմանագրի առավելագույն արժեքը չի ներառում անուղղակի հարկերը (ներառյալ ԱԱՀ) մատուցվող ծառայությունների դիմաց, եթե ենթակա են գանձման այս Ծառայությունների կամ այս Պայմանագրի դիմաց:

(գ) Սույն Ծառայությունների կամ Պայմանագրի դիմաց գանձվող ցանկացած անուղղակի հարկ պետք է վճարվի Պատվիրատուի կողմից Խորհրդատուի համար: Այս ենթակետի դրույթը կիրառելի չէ Խորհրդատուի որևէ ենթակապալառուի համար:

(դ) Դրամաշնորհի ոչ մի տարր չպետք է օգտագործվի վերոնշյալ (գ) ենթակետում հիշատակված որևէ անուղղակի հարկի ֆինանսավորման համար:

##### 3.02 Վճարման տարադրամը

Բացառությամբ այն դեպքերի, երբ առկա է Պատվիրատուի և Խորհրդատուի միջև համաձայնությունը, այս Պայմանագրի ներքո առաջացած ցանկացած վճարներ կկատարվեն Հավելված 1-ում սահմանված տարադրամով:

##### 3.03 Խորհրդատուի վճարները

(ա) Պատվիրատուն պետք է վճարի կամ պատճառ հանդիսանա համապատասխան պատշաճ մատուցված Ծառայությունների դիմաց Խորհրդատուին վճարումներ կատարելու համար, Պայմանագրի առավելագույն արժեքի չափով, ինչպես նաև վճարման ենթակա ցանկացած անուղղակի հարկեր (ներառյալ ԱԱՀ), այս Պայմանագրում նշված պայմաններով:

(բ) Այն դեպքերում, երբ վճարներն արտահայտված են օրավարձով, ծառայությունների մատուցման համար ծախսված ժամանակը պետք է որոշվի ծառայությունների մատուցման համար փորձագետի կողմից փաստացի ծախսված աշխատանքային օրերի հիման վրա, ներառյալ ուղևորության համար ծախսված ժամանակը: Բացառությամբ այն դեպքերի, երբ առկա է Պատվիրատուի և Խորհրդատուի միջև համաձայնությունը կատարված աշխատանքների համար Խորհրդատուին վճարումներ չեն կատարվի, բացառությամբ Հավելված 1-ում նշված աշխատանքներում ընդգրկված լինելու ժամանակահատվածի: Ամսեկան կտրվածքով վճարման ենթակա

գումարների հաշվարկը պետք է կատարվի օրացույցային ամսվա առավելագույնը 22 աշխատանքային օր հաշվարկով:

**(գ)** Այն դեպքերում, երբ վճարներն արտահայտված են օրավարձով և եթե այլ բան նախատեսված չէ Աղյուսակ Բ-ով, ապա վճարը պետք է ներառի Խորհրդատուի և/կամ Փորձագետի.

(1) վերադիր ծախսերը,

(2) լրացուցիչ ծառայությունները, ինչպիսիք են քարտուղարի և հետազոտական ծառայությունները,

(3) վարչական ծախսերը, ինչպիսիք են էլեկտրոնային փոստի, հեռախոսի և փաստաթղթային ծախսերը,

(4) սարքավորումների և գրասենյակային ծառայությունների և

(5) այլ զանազան ծախսերը, որոնք կարող են առաջանալ ծառայությունների մատուցման նպատակով, եթե այլ բան նախատեսված չէ Աղյուսակ Բ-ով:

Օրապահիկը և աշխատավարձը, պետք է վճարվեն առանձին, համաձայն Աղյուսակ Բ-ի:

**(դ)** Այն դեպքերում, երբ վճարներն արտահայտված են ծառայությունների մատուցման դիմաց միանվագ գումարով, ապա այդ վճարները կընդգրկեն Խորհրդատուի և/կամ Փորձագետների.

(1) վերադիր ծախսերը,

(2) լրացուցիչ ծառայությունները, ինչպիսիք են քարտուղարի և հետազոտական ծառայությունները,

(3) վարչական ծախսերը, ինչպիսիք են էլեկտրոնային փոստի, հեռախոսի և փաստաթղթային ծախսերը,

(4) սարքավորումների և գրասենյակային ծառայությունների և

(5) այլ զանազան ծախսերը, ներառյալ ցանկացած օրապահիկ կամ նպաստներ, որոնք կարող են առաջանալ ծառայությունների մատուցման նպատակով, եթե այլ բան նախատեսված չէ Աղյուսակ Բ-ով:

**(ե)** Աղյուսակ Բ-ում սահմանված վերադիր ծախսը, լինի դա օրավարձ թե միանվագ գումար կհամարվի, որ ներառում է բոլոր արձակման թերթիկների, ապահովագրության, սոցիալական ապահովության կամ թոշակի վճարների կամ նվիրատվության դրույթները, որոնք Խորհրդատուն և/կամ Փորձագետը կարող է կամ կարող է պարտավորվել վճարել (օրենքով կամ համաձայնագրով) աշխատանքներում ընդգրկված լինելու ընթացքում: Այս կապակցությամբ Խորհրդատուն ամբողջովին և միակ պատասխանատուն է համապատասխան կիրառելի օրենքներին, կանոնակարգերին, վարչական կանոններին և ուղեցույցներին հետևելու համար, և պետք է ապահովագրի չհամապատասխանելու պատճառով Պատվիրատուի դեմ ներկայացված ցանկացած հայցերից/բողոքներից, որոնք կարող են ներկայացվել Պայմանագրի ժամկետը լրանալուց կամ Պայմանագիրը դադարեցնելուց առաջ կամ հետո:

### **3.04 Խորհրդատուի կողմից կատարվող ծախսեր և փոխհատուցումներ**

Երբ պայմանագիրը որոշակի վճարի վրա հիմնված պայմանագիր է, Խորհրդատուին կարող է վճարվել պայմանագրի դրույթներին ենթակա Հավելված Բ-ում նշված տոկոսադրույքներով գումարներն ու ծախսերը.

(ա) Փորձագետին յուրաքանչյուր օրվա համար կվճարվի օրապահիկ, երբ համաձայն պայմանագրի նա կաշխատի հեռու իր հիմնական կացության վայրից: Օրապահիկի գումարը պետք է նախատեսված լինի հյուրանոցի, սնվելու և չնախատեսված ծախսերի համար, բայց ոչ երկրի ներսում ուղևորության համար: Եթե այլ փոխարժեքներ նշված չեն լինի Աղյուսակ Բ-ում՝ օրապահիկը կվճարվի հանձնարարականի իրականացման երկրում ՄԱԿ-ի սահմանած փոխարժեքի համաձայն, ինչպես տպագրված է Քաղաքացիական ծառայության միջազգային հանձնաժողովի կողմից «Օրապահիկի փոխարժեքի աղյուսակ» վերնագրի ներքո: Օրապահիկ չի վճարվի անաշխատունակության օրերի կամ իրենց երկիր վերադարձի օրվա համար:

(բ) Կացության ծախսերը հարկավոր են, երբ Պայմանագրով մասնագետը պետք է աշխատի իր հիմնական կացության վայրից հեռու և ապրի երեք և ավելի ամիս հանձնարարականի իրականացման երկրում: Այս ժամանակահատվածը հստակ որոշելու, ինչպես նաև փոխհատուցում ստանալու դեպքում հանձնարարականի իրականացման երկրից կարճաժամկետ բացակայությունները չեն հաշվարկվի:

(գ) Փորձագետների տրանսպորտային ծախսերը, որոնք փաստացի կամ պատշաճ կարգով ծագել են ծառայությունները մատուցելու արդյունքում: Բոլոր ուղևորությունները պետք է իրականացվեն ծախսերի առումով ամենաարդյունավետ եղանակով. օդանավով ճամփորդելը թույլատրվում է միայն էկոնոմ կարգի արժեքով: Տոմսերի բնօրինակը և հաշիվ-ապրանքագրերը պետք է համարվեն որպես վճարման ապացույց՝ նստեցման թերթիկի և տուրիստական գործակալության կողմից տրամադրված ստացականի հետ միասին: Գնացքով ճամփորդելիս կարելի է ճամփորդել նաև առաջին կարգով, բացի EUROSTAR-ից, որի դեպում պետք է օգտվել երկրորդ կարգից: Անձնական ավտոմեքենայով կարելի է ճանապարհորդել, եթե դրա վերաբերյալ պարզորոշ նշված է պայմանագրում: Անձնական ավտոմեքենայի ծախսերը կփոխհատուցվեն համաձայն վարած մղոնների, ինչը նշված է Աղյուսակ Բ-ում:

(դ) Խորհրդատուի կամ փորձագետ(ներ)ի կողմից այլ տարաբնույթ ծախսերը, որոնք կբխեն մատուցվող ծառայություններից, այն չափով, որքան որ նշված են Աղյուսակ Բ-ում:

Բոլոր փոխհատուցվող գումարները պետք է փոխհատուցվեն իրենց իրական արժեքին համարժեք, եթե այլ բան պարզորոշ նշված չէ Աղյուսակ Բ-ում, և ոչ մի դեպքում չպետք է փոխհատուցումը կատարվի, եթե այն գերակշռում է Պայմանագրի առավելագույն գումարը:

### **3.05 Տարադրամի փոխարժեքը**

Որևէ արժույթով գումարի համարժեք լինելը այլ արժույթի հետ որոշելու հարցն անհրաժեշտ է հաշվել այն նպատակների համար, երբ.

(ա) հաշվարկում ենք Պայմանագրի առավելագույն գումարը,

(բ) վճարվում են փոխհատուցվող ծախսերը:

Տարադրամի փոխանակումը պետք է տեղի ունենա հետևյալ հիմքերի վրա.

Տարադրամի փոխանակումը այլ արժույթներից Եվրոյի պետք է իրականացվի հիմք ընդունելով Եվրամիության պաշտոնական Ամսագրի մեջ տեղակայված ամսական տարադրամի փոխարժեքները՝ ամեն ամսվա 10-րդ օրվանից հետո: Երբ պայմանագրային փոխարժեքը Եվրոն չէ, ապա փոխհատուցվող ծախսերի վերաբերյալ պետք է կազմվի հաշիվ-ապրանքագիր և այդ գումարը պետք է վճարվի Պայմանագրի մեջ նշված տարադրամով, այդ իսկ հաշիվ-ապրանքագրի ամսվա առաջին երկուշաբթի օրվա <<Ֆինանսական ժամանակներ>> ամսագրի տարադրամի փոխարժեքին համաձայն, եթե այն փոխանակելի է, կամ ներկայացնի տարադրամի փոխարժեքի ապացույց, որը կիրառվել է վճարման պահին:

### **3.06 Ծախսերի և գումարների վճարում**

Ծառայության մատուցման հետ կապված հաշիվների ներկայացումը և վճարումները պետք է իրականացվեն հետևյալ կերպ.

(ա) երբ աշխատանքներում ընդգրկված լինելու ժամկետը չի գերազանցում երկու ամիսը, ապա Խորհրդատուին ենթակա վճարները, օրապահիկը, և փոխհատուցվող ծախսերը պետք է վճարվեն աշխատանքները բավարար կերպով ավարտելու կամ Պայմանագրի ավարտից հետո, կախված նրանից, թե նշվածներից որն է առաջինը, Խորհրդատուին կատարված ավելի վաղ վճարումներից պահումներ կատարելուց հետո:

(բ) Երբ աշխատանքներում ընդգրկված լինելու ժամկետն երկու ամիս կամ ավել է, ապա Խորհրդատուին պետք է վճարեն այնպիսի ժամանակահատվածներով, ինչպիսիք նշված են պայմանագրում:

(գ) Նախնական վճարման համար (եթե այդպիսի վճարումը պետք է կատարվի) Խորհրդատուի կողմից պատշաճ կերպով ներկայացված հաշիվ-ապրանքագրի համաձայն Բանկը Պատվիրատուի անունից երեսուն օրվա ընթացում պետք է վճարի համապատասխան նախնական գումարը Խորհրդատուին՝ համաձայն Հավելված 1-ի:

(դ) Խորհրդատուն Պատվիրատուին պետք է ներկայացնի ընդհանուր հաշիվ-ապրանքագիր աշխատանքներում ընդգրկված լինելու համապատասխան ժամանակահատվածի շրջանակներում, որտեղ պետք է երևա Պայմանագրի ներքո վճարվելիք գումարները՝ համապատասխան ստացականներով, դրամարկղային կտրոններով, հաշիվ-ապրանքագրերով, ժամանակացույցով (աշխատողի կողմից

կատարված աշխատանքի ժամաքանակի գրանցում), և այլ ապացույցներով, որոնք խելամտորեն կպահանջվեն Պատվիրատուի կամ Բանկի կողմից: Հավելված 1-ի համաձայն Բանկային հաշվի տվյալները, որի հաշվին պետք է վճարումներ կատարվեն, պետք է նշված լինեն յուրաքանչյուր հաշիվ-ապրանքագրի վրա: Հաշիվ-ապրանքագրերը պետք է ներկայացվեն և վճարումները պետք է կատարվեն Հավելված 1-ի և Աղյուսակ Բ-ում սահմանված վճարումների մասին դրույթների համաձայն: Խորհրդատուն պետք է այս կետում հղում կատարված համապատասխան ընդհանուր հաշիվ-ապրանքագրերի պատճենները ներկայացնի Բանկին զուտ որպես տեղեկատվություն, հասկանալով, որ Բանկը իրավաու չի լինելու վճարումը կատարել, մինչև որ հաշիվ-ապրանքագրի բնօրինակը Պատվիրատուի կողմից կնքված վիճակում չներկայացվի Բանկին:

Հաշիվ-ապրանքագիրը ստանալուց հետո երեսուն օրվա ընթացում, չի վերաբերվում 3.06 (գ) կետում հղում կատարված կետին, Պատվիրատուն պետք է հաստատի Բանկին, որ հաշիվ-ապրանքագրում նշված գումարները ճիշտ են և ենթակա են վճարման Խորհրդատուին՝ Բանկ ուղարկելով իր հաստատումը և լիազորելով հաշիվ-ապրանքագրում նշված գումարի փոխանցումը:

(ե) Եթե վճարման ժամանակացույցով նախատեսվում է, որ վճարումները կկատարվեն իրականացված աշխատանքների դիմաց, անմիջապես դրա հնարավորության և Պատվիրատուի կողմից պատշաճ կերպով հաստատված մատուցած ծառայությունից ոչ ուշ քան 15-րդ օրը Խորհրդատուն կներկայացնի Պատվիրատուին և Բանկին հաշիվ-ապրանքագիրը, կետ առ կետ նշված, Աղյուսակ Բ-ի համաձայն՝ արտահայտված Պայմանագրի 3.02 կետում նշված տարադրամով, որին կցված կլինի համապատասխան ապացույց մատուցված ծառայությունների մատուցման և դրանց հաստատման մասին, ինչպես նաև ստացական տրված հաշիվ-ապրանքագրերը, երաշխավորագրերը/դրամարկղային կտրոնները (վաուչերները), տոմսերը և այլ համապատասխան, լրացուցիչ նյութերը՝ վճարմանը ենթակա անհրաժեշտ գումարներով:

(գ) Պատվիրատուն կարող է պահել կամ հաշիվ-ապրանքագրում նշված գումարը ամբողջությամբ կամ դրա մի մասը չվճարելու պատճառ հանդիսանալ, քանի դեռ այն բավարար կերպով հիմնավորված չէ փաստաթղթերով, որոնք պատշաճ կերպով պահանջվել և ներկայացվել են, սակայն, եթե ցանկացած ժամանակ որևէ անհամապատասխանության առակայություն կա Խորհրդատուին փաստացի կատարված վճարումների և այն ծախսերի միջև, որոնք հաստատված էին, որ կարող են առաջանալ Խորհրդատուի կողմից, ապա Պատվիրատուն կարող է ավելացնել կամ հանել տարբերությունը հետագա վճարման (վճարումների) կատարման ժամանակ:

(ե) Յուրաքանչյուր ծախսի դիմաց կատարված վճարումները, որոնք կգերազանցեն Աղյուսակ Բ-ում նշված գնահատումները, կարող են գանձվել չնախատեսված ծախսերից՝ այդ գնահատումներում հաշվի առնելով միայն այն, որ այսպիսի ծախսերը, նախքան դրանց առաջանալը, հաստատվել են Պատվիրատուի կողմից գրավոր ձևով և ընդգրկված են Պայմանագրի Առավելագույն Գումարի մեջ և չեն գերազանցում այդ գումարը:



(ը) 3.06 կետի ներքո կատարվելիք վերջնական վճարումը պետք է կատարվի միայն վերջնական հաշվետվությունից և վերջնական հաշիվ-ապրանքագիրը Խորհրդատուի կողմից ներկայացվելուց հետո և, բավարար լինելու դեպքում, հաստատված կլինի Պատվիրատուի կողմից:

(թ) Պատվիրատուի կողմից կատարված յուրաքանչյուր վճարում (i) գումարներ, որոնք ներառված չեն Պայմանագրի մեջ կամ (ii) փաստացի առաջացած ծախսերը և վճարները գերազանցող որևէ գումար (բացառությամբ, եթե կիրառելի է, երբ համաձայնվել են, որ վճարումները կկատարվեն որպես ֆիքսված վճար կամ միանվագ գումար մատուցված ծառայությունների դիմաց) Խորհրդատուի կողմից կհատուցվեն Պատվիրատուին 30 օրվա ընթացքում՝ Խորհրդատուի կողմից համապատասխան ծանուցում ստանալուց հետո:

(ժ) Հավելված 1-ի համաձայն սույն Պայմանագրի ներքո Խորհրդատուին կատարվելիք բոլոր վճարումները պետք է փոխանցվեն միայն Խորհրդատուի բանկային հաշվին:

## **Հոդված 4**

### **Պատվիրատուի պարտավորությունները**

#### **4.01 Հաստատում**

Պատվիրատուն հաստատում է, որ իրավասություն ունի պայմանագիր կնքել և իրականացնել սույն Պայմանագիրը և, որ Պայմանագիրը Պատվիրատուի համար օրինական, վավեր և պարտավորեցնող փաստաթուղթ է և այն պարտադիր է Պայմանագրի պայմանների համաձայն:

#### **4.02 Հարկեր և տուրքեր**

(ա) 5.03 դրույթի համաձայն՝ Պատվիրատուն կգործադրի իր բոլոր ջանքերը ապահովելու համար, որ հանձնարարականի իրականացման երկրի Կառավարությունը կազատի Խորհրդատուին երկրում գործող օրենքների և կանոնակարգումների ներքո առկա ցանկացած հարկերից, տուրքերից, վճարներից, գանձումներից և այլ հարկադրումներից, պայմանով, որ եթե Պատվիրատուն չի կարող ձեռք բերել նման հարկազատում, ապա ցանկացած այդպիսի հարկ կվճարվի Պատվիրատուի կողմից: Ցանկացած այդպիսի հարկ չի հաշվարկվի կամ ընդգրկվի որպես պայմանագրի առավելագույն գումարի մաս:

(բ) Պատվիրատուի պարտավորությունն է ազատել հարկերից, տուրքերից, վճարներից, գանձումներից և այլ հարկադրումներից հետևյալ դեպքերում.

(i) Խորհրդատուին վճարված ցանկացած գումար, բացառությամբ ծառայությունների իրականացման հետ կապված հանձնարարականի իրականացման երկրի քաղաքացիներին վճարված գումարներից, և

(ii) ծառայությունների մատուցման նպատակով հանձնարարականի իրականացման երկիր ներմուծված սարքավորումներ, նյութեր և մատակարարումներ, որոնք այդպիսի տարածքներ մուտքագրելուց հետո համապատասխանաբար դուրս կբերվեն այնտեղից, և

(iii) Խորհրդատուի, փորձագետի(ների) կամ փորձագետների խնամքի տակ գտնվողների կողմից հանձնարարականի իրականացման երկիր ներմուծված ցանկացած գույք, իրենց անձնական օգտագործման կամ սպառման համար ապրանքներ, որոնք կսպառվեն հանձնարարականի իրականացման երկրում կամ համապատասխանաբար դուրս կբերվեն երկրից Խորհրդատուի կամ փորձագետի(ների) մեկնելու ժամանակ:

(գ) Ծառայությունների մատուցման նպատակով ներմուծված ցանկացած սարքավորում, որոնց համար սույն պայմանագրի ներքո տրամադրված գումարներից կատարվել են վճարումներ՝ կհանդիսանա Պատվիրատուի սեփականություն:

(դ) Խորհրդատուն և փորձագետ(ներ)ը ապրանքների ներմուծման հետ կապված հետևում են հանձնարարականի իրականացման երկրի մաքսային գործընթացներին:

(ե) Եթե Խորհրդատուն և փորձագետ(ներ)ը դուրս չեն բերում իրենց ապրանքները, այլ թողնում են հանձնարարականի իրականացման երկրում, ապա ցանկացած գույք, որոնք ազատվել են մաքսատուրք և հարկ վճարելուց, Խորհրդատուն պարտավորվում է վճարել այդ մաքսատուրքը և հարկերը համաձայն գործող օրենսդրության:

#### **4.03 Աջակցություն տեղական պահանջների հետ կապված**

Հնարավորության սահմաններում Պատվիրատուն իր բոլոր ջանքերը կներդնի, որպեսզի.

(ա) օժանդակի Խորհրդատուին և փորձագետ(ներ)ից յուրաքանչյուրին ձեռք բերել անհրաժեշտ աշխատանքի իրավունք(ներ)ը և նմանատիպ այլ փաստաթղթեր, որոնք անհրաժեշտ կլինեն նրանց մատուցել ծառայությունները,

(բ) եթե հնարավոր է, օժանդակել փորձագետ(ներ)ին և հնարավորություն դեպքում իրենց խնամքի տակ գտնվողներին ձեռք բերել բոլոր անհրաժեշտ մուտքի և ելքի արտոնագրերը, ռեզիդենտի կարգավիճակը, տարադրամի փոխանակման թույլտվությունները և ճամփորդական փաստաթղթերը, որոնք անհրաժեշտ են ծառայությունների իրականացման նպատակով հանձնարարականի իրականացման երկրում մնալու համար:

(գ) Նպաստել ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ ցանկացած գույքի, և փորձագետ(ներ)ի անձնական և իրենց խնամքի տակ գտնվողների իրերի մաքսագերծմանը,

(դ) Ամբողջ այդ տեղեկատվությունը ներկայացնել կառավարության պաշտոնյաներին, գործակալներին և ներկայացուցիչներին, որքանով որ դա անհրաժեշտ

կլինի ծառայությունների ճշգրիտ և արդյունավետ իրականացման համար, և

(ե) Աջակցել Խորհրդատուին, փորձագետ(ներ)ին կամ ծառայությունների մատուցման համար Խորհրդատուի կողմից աշխատանքի ընդունված հաստատված ենթա-կապալառուներին ազատվելու գրանցման պարտականությունից կամ ձեռք բերելու որևէ թույլտվություն իրենց մասնագիտությամբ աշխատելու համար կամ հանձնարարականի իրականացման երկրում գործող օրենքների համաձայն գրանցվել որպես անհատ ձեռներեց կամ իրավաբանական անձ:

#### **4.04 Հողի մատչելիությունը**

Պատվիրատուն երաշխավորում է, որ Խորհրդատուն և փորձագետ(ներ)ն անվճար ազատ մուտք կունենան բոլոր այն հողերը/վայրերը, որոնց մատչելիությունն պարտադիր է ծառայությունների մատուցման համար: Պատվիրատուն պատասխանատու կլինի այդ հողերին կամ սեփականությանը հասցրած ցանկացած վնասի համար, որն առաջացել է այդ հողերը մատչելի դարձնելուց (բացառությամբ Խորհրդատուի կամ փորձագետ(ներ)ի կողմից կանխամտածված սխալ գործողությունների կամ անտարբերության պատճառով հասցած վնասների) և Պատվիրատուն պետք է ազատի Խորհրդատուին և յուրաքանչյուր փորձագետ(ներ)ին ցանկացած այդպիսի վնասի դիմաց պատասխանատվություն կրելուց:

#### **4.05 Ծառայություններ, սարքավորումներ**

Ծառայությունների իրականացման նպատակով ժամկետին և անվճար հիմունքներով Պատվիրատուն Խորհրդատուի և փորձագետ(ներ)ի համար մատչելի կդարձնի Աղյուսակ Ա-ում նկարագրված փաստաթղթերը, ծառայությունները, սարքավորումները և գույքը:

### **Հոդված 5**

#### **Խորհրդատուի պարտավորությունները**

##### **5.01 Խորհրդատուի կողմից աշխատանքների իրականացման ընդհանուր չափանիշները.**

(ա) Խորհրդատուն պատշաճ և արդյունավետ կերպով կիրականացնի ծառայությունները և ծառայությունների իրականացման ընթացքում կգործադրի այնպիսի հմտություններ և խնամք, ինչը համապատասխան կլինի այդ ոլորտում համապատասխան մասնագիտական փորձին:

(բ) Խորհրդատուն բոլոր պարագաներում այնպիսի գործողություններ կձեռնարկի, որոնք ուղղված կլինեն պաշտպանելու Պատվիրատուի շահերը և կգործադրի բոլոր խելամիտ միջոցները բոլոր ծախսերը նվազագույնին հասցնելու համար, որոնք համահունչ կլինեն համապատասխան մասնագիտական փորձին: Խորհրդատուն լիարժեք կհամագործակցի Բանկի հետ և թույլ կտա վերջինիս իրականացնել մոնիտորինգի բոլոր պարտավորությունները և դյուրին կդարձնի Բանկին կամ դոնորին

հաշվետվություն ներկայացնելը այն մասին, թե ինչպես են իրենց միջոցները օգտագործվում Ծառայությունների մատուցման և Ծրագրի համար:

### **5.02 Գրառումներ**

(ա) Խորհրդատուն պետք է պահի ճշգրիտ և պարբերաբար կատարված գրառումներ և հաշիվներ նման տիպի ծառայությունների հետ կապված և մանրամասները, ինչպես ընդունված է այդ բնագավառում, որոնք պետք է բավարար լինեն, որպեսզի հաստատվի, որ Հոդված 3-ում հղում կատարված ծախսերը պատշաճ կերպով են առաջացել:

(բ) Համապատասխան պատշաճ ծանուցմամբ, Խորհրդատուն պետք է թույլատրի Պատվիրատուի և Բանկի համապատասխան լիազորված ներկայացուցչին ժամանակ առ ժամանակ ստուգել և պատճենահանել Ծառայությունների մատուցման հետ կապված գրառումները (արձանագրությունները) և պետք է թույլատրի Պատվիրատուին, Բանկին կամ Պատվիրատուի կամ Բանկի կողմից լիազորված ներկայացուցչին ժամանակ առ ժամանակ աուդիտի ենթարկել նման տիպի գրառումները և հաշիվները ծառայության մատուցման ընթացքում:

### **5.03 Հարկերի կիրառումը**

Խորհրդատուն պետք է որոշի, թե արդյոք որևէ ուղղակի կամ անուղղակի հարկեր, ներառյալ ԱԱՀ-ն, վճարման ենթակա են կամ գանձվում են Խորհրդատուի կողմից համապատասխան ծառայությունների կամ սույն պայմանագրի հետ կապված: Խորհրդատուն պետք է կատարի բոլոր համապատասխան և պատշաճ քայլերը, որպեսզի բացառի կամ նվազագույնի հասցնի ցանկացած այդպիսի հարկ, ներառյալ այս պայմանագրի գրանցումը ցանկացած երկկողմանի համաձայնության համապատասխան, որը վերաբերում է Դոնորի ղեկավարության և հանձնարարականի իրականացման երկրի միջև կամ հանձնարարականի իրականացման երկրի կառավարության և Խորհրդատուի երկրի միջև երկակի հարկազատման պայմանագրին, օգնության նպատակով տրվող միջոցների հարկազատմանը:

### **5.04 Տեղեկատվություն**

Խորհրդատուն պետք է Պատվիրատուին և Բանկին տրամադրի ծառայությունների հետ կապված այնպիսի տեղեկություն, ինչպիսին Պատվիրատուն կամ Բանկը կարող է ժամանակ առ ժամանակ խելամտորեն պահանջել:

### **5.05 Հանձնարարականներ և ենթակապալառուի պայմանագրի կնքում**

(ա) Բացառությամբ Պատվիրատուի նախնական գրավոր հաստատումից, որ Պատվիրատուն կարող է չտալ, ըստ իր հայեցողության, Խորհրդատուն չպետք է հանձնարարի կամ փոխանցի պայմանագիրը կամ դրա մի մասը, ոչ էլ ընդգրկի այլ անկախ Խորհրդատու կամ ենթակապալառու՝ ծառայությունների որևէ մի մասն իրականացնելու համար:

(բ) Երբ Խորհրդատուին թույլատրված է համագործակցել/ընդգրկել անկախ խորհրդատուներ, խորհրդատվական ընկերություններ, գործընկերություններ,

ձեռնարկություններ կամ այլ անձանց՝ կոնսորցիումի կամ ենթակապալառուի կամ գործընկերության/ ասոցիացիայի միջոցով, ինչպես հարկն է, Խորհրդատուն պետք է հավաստի, որ յուրաքանչյուր այսպիսի կոնսորցիումի անդամ, ենթակապալառու և/կամ գործընկեր ամբողջովին կիրագործի Խորհրդատուի պահանջները՝ այս պայմանագրին համապատասխան: Խորհրդատուն պետք է պատասխանատու լինի կոնսորցիումի ցանկացած անդամի, ենթակապալառուների և/կամ գործընկերների գործողությունների կամ բացթողումների համար: Սույն Պայմանագրի ներքո Խորհրդատուն չի ազատվում իր պարտականություններից այդպիսի անկախ խորհրդատուներ, ընկերություններ, գործընկերություններ, ձեռնարկություններ կամ այլ անձանց ընդգրկելով: Նման տիպի թույլատրված անհատ խորհրդատուները, ընկերությունները, գործընկերությունները, ձեռնարկությունները կամ կոնսորցիումի այլ անդամները, գործընկերությունը/ասոցիացիաները կամ ենթակապալառուի հետ կապված համագործակցությունը կարող է միայն փոխվել Պատվիրատուի կամ Բանկի նախնական համաձայնությամբ:

(գ) Երբ Պատվիրատուն գտնում է, որ այդպիսի անկախ խորհրդատուները կամ ենթակապալառուները ունակ չեն կատարելու իրենց պարտականությունները, ապա Պատվիրատուն կարող է պահանջել Խորհրդատուից անմիջապես փոխել խորհրդատուին կամ ենթակապալառուին Պատվիրատուի համար ընդունելի որակավորմամբ, փորձով և վարձատրությամբ կամ ինքնուրույն շարունակել ծառայությունների մատուցումը:

#### 5.06 Գաղտնիություն

Բացառությամբ այն դեպքերի, երբ առկա է Պատվիրատուի նախնական գրավոր համաձայնությանը, Խորհրդատուն չպետք է բացահայտի կամ թույլատրի Խորհրդատուի փորձագետ(ներ)ին, աշխատողներին, գործակալներին և ենթակապալառուներին բացահայտել տեղեկությունը երրորդ անձանց, ոչ էլ Ծառայությունների, Ծրագրի, Պատվիրատուի կամ Բանկի հետ կապված որևէ տեղեկատվություն օգտագործի Խորհրդատուի անձնական նպատակներով, ներառյալ վարձատրության դրույքաչափին և պայմանագրի պայմաններին վերաբերող տեղեկությունը: Խորհրդատուն կարող է տրամադրել նման տիպի տվյալներ և տեղեկություն, եթե դա պահանջվում է կիրառվող օրենքով կամ կարգով, բայց միայն տվյալների և տեղեկատվության այն մասը, որը թույլատրված է համապատասխան օրենքով կամ կանոնակարգով, որն օրենքով պահանջվում է, որ պետք է տրամադրվի: Եթե նման տիպի պահանջ է ներկայացված, Խորհրդատուն պետք է անհապաղ տեղեկացնի Պատվիրատուին և Բանկին: Այս դրույթն ուժի մեջ է մնում և դադարեցվում է պայմանագրի ավարտի հետ մեկտեղ:

#### 5.07 Ծրագրի շրջանակներում հավելյալ աշխատանքների կատարման արգելք

Բացառությամբ այն դեպքերի, երբ առկա է Պատվիրատուի և Բանկի նախնական գրավոր համաձայնությունը՝ Խորհրդատուն համաձայնվում է, որ պայմանագրի ընթացքում և պայմանագրի ավարտին հաջորդող 2 տարիների ընթացքում, Խորհրդատուի և/կամ փորձագետ(ներ)ի մասնակցությունը ծրագրում պետք է սահմանափակվի ծառայությունների մատուցմամբ, սույնով որակագրկելով նրանց և ցանկացած այլ կապալառուի, խորհրդատվական ընկերության, արտադրողի կամ

անհատի, որոնց հետ Խորհրդատուն կապ ունի կամ կապված է նախագծի համար ապրանքների, աշխատանքների, ծառայությունների (որոնք կապված չեն Ծառայությունների մատուցման հետ) մատուցմամբ կամ ծրագրի ցանկացած մասի համար մրցույթի մասնակցությամբ: Այս դրույթի նպատակով «գործընկեր» նշանակում է մեկ ուրիշ անձ, ով ուղղակիորեն կամ անուղղակիորեն մեկ կամ մի քանի միջնորդների միջոցով ղեկավարում է կամ ղեկավարվում է կամ գտնվում է ընդհանուր հսկողության տակ, Խորհրդատուի հետ, ի հսկողություն (ներառյալ վերահսկելով, վերահսկված լինել կամ ընդհանուր հսկողության տակ լինել տերմինները), նշանակում է ուղղակի կամ անուղղակի առաջնորդելու կամ կառավարման, քաղաքականության կամ անհատի գործողությունների վրա ազդելու իշխանություն/լիազորություն, լինի դա արժեթղթերի, պայմանագրի, գործակալության կամ այլ միջոցներով:

#### 5.08 Ծառերի բախում

Խորհրդատուն պետք է ապահովի, որ ոչ մի հանգամանք չի առաջանա աշխատանքների իրականացման ընթացքում, որի շրջանակներում Պայմանագրի ներքո Խորհրդատուի գործողությունները հակասում են կամ կարող են հակասել Խորհրդատուի կամ փորձագետ(ներ)ի անձնական շահերին կամ այլ ծառայություններին, որ Խորհրդատուն կամ փորձագետ(ներ)ը կարող են փոխանցել երրորդ անձի:

#### 5.09 Կոռուպցիա և խարդախություն

Բանկը, առանց Համաձայնագրի պարտավորությունների որևէ խախտում ուղղելու նախապաշարմունքի, կարող է Խորհրդատուին ուղղված գրավոր ծանուցմամբ անմիջապես խզել սույն Համաձայնագիրը, եթե Պատվիրատուի կարծիքով, Խորհրդատուն կամ փորձագետ(ներ)ը պայմանագրի իրականացման կամ աշխատանքներն ավարտին հասցնելու ընթացքում ընդգրկվել են կոռուպցիոն կամ խարդախ գործունեության մեջ: Այս դրույթի նպատակների համար.

«կոռուպցիոն գործունեություն»՝ նշանակում է որևէ արժեք ներկայացնող իրի ուղղակի կամ անուղղակի առաջարկումը, տրամադրումը, ստացումը կամ դրա վերաբերյալ համաձայնության գալը՝ ընտրության գործընթացի կամ Պայմանագրի իրականացման հետ կապված մյուս կողմի գործողությունների վրա ազդեցություն ունենալու նպատակով, բիզնես կամ բիզնեսի հետ կապված, այլ ոչ պատշաճ առավելություն ձեռք բերելու կամ պահելու համար:

«խարդախ գործունեություն»՝ նշանակում է որևէ գործողություն կամ բացթողում, ներառյալ խեղաթյուրում, որը գիտակցաբար կամ չմտածված կերպով փորձում է մոլորության մեջ գցել մի կողմին՝ ֆինանսական կամ այլ շահույթ ստանալու կամ պարտավորությունից խուսափելու նպատակով,

«հարկադրանքի գործունեություն»՝ նշանակում է որևէ կողմին կամ կողմի գույքին ուղղակիորեն կամ անուղղակի վնաս պատճառելը կամ վնաս պատճառելու սպառնալիքների առաջ քաշումը՝ մի կողմի գործողությունների վրա ազդեցություն ունենալու նպատակով՝ ընտրության գործընթացի կամ Պայմանագրի իրականացման հետ կապված մյուս կողմի գործողությունների վրա ազդեցություն ունենալու նպատակով,

բիզնես կամ բիզնեսի հետ կապված, այլ ոչ պատշաճ առավելություն ձեռք բերելու կամ պահելու համար:

«թաքնված պայմանավորվածության գործունեություն»՝ նշանակում է երկու կամ ավելի կողմերի միջև ձեռք բերված համաձայնություն սահմանված նպատակին ոչ պատշաճ կերպով հասնելու և մյուս կողմի գործողությունների վրա ազդեցություն ունենալու նպատակով, ինչպես նաև խորհրդատուների միջև ձեռք բերված ցանկացած համաձայնություն (մինչև առաջարկներ ներկայացնելը կամ դրանից հետո), ըստ որի սահմանվում են մրցութային արժեքները արհեստական, ոչ մրցակցային մակարդակի վրա և զրկում են Պատվիրատուին ազատ և բաց մրցույթի հնարավորությունից:

#### 5.10 Անկախ կապալառու

Սույն պայմանագրում պարունակող ոչինչ չպետք է վերագրվի որպես Պատվիրատուի և Խորհրդատուի կամ Բանկի և Խորհրդատուի միջև տիրոջ և ծառայի, ղեկավարի և գործակալի հարաբերությունների հաստատում կամ ստեղծում, այլ պետք է հասկացվի, որ Խորհրդատուի կամ մեկ այլ ուրիշի կարգավիճակը, որը ծառայություններ է մատուցում, անկախ կապալառուի կարգավիճակ է:

#### 5.11 Փոխհատուցումներ

(ա) Խորհրդատուն պետք է իր սեփական միջոցներով ամբողջովին փոխհատուցի, պահպանի և պաշտպանի Պատվիրատուին, իր գործակալներին և աշխատողներին ցանկացած գործողություններից, հայցապահանջներից, կորուստներից կամ վնասներից, որոնք առաջացել են Խորհրդատուի կամ փորձագետ(ներ)ի (1) համապատասխան օրենքի կամ կարգի կամ (2) երրորդ կողմի մտավոր սեփականության իրավունքի խախտման հետևանքով, ինչպիսիք են հեղինակային իրավունքը, ստեղծագործական/արդյունաբերական ձևավորումը կամ պատենդը՝ ծառայությունների մատուցման ընթացքում:

(բ) Խորհրդատուն պետք է.

(1) իր սեփական միջոցներով ամբողջովին փոխհատուցի, պահպանի և պաշտպանի Պատվիրատուին, նրա գործակալներին և աշխատողներին ցանկացած և բոլոր գործողություններից, հայցապահանջներից, կորուստներից կամ վնասներից, որոնք կարող են առաջանալ Խորհրդատուի ծախսողումից իրականացնելու 5.01 (ա) կետի ներքո պահանջվող հմտությունները և խնամքը, կամ պայմանագրով նախատեսված պարտականություններից որևէ մեկի խախտումից, այնուամենայնիվ, Խորհրդատուի պատասխանատվությունը 5.11 (բ) կետի ներքո կսահմանափակվի այն գործողությունների, հայցապահանջների, կորուստների կամ վնասների նկատմամբ, որոնք ուղղակիորեն առաջացել են նշված հմտությունը, խնամքը չիրականացնելու հետևանքով. և չեն ընդգրկի անուղղակի կամ հետևանքային վնասների դեպքում պատասխանատվության առաջացումը:

(2) Ի հավելումն այն պատասխանատվությունների, որ Խորհրդատուն կարող է ունենալ (1-ին) ենթակետի ներքո իր սեփական ծախսերով և միջոցներով՝ Պատվիրատուի պահանջով պետք է նորից մատուցի համապատասխան ծառայությունները 5,01 (ա)

կետում նշված համապատասխան հմտություն և խնամք իրականացնելու ճախողման դեպքում, կամ դրա խախտման համար, պայմանով, որ Խորհրդատուն պատասխանատվություն չի կրի այն գործողությունների, հայցապահանջների, կորուստների կամ վնասների համար, որոնք առաջացել են. (ա) Պատվիրատուն չեղյալ է չանաչել (համաձայն չէ) Խորհրդատուի որոշումը կամ առաջարկությունը կամ Խորհրդատուից պահանջել է այնպիսի որոշում կամ առաջարկություն իրականացնել, որի հետ Խորհրդատուն համաձայն չէ և այդ անհամաձայնությունը ներկայացվել է Պատվիրատուին գրավոր կերպով կամ (բ) Պատվիրատուի գործակալների, աշխատողների, անկախ կապալառուների կողմից Խորհրդատուի կողմից ներկայացված հրահանգների ոչ պատշաճ իրականացման դեպքում:

Ամեն դեպքում այս 5.11 (բ) կետի ներքո Խորհրդատուի կողմից Պատվիրատուին կատարվելիք փոխհատուցումը չպետք է գերազանցի Հավելված 1-ում նշված գումարը:

### **5.12 Օրենքներ և կարգեր**

Հանձնարարականի իրականացման երկրում և ամենուր Խորհրդատուն պետք է հարգի և հետևի բոլոր համապատասխան օրենքներին և կարգերին և ամեն ջանք պետք է գործադրի, որպեսզի երաշխավորի, որ փորձագետ(ներ)ը և նրանց ստորադասները, որոնք գտնվում են հանձնարարականի իրականացման երկրում, և տեղի աշխատողները, որոնց վարձել է Խորհրդատուն, հարգում և հետևում են հանձնարարականի իրականացման երկրի բոլոր օրենքներն ու կարգերը:

### **5.13 Սարքավորումների նկատմամբ գույքային իրավունքներ**

(ա) Ծառայությունների մատուցման նպատակով Պատվիրատուի կողմից տրամադրված սարքավորումները մշտապես կմնան որպես Պատվիրատուի սեփականություն և պետք է վերադարձվեն Պատվիրատուին՝ Պատվիրատուի կողմից սահմանված համապատասխան գործընթացի համաձայն:

(բ) Ծառայությունների մատուցման նպատակով Խորհրդատուի կողմից տրամադրված սարքավորումներն ու նյութերը կմնան որպես Խորհրդատուի սեփականություն, եթե այլ համաձայնություն չկա:

(գ) Սույն պայմանագրի ներքո Ծառայությունների մատուցման նպատակով Պատվիրատուի կամ Խորհրդատուի կողմից ամբողջովին կամ մասամբ ֆինանսավորված գնված սարքավորումները հանդիսանում են Պատվիրատուի սեփականությունը, եթե Բանկի կողմից այլ համաձայնություն չկա: Բանկը կարող է Պատվիրատուին ուղղորդել, որ առաքի և տնօրինի ցանկացած նման տիպի սարքավորում:

### **5.14 Հաշվետվությունների և արձանագրությունների հետ կապված Պատվիրատուի իրավունքը**

Բոլոր հաշվետվությունները և համապատասխան տվյալներն ու տեղեկատվությունը, ինչպես օրինակ քարտեզները, դիագրամները, ծրագրերը,



վիճակագրական տվյալների բազաները և լրացուցիչ քաղվածքները կամ նյութերը, որոնք իրականացվել կամ նախապատրաստվել են ծառայությունների մատուցման ընթացքում գաղտնի են և հանդիսանում են Պատվիրատուի բացարձակ սեփականությունը: Ծրագիրն ավարտելուն պես Խորհրդատուն համաձայն է ներկայացնել բոլոր այս նյութերը Պատվիրատուին: Խորհրդատուն կարող է պահել այդպիսի տվյալների պատճենը, բայց չի կարող օգտագործել այն այս պայմանագրի հետ առնչություն չունեցող նպատակներով՝ առանց Պատվիրատուի գրավոր համաձայնության:

### **5.15 Ապահովագրություն**

(ա) Խորհրդատուն իր սեփական ծախսերով ձեռք կբերի և կպահի համապատասխան մասնագիտական պատասխանատվության ապահովագրություն, ինչպես նաև համապատասխան ապահովագրություն երրորդ անձի պատասխանատվության դիմաց և ամբողջությամբ կամ մասամբ ձեռք բերված սարքավորումների կորստի կամ վնասի դիմաց՝ Պատվիրատուի կողմից ամբողջությամբ կամ մասամբ տրամադրված միջոցներով: Խորհրդատուն ապահովում է, որ ապահովագրության նվազագույն գումարը Հավելված 1-ում նշված գումարից պակաս չէ: Խորհրդատուն ապահովում է, որ նախքան ծառայությունների մատուցման սկիզբն այդպիսի ապահովագրությունն առկա լինի:

(բ) Պատվիրատուն որևէ պատասխանատվություն չի կրում կյանքի, առողջության, դժբախտ պատահարի, ճամփորդության կամ այլ ապահովագրության համար, որը կարող է անհրաժեշտ կամ ցանկալի լինել Խորհրդատուի, փորձագետ(ներ)ի, ենթակապալառուների կամ մասնագետների համար, որոնք կապված են Խորհրդատուի հետ ծառայությունների իրականացման նպատակով, ոչ էլ որևէ այդ անձանցից որևէ մեկի խնամքի տակ գտնվողի համար:

(գ) Պատվիրատուն իրավունք է վերապահում պահանջել փաստացի բնօրինակ այն մասին, որ Խորհրդատուն ձեռք է բերել անհրաժեշտ ապահովագրությունը:

### **5.16 Հաշվետվությունների լեզուն և համակարգչային ծրագրերի կիրառում**

(ա) Խորհրդատուից Պատվիրատուին ուղղված բոլոր հաշվետվությունները, առաջարկությունները և ընդհանուր նամակագրությունը, ինչպես նաև սույն Պայմանագրի ներքո Խորհրդատուի կողմից նախապատրաստված բոլոր փաստաթղթերը կլինեն Հավելված 1-ում նշված լեզվով:

(բ) Պատվիրատուին ուղղված բոլոր հաշվետվությունները, ուսումնասիրությունները, տեղեկատվությունը, աշխատանքները և փաստաթղթերը կստեղծվեն համակարգչային ձևով, ինչպես որ նշված է Հավելված 1-ում:

### **5.17 Պատվիրատուի ծառայությունները կամ սարքավորումները**

Այն դեպքում, երբ Խորհրդատուն բախվում է անձնակազմի հավաքագրման, սարքավորումների կամ գույքի ձեռք բերման հետ կապված ուշացումների, որոնք 4.05 դրույթի համաձայն պետք է ապահովված լինի Պատվիրատուի կողմից կամ երբ իրենց գործողություններով կամ գործառույթներով չեն ապահովում Աղյուսակ Ա-ում սահմանված

պահանջները, ապա Խորհրդատուն սահմանված կարգով ծանուցում է Պատվիրատուին այդպիսի ուշացումների կամ բարդությունների մասին և կարող է խնդրել/պահանջել ժամկետի համապատասխան երկարաձգում ծառայություններն ավարտին հասցնելու համար կամ ժամանելուն պես, ձեռք բերի պահանջվող ծառայությունները կամ սարքավորումները Պատվիրատուի հաշվին:

### **5.18 Բանկի պատասխանատվությունից զերծ լինելը**

Պատվիրատուն և Խորհրդատուն այսպիսով հաստատում և համաձայնում են, որ Բանկի վերանայման և Խորհրդատուի կողմից Պատվիրատուին մատուցված ծառայությունների համար վճարումը կատարելու դեպքում, Բանկը պատասխանատվություն չի կրում Պատվիրատուին կամ Խորհրդատուին ցանկացած հայցապահանջների, ընթացակարգերի, արժեքների, պատասխանատվության, ծախսերի, կարստի կամ վնասի համար, որոնք առաջանում են կամ կապված են որևէ գործողության կամ բաց թողման հետ (անկախ նրանից, թե դա պայմանագրային անտարբերություն է, անարդարություն կամ նմանատիպ մեկ այլ գործողություն) Խորհրդատուի, վերջինիս աշխատողների, ենթակապալառուների կամ գործակալների պատճառով, ներառյալ Խորհրդատուի կամ փորձագետ(ներ)ի կողմից ծառայությունների մատուցումը, անկախ նրանից այն բավարար է, թե ոչ, կամ Խորհրդատուի, փորձագետ(ներ)ի կամ աշխատողների, ենթակապալառուների կամ գործակալների կողմից օրենքների կամ կանոնակարգումների խախտումը:

## **Հոդված VI**

### **Ընդհանուր դրույթներ**

#### **6.01 Վճարումների կասեցումը**

Եթե հետևյալ դեպքերից որևէ մեկը տեղի է ունենում կամ շարունակվում է, ապա Պատվիրատուն կարող է Խորհրդատուին ուղղված գրավոր ծանուցմամբ ամբողջությամբ կամ մասնակի կասեցնել վճարումների կատարումը, որոնք պայմանագրի ներքո պետք է վճարվեին Խորհրդատուին.

(ա) Բանկը կասեցրել է գումարների տրամադրումը Պատվիրատուին Ծրագրի կամ դրամաշնորհի հետ կապված,

(բ) բացթողումը տեղի է ունեցել Խորհրդատուի կողմից Պայմանագրի իրականացման ընթացքում և եթե ուղղելի է, և Խորհրդատուն այն չի ուղղել 30 օրվա ընթացքում, երբ տեղեկացվել է Պատվիրատուի կողմից դրա մասին, կամ

(գ) ցանկացած առաջացած այլ պայման, որը, Պատվիրատուի հայեցողությամբ, միջամտում է կամ սպառնում է, որ կմիջամտի ծառայությունների հաջող իրականացմանը կամ Պայմանագրի նպատակների իրականացմանը, որի դեպքում 30 օր գրավոր ծանուցումը կտրվի:

### **6.02 Պատվիրատուի կողմից պայմանագրի դադարեցում**

(ա) Եթե հետևյալ միջոցառումներից որևէ մեկը տեղի է ունեցել և շարունակվում է տեղի ունենալ, ապա Պատվիրատուն Խորհրդատուին ուղղված գրավոր ծանուցմամբ դադարեցնում է Պայմանագիրը.

- (i) Պատվիրատուի կողմից Խորհրդատուին հասանելիք վճարներն ամբողջությամբ կամ մասամբ կասեցվելուց հետո 30 օրվա ընթացքում հողված 6.01-ում նշված պայմաններից որևէ մեկը շարունակվում է:
- (ii) Ծրագրի կամ դրամաշնորհային համաձայնագրի ժամկետը սպառվել կամ դադարեցվել է:

(բ) Ցանկացած դեպքում Պատվիրատուն կարող է դադարեցնել Պայմանագիրը ցանկացած ժամանակ Խորհրդատուին ոչ պակաս, քան 30 օր առաջ տեղեկացնելով դրա մասին:

### **6.03 Պայմանագրի դադարեցումը Խորհրդատուի կողմից**

Խորհրդատուն պատշաճ կարգով գրավոր կձանուցի Պատվիրատուին որևէ իրավիճակի կամ որևէ դեպքի մասին, ինչը դուրս է Խորհրդատուի վերահսկողությունից, և ինչն անհնարին է դարձնում Խորհրդատուի համար կատարել իր պարտականությունները: Պատվիրատուի կողմից գրավոր ձևով որևէ նմանատիպ իրավիճակի գոյության կամ դեպքի հաստատման դեպքում կամ Պատվիրատուի կողմից ծանուցումը ստանալուց հետո 30 օրվա ընթացքում ծանուցմանը չարձագանքելու դեպքում՝ Խորհրդատուն ազատվում է ամբողջ պատասխանատվությունից այդ պարտականությունները իրականացնելու անհնարինության մասին ծանուցումը Պատվիրատուի կողմից ստանալու օրվանից և Խորհրդատուն այդպիսով կարող է դադարեցնել Պայմանագիրը դրա մասին ոչ պակաս, քան 30 օր առաջ գրավոր ծանուցում ներկայացնելուց հետո:

### **6.04 Պայմանագրի դադարեցման ընթացակարգը**

(ա) 6.02 կետի ներքո Պայմանագիրը դադարեցնելու դեպքում՝ Խորհրդատուն անհապաղ միջոցներ կձեռնարկի պատշաճ և սահմանված կարգով ծառայությունների մատուցումը դադարեցնելու, կորուստները նվազեցնելու և հետագա ծախսերը նվազագույնին հասցնելու համար:

(բ) Պայմանագիրը դադարեցնելուց հետո (քանի դեռ այդ դադարեցումը տեղի չի ունեցել Խորհրդատուի սխալ գործողությունների պատճառով) Խորհրդատուին ամբողջությամբ կփոխհատուցեն այն ծախսերի համար, որոնք համապատասխանաբար առաջացել են մինչև Պայմանագրի դադարեցման օրը և այն խելամիտ ծախսերի համար, որոնք առաջացել են ծառայությունների մատուցումը պատշաճ կարգով դադարեցնելու համար, փորձագետ(ներ)ի ինքնաթիռի տոմսի, Խորհրդատուի անձնական իրերը և սարքավորումները վերադարձնելու համար, սակայն չի կարող ստանալ Պայմանագրի առավելագույն գումարի շրջանակներում այլ և հետագա վճարներ:

### **6.05 Կիրառվող օրենքը և վեճերի լուծումը**

(ա) Սույն Պայմանագիրը կղեկավարվի և կմեկնաբանվի Հավելված 1-ում սահմանված օրենքի համաձայն:

(բ) Պայմանագրի շրջանակներում առաջացած ցանկացած վեճ, որը չի կարող բարեկամորեն հարթվել կողմերի միջև կներկայացվի լուծման միջազգային արբիտրաժին Հավելված 1-ում սահմանված կարգով: Արդյունքում կայացված որոշումը կլինի վերջնական և պարտադիր կողմերի համար և կփոխարինի բոլոր մնացած միջոցներին:

### **6.06 Ֆորս մաժոր**

(ա) Եթե կողմերից որևէ մեկը ժամանակավոր չի կարող գործել ֆորս մաժորային իրավիճակի կամ հանձնարարականի իրականացման երկրում գործող օրենքների կամ կանոնակարգումների պատճառով, որոնք թույլ չեն տալիս իրականացնել Պայմանագրի ներքո սահմանված պարտականությունները, և եթե այդ կողմը մյուս կողմին դրա մասին այդ իրավիճակից հետո 14 օրվա ընթացքում գրավոր ծանուցում է ներկայացնում, ապա այդ կողմի պարտականությունները, որոնք նա չի կարող իրականացնել այդ իրավիճակի պատճառով կկասեցվեն այնքան ժամանակով, որքանով, որ այն շարունակվում է:

(բ) Կողմերը կձեռնարկեն բոլոր անհրաժեշտ միջոցները նվազեցնելու ֆորս մաժորային իրավիճակի հետևանքները նվազագույնի հասցնելու համար:

(գ) Կողմերից ոչ մեկը պատասխանատու չի լինի մյուս կողմին կորստի կամ վնասի համար, որը մյուս կողմը կրել է, որն առաջացել է 6.06 կետում նշված իրավիճակի պատճառով կամ նմանատիպ իրավիճակի հետևանքով առաջացած ուշացումների պատճառով:

(դ) Ցանկացած ժամանակաընթացքում, երբ կողմերից որևէ մեկը այս Պայմանագրի ներքո ավարտին կհասցնի որևէ գործողություն կամ հանձնարարական, ապա այն կերկարաձգվի այնքան ժամանակով, որքանով այդ կողմը չէր կարող իրականացնել այդ գործողությունը ֆորս մաժորի պատճառով:

(ե) Ֆորս մաժորի պատճառով ծառայությունները մատուցելու անհնարինության ընթացքում Խորհրդատուն կշրունակի սույն Պայմանագրի ներքո վճարները ստանալ, ինչպես նաև փոխհատուցում ստանալ ցանկացած լրացուցիչ ծախսերի համար, որոնք խելամտորեն կամ անհրաժեշտաբար առաջացել են այդ ընթացքում և այդ ընթացքի ավարտից հետո ծառայությունները վերականգնելու համար:

(զ) «Ֆորս մաժոր» տերմինը, ինչպես որ օգտագործվում է այստեղ նշանակում է Աստծո գործողություններ, գործադուլներ կամ այլ արդյունաբերական անհանգստություններ, հանրության թշնամու գործողություններ, պատերազմներ, շրջափակումներ, ապստամբություն, հարձակում, համաճարակ, սողանքներ, երկրաշարժեր, փոթորիկներ, կայծակներ, ջրհեղեղներ, քաղաքացիական անհանգստություններ, պայթյուններ և ցանկացած այլ նմանապիտ դեպքեր, որոնք չեն գտնվում կողմերից որևէ մեկը վերահսկողության ներքո և որոնց պատշաճ կերպով արձագանքելու արդյունքում կողմերից ոչ մեկը չի կարող հաղթահարել:

### **6.07 Պայմանագրի փոփոխությունները**

Պայմանագիրը կարող է փոփոխվել միայն կողմերի միջև գրավոր համաձայնությամբ: Բոլոր այդպիսի փոփոխությունները, ներառյալ գնի արժևորման և 3.01 (բ) կետում նշված գումարի փոփոխությունները կլինեն գրավոր ձևով և կստորագրվեն կողմերի պատշաճ կարգով լիազորված ներկայացուցիչների կողմից:

### **6.08 Կիրառվող լեզուն**

Ցանկացած փաստաթուղթ կամ հաղորդագրություն, որը ներկայացվում է սույն Պայմանագրի ներքո, կլինի Հավելված 1-ում սահմանված լեզվով:

### **6.09 Պայմանագիրն ամբողջությամբ**

Սույն Պայմանագիրը (ներառյալ բոլոր Հավելվածներն ու Աղյուսակները), որը ժամանակ առ ժամանակ, համաձայն վերոնշյալ դրույթների, փոփոխվում են, կազմում են կողմերի միջև ամբողջական փաստաթուղթ և փոխարինում են բոլոր նախկին գրավոր կամ բանավոր, արտահայտված կամ ենթադրյալ պայմանավորվածությունները:

### **6.10 Որոշ դրույթների գործողության պահպանումը**

Հետևյալ կետերը. 3.03 (ե), 5.02, 5.06, 5.10, 5.11, 5.13, 5.14, 5.18 և 6.05 ուժի մեջ կմնան սույն Պայմանագրի վերջնաժամկետը լրանալու կամ դադարեցման դեպքում:

## **Հոդված VII**

### **Ուժի մեջ մտնելը, այլ դրույթներ**

#### **7.01 Ուժի մեջ մտնելը**

Սույն Պայմանագիրն ուժի մեջ կմտնի Պայմանագրում նշված օրը և, քանի դեռ իր պայմանների համաձայն ավելի վաղ չի դադարեցվել, ուժի մեջ կմնա մինչև ծառայությունները և բոլոր վճարումները, որոնք ենթակա են կամ պետք է իրականացվեն կկատարվեն, այդ ժամանակ կողմերը կազատվեն բոլոր պարտականություններից, 6.10 կետի համաձայն:

#### **7.02 Լիազորված ներկայացուցիչ**

Սույն Պայմանագրի ներքո պահանջվող կամ թույլատրելի որևէ գործողություն կարող է իրականացվել և պահանջվող կամ թույլատրելի որևէ փաստաթղթի ընթացք տրվել Խորհրդատուի կողմից կամ նրա անունից կամ Պատվիրատուի անունից Հավելված 1-ում նշված լիազորված անձանց կողմից:

#### **7.03 Ծանուցումներ կամ պահանջներ**

Ցանկացած ծանուցում կամ պահանջ, որոնք պահանջվում կամ թույլատրվում են տրվելու կամ կատարվելու սույն Պայմանագրի ներքո կլինեն 6.08 կետում նշված լեզվով և գրավոր տեսքով: Նման ծանուցումը կամ պահանջը կհամարվի պատշաճ կարգով տրված

կամ կատարված, երբ այն ներկայացվի անձամբ, առաջին կարգի գրանցված փոստով, էլ. փոստով կամ ֆաքսով այն կողմին, որին այն պետք է հանձնվի կամ ուղարկվի այդ կողմի այն հասցեով, որը նշված է Հավելված 1-ում կամ մեկ այլ հասցեով, որը կողմերը կարող են գրավոր նշել, այն պայմանով, որ ստացականը (փոստով), էլ. հասցեով ստանալը (էլ. հասցեով) կամ փոխանցման հաստատումը (ֆաքսով) նշվածներից որևէ մեկով, ստացվի ուղարկողի կողմից:

**Ի ՀԱՍՏԱՏՈՒՄՆ ՎԵՐՈՒՇԻՇՅԱԼԻ** կողմերը, որոնք ներկայանում են իրենց պատշաճ լիազորված ներկայացուցիչների միջոցով, պատճառ են հանդիսացել, որ սույն Պայմանագիրը ստորագրվի անգլերեն լեզվով, յուրաքանչյուր ստորագրված տարբերակը համարվում է բնօրինակ, վերը նշված ամսաթվով:

.....  
**Նախարարի տեղակալ, ՀՀ քաղաքաշինության նախարարություն**

**Ամսաթիվը.** .....

.....  
**COWI A/S**

**Ամսաթիվը.** .....

**Կից փաստաթղթեր.**

- |                   |   |
|-------------------|---|
| <b>Հավելված I</b> | - Խորհրդատվական Պայմանագրի Հատուկ Դրույթներ   |
| <b>Աղյուսակ Ա</b> | - Տեխնիկական առաջադրանք                       |
| <b>Աղյուսակ Բ</b> | - Աշխատակազմի ժամանակացույց և ծախսերի բաշխում |

## Հավելված 1

### 1.04 Ծառայությունների մատուցման մեկնարկը և ավարտը

Բացառությամբ այն դեպքերի, երբ առկա է Պատվիրատուի համաձայնությունը՝ Խորհրդատուն կսկսի ծառայությունների մատուցումը \_\_\_\_\_ օրը (այդ օրը կհամարվի «ծառայությունների մատուցման սկիզբ»): Ծառայությունների մատուցումը կավարտվի ...../կամ մինչև ...../ օրը (այդ օրը կհամարվի «ծառայությունների մատուցման ավարտ»):

### 3.01 բ. Պայմանագրի առավելագույն գումարը

Սույն պայմանագրի ներքո կատարվող վճարումները չեն գերազանցի 120 000.00 Եվրո ընդհանուր գումարը («պայմանագրի առավելագույն գումար»): Այս գումարը չի ներառում որևէ անուղղակի հարկեր, ներառյալ ԱԱՀ, եթե վերջիններս պետք է գանձվեն սույն ծառայությունների մատուցման կամ պայմանագրի շրջանակներում:

### 3.02 Վճարման դրամական միավորը

Բոլոր վճարումները կկատարվեն Եվրոյով:

### 3.06 ա Հաշիվ ներկայացնելու և վճարումներ կատարելու ձևը

Վճարումները կկատարվեն հետևյալ հերթականությամբ. Եվրո.

- Նախնական վճարում. 20 000.00 Եվրո,
- Միջանկյալ վճարում պատվիրատուի կողմից ESIA-ի նախագիծն ընդունելու դեպքում. 80 000.00 Եվրո (նախնական վճարումն ընդգրկված չէ), և
- Վերջնական վճարում, որը կատարվում է պատվիրատուի կողմից վերջնական հաշվետվությունն ընդունելուց հետո. 40 000.00 Եվրո:

### 3.06 գ. Նախնական վճարումներ

Նախնական վճարման գումարը կկազմի 20 000.00 Եվրո («Նախնական վճարում»):

Նախնական վճարումը արտահայտված կլինի և կփոխհատուցվի Խորհրդատուի առաջին հաշիվ ապրանքագրի հիման վրա, և եթե առաջին հաշիվ ապրանքագրի գումարը հավասար չէ կամ ավելի մեծ է, քան նախնական վճարման գումարն է, ապա փոխհատուցվում է յուրաքանչյուր հերթական հաշիվ ապրանքագրի դիմաց, մինչև որ նախնական վճարման գումարն ամբողջությամբ փոխհատուցվի: Այն դեպքում, եթե մինչև նախնական վճարման ամբողջ գումարը փոխանցելը պայմանագիրը որևէ պատճառով դադարեցվի՝ Խորհրդատուն հետ կվճարի բանկին, այդպիսի պահանջ ստանալու դեպքում, նախնական վճարման այն գումարը, որը չի փոխհատուցվել հաշիվ ապրանքագրերի դիմաց այն ծառայությունների համար, որոնք մատուցվել են մինչև պայմանագրի դադարեցման օրը:

**3.06 դ. Խորհրդատուի բանկային հաշիվը.**

Դանսկե Բանկ

Հոլմենս Կանալ 2-12

Կոպենհագեն

ԴԿ-1092

Դանիա

Հաշվի անվանումը. COWI, Հաշվեհամար. TBA, Sort Code. 3100

**5.11 բ. Խորհրդատուի կողմից փոխհատուցում**

5.11 (բ) կետը ենթակա է հետևյալ դրույթների.

Ծառայությունների մատուցման ավարտից հետո 12 ամսից ոչ ուշ Խորհրդատուին կտեղեկացվի այդպիսի գործողությունների, հայցապահանջների, կորուստների կամ վնասների մասին,

5.11 (բ) կետի ներքո Խորհրդատուի պատասխանատվության առավելագույն աստիճանն ավելի բարձր չի լինի և սահմանափակված կլինի ցանկացած ապահովագրական գործընթացով, որոնք ենթակա են վճարման Խորհրդատուի ապահովագրության ներքո, կամ պայմանագրի առավելագույն գումարը բազմապատկվում է պայմանագրի առավելագույն գումարով, բացառությամբ նրան, որ այդ առավելագույն աստիճանը չի վերաբերվի Խորհրդատուի կամ Փորձագետ(ներ)ի կողմից անտարբերության կամ անխոհեմ կամ կանխամտածված անգործության պատճառով կատարված գործողություններին, պահանջներին, կորուստներին կամ վնասներին:

**5.15 Ապահովագրություն**

Ապահովագրության գումարը համաձայնեցվել է կողմերի միջև՝ պայմանագրի առավելագույն գումարն է:

**5.16 Հաշվետվությունների լեզուն**

(ա) Սույն պայմանագրի ներքո անգլերենը կլինի բոլոր տեսակ հաղորդակցությունների, փաստաթղթաշրջանառության և հաշվետվությունների միակ լեզուն, քանի դեռ պատվիրատուն պարզորոշ այլ բան չի հայտարարել:

(բ) Համակարգչային ծրագրերից կօգտագործվի Microsoft Office փաթեթը, քանի դեռ Պատվիրատուն այլ բան չի հայտարարել:

**6.05 Կիրառվող օրենքը և վեճերի լուծումը**

(ա) Սույն Համաձայնագիրը պետք է մեկնաբանվի անգլերեն լեզվով գրված օրենքի համաձայն: Սույն Համաձայնագրից բխող կամ դրա հետ կապված ցանկացած ոչ պայմանագրային պարտավորություն պետք է ղեկավարվի և մեկնաբանվի անգլերեն



լեզվով գրված օրենքի համաձայն:

(բ) Ցանկացած վեճ, վիճաբանություն կամ պահանջ, որն առաջանում կամ վերաբերում է սույն Համաձայնագրին, կամ Համաձայնագրի խախտում, խզում կամ անվավեր ճանաչում կամ սույն Համաձայնագրից բխող կամ դրան վերաբերող ցանկացած ոչ պայմանագրային պարտավորություն, որը չի կարող խաղաղ լուծվել, պետք է լուծվի դատարանի միջոցով՝ սույն Համաձայնագրի ամսաթվի կտրվածքով ուժի մեջ մտած և գործող Միջազգային առևտրական օրենքի գծով Միացյալ Ազգերի հանձնաժողովի (ՄԱՕ ՄԱԿ) արբիտրաժի ընթացակարգերի կանոններին համաձայն: Վեճի լուծման համար պետք է լինի մեկ դատավոր, իսկ ՄԱՕ ՄԱԿ արբիտրաժի ընթացակարգերի կանոնների նպատակով նշանակող մարմինը պետք է լինի Լոնդոնի Միջազգային արբիտրաժային դատարանը (ԼՄԱԲ): Դատավորի նստավայրը և աշխատատեղը կլինի Լոնդոնում, Անգլիա, իսկ արբիտրաժային գործողությունների ամբողջ ընթացքը կընթանա անգլերեն լեզվով: Այսպիսով, Կողմերն ազատվում են 1996թ. Արբիտրաժային օրենքի ներքո սահմանված որևէ իրավունքից կամ արբիտրաժային որոշումը Անգլիայի դատարաններում կամ այլ տեղերում բողոքարկելու հնարավորությունից: Անկախ ՄԱՕ ՄԱԿ արբիտրաժի ընթացակարգերի կանոնների որևէ դրույթից՝ դատավորը լիազորված չէ ձեռնարկել կամ ապահովել և Խորհրդատուն համաձայնվում է, որ որևէ այլ դատական մարմին չի դիմի, Բանկի դեմ պաշտպանության որևէ միջանկյալ միջոցներ ձեռնարկի կամ նախքան որոշման ընդունումն ազատվի պատասխանատվությունից:

(գ) Սույն Համաձայնագրում սահմանված ոչ մի դրույթ չպետք է մեկնաբանվի որպես Բանկի որևէ արտոնությունից, առավելությունից և բացառությունից հրաժարում, չընդունում կամ դրանց փոփոխություն Բանկի կողմից, քանի որ դրանք համաձայնեցված են Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի ստեղծման մասին Համաձայնագրով, միջազգային կոնվենցիայով կամ ցանկացած այլ կիրառվող օրենքով:

### **6.08 Կիրառվող լեզուն**

Սույն պայմանագրին առնչվող (ներկայացվող) ցանկացած փաստաթուղթ, բացի 5.16 կետում նշված հաշվետվություններից, պետք է լինեն անգլերեն լեզվով:

### **7.02 Լիազորված ներկայացուցչություններ**

(ա) Խորհրդատուն, եթե ոչ անհատը, այսպիսով նշանակում է Քարսթեն Սկովին որպես իր լիազորված ներկայացուցիչ:

(բ) Պատվիրատուի լիազորված ներկայացուցիչն է Ավագ Հակոբյանը:

### **7.03 Ծանուցումներ կամ պահանջներ**

Խորհրդատուի կողմից.

Խորհրդատուի լիազորված ներկայացուցիչն է.

անունը՝ Քարսթեն Սկով

հասցեն՝ Պարալելվեժ 2, Լինգբայ, DK-2800, Դանիա

հեռ. +45 4597 2211  
ֆաքս՝ +45 4597 2212  
էլ. հասցե՝ [cask@cowi.dk](mailto:cask@cowi.dk)

Պատվիրատուի կողմից.

Պատվիրատուի լիազորված ներկայացուցիչն է.

անունը՝ Ավագ Հակոբյան

հասցե՝ Կառավարական տուն 3, Հանրապետության հրապարակ, Երևան,  
0010, Հայաստան

հեռ. +37410589080

ֆաքս՝

էլ. հասցե՝ [av.hakobyan@mud.am](mailto:av.hakobyan@mud.am)

**Տեխնիկական առաջադրանք**

**Հայաստան: Կոշտ թափոնների կառավարումը Կոտայքի մարզում - Բնապահպանական և սոցիալական տնտեսատեխնիկական հիմնավորում**

**1. Սկզբնական տեղեկատվություն**

**1.1 Կոշտ թափոնների կառավարումը Կոտայքի մարզում**

Հայաստանի Հանրապետությունը (ՀՀ) բաժանված է տաս մարզերի: Կոտայքի մարզը ունի 240,000 բնակչություն և 2100 քառ. կմ տարածք: Կոտայքի մարզկենտրոնը հանդիսանում է Հրազդան քաղաքը: ՀՀ քաղաքաշինության նախարարությունը (ՔՆ) Կոտայքի մարզում տարածքային սանիտարական աղբավայր ստեղծելու և ֆինանսավորելու խնդրանքով դիմել էր Վերակառուցման և Ջարգացման Եվրոպական բանկին (ՎՋԵԲ կամ Բանկ):

Վերջինս կլինի երկրի առաջին սանիտարական աղբավայրը: Կոտայքի մարզը ընտրվել էր ի շնորհիվ Երևանին մոտ գտնվելու հանգամանքի շնորհիվ և նպատակ ունի ամբողջ երկրի համար հիմնել ցուցադրական ծրագիր: Ծրագիրը կկենտրոնանա Աբովյան (60,000 բնակչություն), Հրազդան (53,000 բնակչություն), Չարենցավան (18,000 բնակչություն), Եղվարդ (12,000 բնակչություն) քաղաքների (միասին, քաղաքներ) և շրջակա գյուղերի վրա: Ծրագիրը կնվազեցնի շրջակա միջավայրին սպառնացող վտանգը, կհակազդի աղտոտվածությանը և հողի ու ջրային ռեսուրսների վրա վնասակար ազդեցությանը: ՔՆ նախատեսում է կառուցել յոթ տարածքային սանիտարական աղբավայրեր ամբողջ երկրին սպասարկելու համար:

Առաջարկված ծրագիրը բաղկացած է ՀՀ քաղաքաշինության նախարարությանը տրամադրվող 3.5 մլն Եվրո վարկային միջոցներից, որն երաշխավորված է պետության կողմից, և միջազգային դոնորի կողմից կապիտալ ծախսերի համար համաֆինանսավորվող 7.5 մլն Եվրո դրամաշինորից: Ծրագիրը կներառի Հրազդանում ընտրված առկա աղբավայրի տարածքի բարելավումը և վերածումը մոտավորապես 20 հա մարզային սանիտարական աղբավայրի Եղվարդում, Բյուրեղավանում և հնարավոր է նաև Սևանում ընտրված գործող աղբավայրերի տարածքների վերափոխումը սանիտարական տեղափոխման կայանների, որոնք կհանդիսանան տնտեսատեխնիկական հիմնավորման հետագա իրականացման առարկա, մնացած աղբավայրերի փակումը (ծրագրի մաս չի կազմի, ընդամենը Բանկի կողմից ուսումնասիրված է), տրանսպորտային միջոցների ձեռքբերումը, թափոնների կառավարման համար սարքավորումների և աղբարկղերի ձեռքբերումը, կենցաղային թափոնների հավաքման մրցույթների թափանցիկ կազմակերպումը մասնավոր ընկերությունների շրջանում և աղբավայրերը շահագործող ընկերության ստեղծումը (այսուհետ՝ Ընկերություն), որպես գործող տնտեսապես կայուն միավոր:

Ոլորտի բարեփոխումը կիրականացվի Կոտայքի մարզի թափոնների կառավարման համապատասխան պլանավորման շրջանակներում: Ենթակառուցվածքների ստեղծման օժանդակությունը ուղղվելու է շահագործող ընկերությունների հիմնադրմանը և դրանց

կարողությունների զարգացմանը՝ գործելով որպես տնտեսապես կայուն միավոր: Տնտեսատեխնիկական հիմնավորման թեման կլինի թափոնների հավաքման գործընթացում մասնավոր ընկերությունների մասնակցությունը, որը կիրականացվի թափոնների հավաքման ծառայությունների մրցույթների կազմակերպման միջոցով:

Այս Ծրագիրը կլինի ՎՋԵԲ-ի կոշտ թափոնների առաջին ծրագիրը Հայաստանում, և կհանդիսանա թափոնների կառավարման արդիականացման ազգային ծրագրի մի մաս: Ծրագիրը կունենա մի կարևոր ցուցադրական ազդեցություն և կբարձրացնի հասարակության իրազեկությունը կոշտ թափոնների կառավարման վերաբերյալ, ինչը վարձավճարների կանխատեսվող թանկացման սահուն ընդունման հարցում մեծ կարևորություն ունի:

### **Պարվիրաբու**

Ներկայումս կոշտ թափոնները տեղափոխվում են Կոտայքի մարզի 6 աղբանոցները: Աղբի և թափոնների հավաքումը և հեռացումը կատարվում է կոմունալ ծառայության ընկերությունների, կամ մրցութային կարգով ընտրված մասնավոր ընկերությունների կողմից: Բնակելի թաղամասերում կենցաղային աղբը հավաքվում է աղբարկղներում, որոնք դատարկվում և հեռացվում են աղբահավաք մեքենաներով: Այլ շրջաններում աղբի համար նախատեսված արկղների և աղբամանների պակասի պատճառով, աղբը կուտակվում է փոքր կույտերով, և հետագայում այն բաիերի օգնությամբ բեռնում են աղբահավաք մեքենաները: Աղբի հավաքման այս միջոցը արդյունավետ չէ, որի արդյունքում աղտոտվում են փողոցները, և տեղի է ունենում անօրինական աղբի թափում: Կոտայքի մարզում հաշվարկված օրական կոշտ թափոնների ծավալը կազմում է 100-120 տոննա: 82 աշխատող ընդգրկված են կոշտ թափոնների կառավարման գործում, իսկ 150 մարդ ներգրավված են փողոցների մաքրման աշխատանքներում: Աշխատողների միջին աշխատավարձը կազմում է 55,000-60,000 ՀՀ դրամ (112-122 Եվրոին համարժեք): Կոշտ թափոնների վարձավճարի չափը կազմում է 100-150 ՀՀ դրամ ամսական մեկ անձի համար, համապատասխանաբար մեկ տարվա համար մեկ տնային տնտեսության համար մոտավորապես կազմում է 5,000 – 8,000 ՀՀ դրամ (12-19 Եվրո/ տնային տնտեսություն/տարի): Ներկայումս միջին աղբահավաքման վարձավճարի մակարդակը 50 տոկոսից ցածր է:

Ծրագրի ֆինանսական կառուցվածքը նախատեսում է Քաղաքների կողմից Ընկերությանը տրամադրել հավելավճար յուրաքանչյուր տոննայի համար:

Կսահմանվի մատչելի հավելավճար, որի մատչելիությունը ապահովելու անհրաժեշտության դեպքում կսուբսիդավորվի, մինչև որ հնարավոր լինի հասնել իրական արժեքի փոխհատուցմանը:

Ներկայումս բացակայում է բնակչությունից կոշտ թափոնների վարձավճարի հավաքագրման իրավական բազան: 2010 թվականին ՀՀ կառավարությունը նախատեսում է կոշտ թափոնների վարձավճարի մասին օրենքի ընդունում:

2008 թվականի սեպտեմբերին Բանկը հանձնարարել է կատարել Ծրագրի տեխնիկական վերլուծությունը, իսկ Կոտայքի մարզի վերաբերյալ հաշվետվությունը ներկայացվել է 2008 թվականի հոկտեմբերին: Սույն հանձնարարության նպատակն էր աջակցել Բանկին առաջարկված Ծրագրի նախնական տեխնիկական գնահատման հարցում: Հանձնարարության հատուկ նպատակներից էին.

- Իրականացնել Կոտայքի մարզի աղբանոցների տարածքների՝

աղբավայրերի նախնական գնահատում, նպատակ ունենալով որոշել, թե կան արդյոք գործող աղբանոցների տարածքներ, որոնք հնարավոր լինի վերափոխելու մարզային սանիտարական աղբավայրերի,

- Գնահատել ներդրումների մոտավոր կարիքը և ներկայացնել ներդրումների հիմնավորումը բնապահպանական և սոցիալական ազդեցության համատեքստում, և
- Գնահատել Կոտայքի մարզում կոշտ թափոնների կառավարման առկա ենթակառուցվածքային համակարգը:

Հիմնվելով տեխնիկական վերստուգման վերջնական արդյունքների վրա՝ ծրագրի իրագործման ամբողջական վերլուծությունը կիրականացվի ծրագրի պատրաստման փուլում: Ակնկալվում է նաև, որ այս հանձնարարության ուղղությամբ աշխատող փորձագետը համատեղ կաշխատի և կհամագործակցի իրագործման հնարավորության վերլուծություն իրականացնող փորձագետի հետ, որի հետ կկնքվի առանձին պայմանագիր:

## 2. Նպատակները

ՎՋԵԲ-ի 2008 թվականի Բնապահպանական և սոցիալական քաղաքականության (ԲՄԲ կամ «Քաղաքականություն»), համաձայն Բանկը բոլոր ծրագրերի համար իրականացնում է բնապահպանական և սոցիալական տեխնիկատնտեսական հիմնավորում: Համաձայն Քաղաքականության 19-րդ կետի՝ այս Ծրագիրը դասակարգվել է որպես Ա կարգի ծրագիր: Հետևաբար պահանջվում է Ծրագրի Շրջակա միջավայրի վրա և սոցիալական ազդեցության գնահատում (ՇՄՍԱԳ), ներառյալ առկա հնարավորությունների և գործող օբյեկտների բնապահպանական և սոցիալական վերստուգումը:

ՎՋԵԲ-ի տաս տեխնիկական պահանջները (ՏՊ) ընդգրկում են ծրագրի կամ Պատվիրատուի կողմից կատարման ենթակա պահանջները, որոնք վերաբերվում են ծրագրի գնահատմանը, տեղեկատվության տրամադրմանը, հասարակական խորհրդակցություններին, ինչպես նաև բնապահպանական և սոցիալական չափանիշներին:

Բանկը ակնկալում է ՇՄՍԱԳ-ի իրականացում բազմաֆունկցիոնալ փորձագետների թիմի կողմից, որոնք կգործեն համակարգված ձևով՝ հավաքելով և փոխանակելով ազդեցության գնահատման տեղեկատվությունը և ամբողջական բնութագրելով խաչվող և թեմատիկ հետևանքները և խնդիրները:

ՎՋԵԲ-ի 2008 թվականի Բնապահպանական և սոցիալական քաղաքականությունը և Տեխնիկական պահանջները հասանելի են հետևյալ ինտերնետային կայքում՝

<http://www.ebrd.com/about/policies/enviro/policy/2008policy.pdf>.

Որպես հանձնարարության մաս Խորհրդատուն (Խորհրդատու) պետք է.

1. Համատեղ աշխատի ՔՆ-ի հետ առաջարկված նախագծի ՇՄՍԱԳ-ի պատրաստման ուղղությամբ՝ համաձայն ԲՄԲ-ի և ՏՊ-ի 1-ից 10-ի և ազգային պահանջների: Սա նշանակում է նաև քայլեր ձեռնարկել ՇՄՍԱԳ-ի գործընթացի և ՇՄՍԱԳ-ի փաստաթղթի պատրաստման ուղղությամբ՝ այն համապատասխանեցնելով ԵՄ ՇՄԱԳ (Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման) փոփոխված Հրահանգին:

2. Նկարագրի ծրագիրը և համապատասխանեցնի ծրագրի ազդեցության

գոտին ՎԶԵԲ-ի ՏՊ1-ի հետ, Բանկին տեղեկացնելով այլ լրացուցիչ օբյեկտների և համապատասխան տարածքների մասին, և համաձայնեցնելով աշխատանքների վերջնական շրջանակը:

3. Վերլուծի քաղաքաշինության հետ կապված առկա բնապահպանական և համապատասխան այլ հետազոտությունները և աջակցի ծրագրի համար տեղական օրենքներով և այլ նորմատիվ իրավական ակտերով պահանջվող ՇՄԱԳ-ի մշակմանը:

4. Սահմանի բնապահպանական և սոցիալական նվազագույն պահանջները ծրագրի իրականացման տարածքի և շրջապատող տարածքների համար, հիմնվելով առկա երկրաբանական, հիդրոտեխնիկական, օդի և ջրի մաքրության, բուսական և կենդանական աշխարհի բազմազանության, ժողովրդագրական, աշխատուժի, աշխատողների առողջության և անվտանգության, համայնքային խնդիրների և այլ սոցիալ-տնտեսական չափանիշների (այդ թվում՝ հիմնված համայնքների թափոնների առկա կառավարման ռազմավարության վրա) վերաբերյալ տվյալների վրա՝ ՏՊ2-8, 10 պահանջներին համապատասխան:

5. Վերլուծի ներդրումային ծրագրերի բնապահպանական, սոցիալական, առողջության և անվտանգության խնդիրները:

6. Անհրաժեշտության դեպքում աջակցի ՔՆ-ին՝ սահմանելու հետագա բնապահպանական և սոցիալական ուսումնասիրությունների շրջանակը:

7. Անհրաժեշտության դեպքում աջակցի ՔՆ-ին և Ծրագրի իրագործման հնարավորության վերլուծություն իրականացնող խորհրդատուներին տարածքի ընտրության և նախագծի այլընտրանքների գնահատման ժամանակ:

8. Հայտնաբերի և գնահատի ծրագրի հետ կապված բնապահպանական ու սոցիալական խնդիրները, առաջարկի շրջակա միջավայրի, սոցիալ-տնտեսական, գենդերային խնդիրների վրա անբարենպաստ ազդեցությունը նվազեցնող միջոցները: Վերջինս կներառի ինչպես կառուցապատման, այնպես էլ շահագործման փուլերը:

9. Մշակի ՇՄԱԳ-ի փաստաթուղթը հիմնվելով ԲՍԲ-ի պահանջների վրա, որը այլ հարցերի հետ միասին պետք է ընդգրկի ելակետային տվյալների ուսումնասիրությունը. տեխնոլոգիայի գնահատումը, հնարավոր հետևանքների գնահատումը (ուղղակի և անուղղակի), ազդեցությունը մեղմացնող անհրաժեշտ միջոցները, մոնիտորինգը՝ ծրագրի իրականացման ընթացքում և ավարտից հետո:

10. Ծրագրի համար մշակի Բնապահպանական և սոցիալական գործողությունների ծրագիր (ԲՍԳԾ)<sup>1</sup> ներառելով կապը փոխկապակցված տարածքների միջև, ինչպես օրինակ՝ միացնող ճանապարհները, մաքրման կայանները և այլն:

11. Մշակի Բնապահպանական և սոցիալական մոնիտորինգի ծրագիր (ԲՍՄԾ):

12. Աջակցի ՔՆ-ին Շահառուների ներգրավման ծրագրի (ՇՆԾ) մշակման ուղղությամբ, ընդգրկի ծրագրի տարբեր փուլերի ազդեցության ոլորտում գտնվող շահառուներին՝ ներառելով կառուցումը, շահագործումը և փակումը:

---

<sup>1</sup> Անհրաժեշտության դեպքում այն նաև կարող է ընդգրկել վերաբնակեցման գործողությունների և ապրուստի միջոցների վերականգնման ծրագիր

13. Կազմի Ոչ տեխնիկական ամփոփագիր (ՈՏԱ), որի նպատակն է հասարակության տեղեկացումը, և այլ խնդիրների հետ միասին գնահատի ամբողջ ծրագրի ընդհանուր ազդեցությունը, այդ թվում՝ առկա և նոր օբյեկտները, ինչպես նաև փոխկապակցված ենթակառուցվածքը, ողջամիտ այլընտրանքները, ազդեցությունը մեղմացնող միջոցները, ներառելով բնապահպանական և սոցիալական խնդիրները:

14. Կազմի ՏՊ-ի համապատասխանության աղյուսակը 3.6. Բաժնին համապատասխան:

### **3. Աշխատանքի նկարագիրը**

#### **3.1 Նվազագույն պահանջների ուսումնասիրությունը**

##### **3.1.1 Սկզբնական ուսումնասիրությունը և դրա շրջանակները**

Սկզբնական/նախնական ուսումնասիրությունը պետք է.

- հայտնաբերի առաջարկված ծրագրի հիմնական առանձնահատկությունները, կապված կառուցապատման, շինարարության տարբեր փուլերի և շահագործման հետ,
- հայտնաբերի ծրագրի հետ կապված համապատասխան այլընտրանքներ (այլընտրանքային տարածքներ, այլընտրանքային նախագծեր),
- նախագծի Ծրագրի ազդեցության գոտին համաձայն ՎՋԵԲ-ի սահմանմանը (ՏՊ1)՝ այն քննարկելով ՎՋԵԲ-ի հետ,
- հայտնաբերի ՏՊ1-ին համապատասխանող փոխկապակցված օբյեկտները,
- հայտնաբերի ծրագրի ազդեցության գոտում առկա հիմնական բնապահպանական և սոցիալական խնդիրները, խնդրահարույց հարցերը և սահմանափակումները, և
- հայտնաբերի Ծրագրի հիմնական շահառուներին:

Նախնական ուսումնասիրության արդյունքում կբացահայտվեն նաև ազգային և ԵՄ օրենսդրության, բնապահպանական և սոցիալական խնդիրների հետ կապված չափանիշները, ինչպես նաև կվերլուծվի նրանց ազդեցությունը առաջարկվող ներդրումային ծրագրի և ծրագրի իրականացման համար անհրաժեշտ թույլտվությունների ձեռքբերման գործընթացի վրա: Իրավական և վարչական համատեքստում կպատրաստվի նաև վերլուծություն՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և երկրում կարևոր պետական շինարարական ծրագրերի վերաբերյալ:

Նախնական ուսումնասիրությունը կընդգրկի շահառուների հայտնաբերումը և նրանց ներկայացուցիչների հետ կապի հաստատումը, այդ թվում՝ շահագրգիռ համայնքների, պետական կառավարման մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, հասարակական (առկայության դեպքում), համայնքային և այլ կազմակերպությունների հետ: Հարկավոր է նաև բացահայտել նախնական ուսումնասիրության արդյունքում հայտնաբերված տվյալների բացը, որոնց պակասը լրացնելու համար կարող է պահանջվել լրացուցիչ ելակետային տվյալների հավաքագրում:

Նախնական ուսումնասիրության արդյունքում կկազմվի նախնական

ուսումնասիրության հաշվետվություն, որը կներառի.

- Ծրագրի նկարագրությունը, այդ թվում՝ ՎՋԵԲ-ի ՏՊ1-ին համապատասխանող փոխկապակցված օբյեկտները.

- Ծրագրի ազդեցության գոտու նախագծումը և հիմնավորումը՝ համաձայնեցված ՎՋԵԲ-ի հետ:

- Ծրագրի հիմնական շահառուների հայտնաբերումը կառուցապատման և շահագործման փուլերի համար:

- Մանրամասն գործողությունների ծրագրի և աշխատանքային պլանի կազմումն ամբողջ ՇՄԱԳ գործընթացի համար, այդ թվում՝ հետազոտության համար առաջարկված տվյալների հավաքագրման և ազդեցության գնահատման մեթոդաբանությունը:

### **3.1.2 Բնապահպանական և սոցիալական ելակետային տվյալները**

Բնապահպանական և սոցիալական ելակետային տվյալները կնկարագրեն ծրագրի ազդեցության գոտու ներկա կարգավիճակը՝ բնութագրելով երկրաբանական, հիդրոտեխնիկական, բուսական և կենդանական աշխարհի բազմազանության, օդի և ջրի մաքրության, ժողովրդագրական (այդ թվում՝ գենդերային) և այլ սոցիալ-տնտեսական պայմանները: Դրանք նաև կընդգրկեն համապատասխան հանրային առողջապահության և հողերի վերաբերյալ տեղեկատվություն և պարտավորությունների կատարման հետ կապված խնդիրներ: ՇՄԱԳ-ի համար բնապահպանական և սոցիալական ելակետային տվյալները կհիմնվեն արդեն իսկ հավաքված տվյալների վրա և հասանելի կլինեն, օրինակ՝ տեղական ինքնակառավարման մարմինների և հասարակական կազմակերպությունների շրջանում:

Առկա տվյալների անբավարարության դեպքում, Խորհրդատուն պետք է առաջարկություններ ներկայացնի հետագա հետազոտությունների իրականացման ուղղությամբ՝ ներառելով աղերի, ստորգետնյա ջրերի, բուսական և կենդանական աշխարհի գնահատումը, թափոնների այլ ընթացիկ և ոչ պարտադիր հավաքումը, թափոնների վերամշակման գործառույթները, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում հողերի սեփականատերերի բացահայտման նպատակով ուսումնասիրությունների կատարումը: Անհրաժեշտության դեպքում Խորհրդատուն սկզբնական ուսումնասիրության հաշվետվության մեջ պետք է ներառի թեկուզ և սահմանափակ, բայց լրացուցիչ հետազոտության ծախսերը:

Ակնկալվում է, որ ելակետային և այլ տվյալները ստանալու համար օգտագործվող մեթոդաբանությունը մանրամասն կնկարագրվի:

ՇՄԱԳ-ում ներառվող ելակետային տվյալների ցանկը նշված է Հավելված 1-ում:

### **3.1.3 Շրջակա միջավայրի վրա և սոցիալական ազդեցության գնահատումը**

Ծրագրի ազդեցության գոտում կգնահատվի շրջակա միջավայրի վրա ազդեցությունը (ինչպես դրական և այնպես էլ բացասական) ծրագրի զարգացման տարբեր փուլերում, այդ թվում՝ կառուցապատման, շահագործման և փակման փուլերում: ՇՄԱԳ-ն պետք է տարբերակի կարևոր նշանակության դրական և բացասական ազդեցությունը,



երկկողմանի և միակողմանի, ուղղակի և անուղղակի, երկարաժամկետ և անսպասելի ազդեցությունը: Գնահատումը պետք է ընդգրկի այլընտրանքային սցենարների վերլուծությունը, այդ թվում՝ «Ոչինչ չանել» սցենարը՝ հիմնված տարածքի ընթացիկ իրավիճակի վրա:

Շրջակա միջավայրի վրա և սոցիալական ազդեցության գնահատման մանրամասներն բերված են Հավելված 1-ում:

Ծրագրի գործողություններն և ազդեցությունը պետք է ներկայացվեն աղյուսակի ձևով: Ազդեցության աղյուսակը պետք է ընդգրկի հնարավոր ազդեցությունը, ազդեցության սահմանները, ազդեցությունը մեղմացնող միջոցները և ազդեցությունը մեղմացնող միջոցները կիրառելուց հետո մնացորդային ազդեցության սահմանները:

### **3.2 Բնապահպանական և սոցիալական գործողությունների Ծրագիր (ԲՍԳԾ)**

Վերը նշված ուսումնասիրություններից ստացված տվյալների հիման վրա, Խորհրդատուն կպատրաստի ամբողջ տարածքի համար ԲՍԳԾ-ն՝ ներառելով, ինչպես առաջարկված, այնպես էլ գործող օբյեկտները: ՏՊ-ի հետ համապատասխանությունը ապահովելու համար ԲՍԳԾ-ն կսահմանի ապագա շրջակա միջավայրի վրա ազդեցությունը մեղմացնող միջոցների և բարելավումների անհրաժեշտությունն ու առաջնահերթությունը: ԲՍԳԾ-ն պետք է ներառի հետևյալ գործողությունները.

- Շրջակա միջավայրին նախկինում հասցրած վնասի հետևանքները նվազեցնող անհրաժեշտ գործողությունները, ծախսերի գնահատումը և/կամ հետագա հետազոտությունների կատարումը,

- ՏՊ-ի կատարումը ապահովող անհրաժեշտ գործողությունները, այդ թվում՝ ազգային բնապահպանական, առողջության, անվտանգության և աշխատանքային նորմատիվ իրավական ակտերը և չափանիշները, ԵՄ-ի բնապահպանական ստանդարտները և ԵՄ/ՄՖԿ ԱՀԱ (աշխատանքի հիգիենայի և անվտանգության) չափանիշները՝ հրահանգները,

- ՇՄԱԱ-ի (Շրջակա միջավայրի, առողջության և անվտանգության) կառավարումը և կատարումը բարելավող գործողությունները՝ համաձայն ՏՊ-ի (և դրական միջազգային փորձի),

- Ծրագրի բացասական սոցիալ-տնտեսական ազդեցությունը նվազեցնելու և տեղի բնակչության համար ծրագրի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով անհրաժեշտ գործողությունները:

Ծրագրի իրագործման համար պատասխանատվության բաժանումը, ինչպես նաև բացասական ազդեցությունը նվազեցնող ամեն մի գործողության համար նախատեսվող բյուջեն պետք է ընդգրկվի ԲՍԳԾ-ում:

ԲՍԳԾ-ի ձևաչափը ներկայացվում է Հավելված 2-ում:

### **3.3 Բնապահպանական և սոցիալական մոնիտորինգի ծրագիր (ԲՍՄԾ)**

Խորհրդատուն պետք է պատրաստի ԲՍՄԾ-ի ընդհանուր նկարագիրը: ԲՍՄԾ-ն նվազագույնը պետք է ընդգրկի.

- Ներածություն, որը կհիմնավորի մոնիտորինգի ծրագրի անհրաժեշտությունը և համապատասխան դրույթներ կպարունակի թույլտվությունների՝ լիցենզիաների, ԵՄ դիրեկտիվաների և ՎՋԵԲ-ի ԲՍԲ-ի վերաբերյալ:
  - Մոնիտորինգի ենթակա գործունեությունը և մոնիտորինգը արդյունավետ իրականացնելու համար ընտրված չափանիշները:
    - Նմուշառման և վերլուծության համար օգտագործվող մեթոդաբանությունը և մոնիտորինգի հաճախականությունը:
      - Մոնիտորինգի ենթակա տարածքները: Դրանք որոշ դեպքերում կարող են արդեն իսկ որոշված լինեն տեղական ինքնակառավարման մարմինների կողմից և պետք է ընդգրկեն վերահսկվող տարածք, որի վրա կառուցապատումը ազդեցություն չի ունենա:
        - Առաջադրանքների հստակ բաշխում և պարտականությունների շրջանակների նկարագրում:

### **3.4 Շահառուների ներգրավելու ծրագիր (ՇՆԾ)**

#### **3.4.1 ՇՆԾ-ի նախապատրաստումը**

Խորհրդատուն պարտավոր է պատրաստել ՇՆԾ-ն համաձայն ՎՋԵԲ-ի ՏՊ 10-ի: ՇՆԾ-ն պետք է ներառի հետևյալը.

- Խորհրդատվական գործունեությունը կարգավորող տեղական իրավական դաշտը և ծրագրի հետ կապված տեղեկատվության տրամադրման պահանջները, մասնավորապես՝ տեղական թույլտվությունները ստանալու համար, ուղղակիորեն պահանջվող հասարակական քննարկումների վերաբերյալ:
- Ծրագրի շահառուների հայտնաբերում և այլ անցյալ կամ ներկա, հնարավոր մտահոգություններ և/կամ հետաքրքրություն առաջացնող խնդիրներ:
- Ներգրավված խորհրդատուի կողմից նախկինում նախաձեռնված որևիցե քննարկումների կամ այլ շահառուների հետ հանդիպումների մասին արձանագրություն:
- Ծրագրի պատրաստման, կառուցապատման և շահագործման փուլերի ընթացքում հետագա քննարկումների իրականացման ծրագիր՝ ներառելով տարբեր շահառուների հետ արդյունավետ և իմաստալից համագործակցության մանրամասներն և համապատասխան ձևերը:
- Տեղեկությունների տրամադրման ծրագիր, որը կսահմանի այն տարածքները, որտեղ Ծրագրի և ՇՄԱԳ-ի համապատասխան փաստաթղթերը հասանելի կլինեն տեղում և այլուր, ինչպես նաև փաստաթղթերում օգտագործվող լեզուները: Հարկավոր է նաև հաշվի առնել ՎՋԵԲ-ի ՏՊ-ները, ՎՋԵԲ-ի Հասարակությանը տեղեկացնելու քաղաքականությունը և այլ համապատասխան

տեղական պահանջները:

- Բողոքարկման երկու մեխանիզմներ, քննարկված ՔՆ-ի հետ, մեկը կօգտագործվի արտաքին շահառուների համար, իսկ մյուսը՝ ՏՊԶ-ի աշխատողների համար:

### 3.4.2 Հասարակական խորհրդակցություններ

Խորհրդատուն կաջակցի ՔՆ-ին հետևյալ խորհրդատվական միջոցառումների կազմակերպման և նախաձեռնման հարցում.

- Նախնական ուսումնասիրությունների մակարդակում հասարակության հետ առաջին հանդիպման կազմակերպումը, որի նպատակն է շահառուների կողմից կարծիքների ներկայացումը՝

- ընդհանուր առմամբ ծրագրով հետաքրքրված շահառուների վերաբերյալ,

- ՇՄՍԱԳ –ի գործընթացի վերաբերյալ,

- պարտականությունների շրջանակի և աշխատանքային պլանի, մասնավորապես՝ ելակետային տվյալների հավաքագրման հետ կապված հարցերի վերաբերյալ:

- ՇՄՍԱԳ-ի նախագիծը պատրաստելուց հետո տեղի կունենա երկրորդ հանդիպումը, որի նպատակն է ներկայացնել ՇՄՍԱԳ-ի եզրակացությունները, և ԲԱԳԾ-ի վերաբերյալ շահառուների դիտողությունները:

Ծրագրի և շահառուների կարիքների համար մշակված, մի շարք ներկայացվող ձևաչափերը պետք է քննարկվեն գործածության մեջ դնելուց առաջ (ներկայացումներ, բրոշյուրներ, բաց դռներ): Նյութերը հասանելի կլինեն ինչպես տեղական լեզվով, այնպես էլ անգլերենով, ըստ ՇՆԾ-ի: ՔՆ-ն կազմակերպելու է Հանդիպումները, իսկ Խորհրդատուն կմշակի քննարկումների նյութերը, կմասնակցի հանդիպումներին՝ պատրաստ լինելով պատասխանելու բարձրացված հարցերին: Խորհրդատուն կպատրաստի ամեն մի հանդիպման ընթացքում բարձրացված հարցերի և պատասխանների վերաբերյալ ամփոփում:

### 3.5 Ոչ տեխնիկական ամփոփագիր (ՈՏԱ)

Ամբողջ ծրագրի համար պետք է պատրաստվի համակողմանի ՈՏԱ: ՎՋԵԲ-ի Հասարակության իրազեկման քաղաքականությանը համապատասխան դրա նպատակների մասին տեղեկատվությունը այլ տեղեկատվության հետ համատեղ պետք է տեղադրվի ՎՋԵԲ-ի ինտերնետային կայքում և կցվի ՎՋԵԲ-ի Տնօրենների խորհրդին ներկայացվող ծրագրի փաստաթղթերին: Այն պետք է ընդգրկի.

- Նոր օբյեկտների (և գործող օբյեկտների օգտագործման հետ կապված խնդիրների) վերաբերյալ ՇՄՍԱԳ-ի ամփոփագիրը:

- Նոր և գործող օբյեկտների հետ կապված հնարավոր կուտակվող ազդեցության գնահատումը:

- Նոր օբյեկտների համար ԲԱԳԾ-ի ամփոփագիրը: Դրա հետ մեկ տեղ **նոր օբյեկտների** ԲԱԳԾ-ն պետք է կցվի ՈՏԱ-ին:

- Գործող օբյեկտների ԲՍԳԾ-ի ուղղիչ գործողությունների ամփոփումը (**ծանոթություն. գործող օբյեկտների ԲՍԳԾ-ը ՈՏԱ-ին չեն կցվելու**):
- ՇՆԾ-ի ամփոփագիրը:

ՈՏԱ-ի ընդհանուր ծավալը չպետք է գերազանցի 20 էջը: Անհրաժեշտության դեպքում ընթերցողներին օժանդակելու համար այն պետք է պատրաստվի հասկանալի լեզվով և ներառի բառերի բացատրական ցանկ, ինչպես նաև հատուկ ուշադրություն դարձվի ընթերցումը հետաքրքիր և մասշտիվ դարձնելու համար: ՈՏԱ-ն պետք է ընդգրկի օբյեկտների հետ կապված ազդեցությունը, ինչպես նաև փոխկապակցված օբյեկտները (ինչպիսիք են խողովակաշարերը, հաղորդակցման լարերը և այլն), և ներառի ԲՍՄԾ-ն ծրագրի կառուցապատման և շահագործման փուլերի համար:

### **3.6 ՎՋԵԲ-ի ՏՊ-ների համապատասխանության աղյուսակը**

Ծրագրի համապատասխանության ձևաչափը պետք է բացահայտի ՎՋԵԲ-ի այն ՏՊ-ները և դրանց հատուկ պահանջները, որոնք վերաբերվում են ծրագրին կամ Ընկերության ներկա և ապագա գործունեությանը, նրա գործողություններին և գույքին, ինչպես նաև ամփոփի ծրագրի իրականացման և Ընկերության գործունեության համապատասխանումը յուրաքանչյուր ՏՊ-ին, և ՏՊ-ներին համապատասխանությունը ապահովելու համար անհրաժեշտ գործողությունները (տես Հավելված 3-ում ներկայացված Ծրագրի համար նախատեսված ՎՋԵԲ-ի ՏՊ-ի հաշվետվական ձևը):

### **4. Իրականացման միջոցառումները և արդյունքները**

Այս հանձնարարության պատվիրատուն է հանդիսանում ՔՆ-ն, որն էլ կվերահսկի Խորհրդատուին:

Խորհրդատուն սերտորեն կհամագործակցի ՔՆ-ի, Կոտայքի մարզպետարանի, Արմավյանի, Հրազդանի, Ծաղկաձորի, Բյուրեղավանի, Չարենցավանի, Եղվարդի և Նոր Հաջնի քաղաքապետարանների աշխատակազմերի հետ:

ՔՆ-ն Կոտայքի մարզի տեղական ինքնակառավարման մարմինների միջոցով Խորհրդատուների խմբին կտրամադրի հարմար աշխատատեղ, անհրաժեշտ կահույքով, անվճար հեռախոսագծով, ինչպես նաև օգտագործման համար կտրամադրի պատճենահանման և տպելու սարքավորումներ, որոնք կարող են համատեղ օգտագործվել նախարարության աշխատակիցների հետ: Այդ նպատակի համար Խորհրդատուն կօգտագործի իր սեփական գրենական պիտույքները:

Խորհրդատուն պարտավոր է վճարել բոլոր միջազգային հեռախոսազանգերի, համակարգչի, և այն գրասենյակային սարքերի և գրասենյակային նյութերի համար, որոնք չեն տրամադրվի նախարարության կողմից:

ՔՆ-ն պարտավոր է Կոտայքի մարզի տեղական ինքնակառավարման մարմինների միջոցով Խորհրդատուի աշխատողներին տրամադրել անվճար տրանսպորտային միջոցներ, մարզային օբյեկտներ և հանձնարարականին վերաբերվող այլ տեղական հաստատություններ այցելելու նպատակով, որոնք կկատարվեն մարզերի աշխատանքային ժամերի ընթացքում: Խորհրդատուի աշխատակազմի կարիքների համար հանձնարարության կատարման ընթացքում Խորհրդատուն կտրամադրի տրանսպորտային միջոց:

Վերը նշված կառավարման մարմինների հետ աշխատելու նպատակով Խորհրդատուն կապահովի համապատասխան որակավորում ունեցող թարգմանիչ:

Հանձնարարության ընթացքում Խորհրդատուն կհաղորդակցվի Թբիլիսիում գտնվող ՎՋԵԲ-ի Գործադիր ղեկավարի (ԳՂ) հետ և Բանկի Շրջակա միջավայրի և կայունության վարչություն հետ, հետևյալ հասցեով.

EBRD Environment & Sustainability Dept: Ebru Yildiz, Tel: +44 20 7338 6899 and Michaela Bergman, Tel: +44 20 7338 7597; EBRD OL (based in Tbilisi): Levan Sharvadze, Tel: + 995 32 44 7400

Կոտայքի մարզի տեղական ինքնակառավարման մարմինների միջոցով ՔՆ-ն կտրամադրի բոլոր արձանագրությունները, ծրագրերը, հաշվետվությունները, նախագծերը և այլ համապատասխան փաստաթղթերը, որոնց թարգմանությունը կապահովի Խորհրդատուն՝ ապահովելով կապը հարցադրումների կամ աջակցման նպատակով բոլոր այն օբյեկտների և աշխատակիցների հետ, որոնք ունեն համակարգի և օբյեկտների գործունեության վերաբերյալ պատկերացումներ:

**Արդյունքները**

Խորհրդատուն կտրամադրի հետևյալ հաշվետվությունները.

Սկզբնական նախնական ուսումնասիրության հաշվետվություն	պարտականությունները սկսելուց 5 շաբաթ հետո
ՇՆԾ՝ Շահառուներին ներգրավելու ծրագիր	պարտականությունները սկսելուց 5 շաբաթ հետո
ՇՄՍԱԳ նախագիծը	պարտականությունները սկսելուց 15 շաբաթ հետո
ԲՍԳԾ նախագիծը	պարտականությունները սկսելուց 15 շաբաթ հետո
ՈՏԱ նախագիծը	պարտականությունները սկսելուց 15 շաբաթ հետո
ՏՊ-ի համապատասխանության աղյուսակը	պարտականությունները սկսելուց 15 շաբաթ հետո
Վերջնական հաշվետվությունը (վերջնական միասնական փաստաթուղթը)	հանձնարարության ավարտին

Հաշվետվությունները կներկայացվեն նախագծերի տարբերակներով: ՎՋԵԲ-ի և ՔՆ-ի կողմից հաշվետվությունները կքննարկվեն և դրանց վերաբերյալ կարծիքներ կներկայացվեն ստանալուց երկու շաբաթվա ընթացքում: Վերջնական հաշվետվությունը պետք է ներկայացվի կարծիքները ստանալուց երկու շաբաթ հետո:

## Հավելված 1

### Առաջարկվող ՇՄԱԳ-ի կառուցվածքը ՎՋԵԲ-ի «Ա» կարգի ծրագրերի համար

#### 1 Ոչ տեխնիկական ամփոփագիր

Առաջարկվող ծրագրի համառոտ ամփոփագրի նկարագրությունը, ծրագրի նպատակահարմարությունը, առկա շրջակա միջավայրը, ազդեցության շրջանակները, բնապահպանական և սոցիալական նշանակալից ազդեցությունները, խնդիրներն ու հնարավորությունները, Բնապահպանական և սոցիալական գործողությունների ծրագրի կարևորագույն կողմերի ամփոփագիրը, մնացորդային ռիսկերը՝ խնդիրները, Ծրագրի պատվիրատուի ինքնությունը՝ համակարգային մոտեցումը կառավարելու ծրագրի բնապահպանական և սոցիալական կողմերին, այդ թվում՝ մոնիտորինգի գործառույթներին: Պետք է առանձնահատուկ նշվի հետագա ուսումնասիրությունների համար տեղեկատվական նյութերի բացը կամ կարիքը:

#### 2 Գործունեության շրջանակները

Համառոտ շարադրել քաղաքականությունը, ՇԱԱԳ-ի (Շրջակա միջավայրի, առողջության և անվտանգության ազդեցության գնահատման) իրավական և վարչական դաշտը՝ ամփոփելով Բանկի բնապահպանական և սոցիալական պահանջները և կիրառելի տարածաշրջանային կամ համընդհանուր պահանջներին վերաբերվող համաձայնագրերը կամ պայմանագրերը: Պետք է ամփոփել տեղեկատվության տրամադրման և հասարակական քննարկումների ժամկետները և միջոցները՝ համապատասխան հղում կատարելով Շահառուների ներգրավման ծրագրին: Պետք է նշվի ՎՋԵԲ-ի խորհրդի կողմից ծրագրի քննարկման ժամանակահատվածը:

- Բանկի ներգրավվածությունը ծրագրում,
- ՄՖՀ (Միջազգային ֆինանսական հաստատություններ) Բնապահպանական և սոցիալական գնահատման կիրառելի պահանջները,
- ընդունող երկիրը և դաշտը կարգավորող միջազգային չափանիշներն ու հրահանգները, որոնք կիրառելի կլինեն:

#### 3 Ծրագրի նկարագիրը

Առաջարկված Ծրագրի ճշգրիտ և ժամանակին համահունչ նկարագրությունը և շրջանակները՝ աշխարհագրական, բնապահպանական և սոցիալ-տնտեսական համատեքստում: Այն պետք է ընդգրկի տեղեկատվություն, թե արդյոք± ծրագիրը ավելի մեծ ծրագրի, այդ թվում՝ հողօգտագործման պլանավորման ծրագրի մաս է կազմում, և եթե այո, ապա որն է± ծրագրի դերը:

Ծրագրի այլընտրանքները ևս կարող են քննարկվել այս բաժնում միասնական սկզբունքով, կամ էլ՝ ՇՄԱԳ փաստաթղթի հաջորդ բաժիններում:

Այս բաժինը կներկայացնի ծրագրի մաս կազմող բոլոր բաժինների համակողմանի նկարագրությունը, կներառի և չի սահմանափակվի հետևյալով.

- Օբյեկտներում վերամշակման ենթակա թափոնների տեսակները,
- Կիրառման ենթակա թափոնների վերամշակման համակարգի ձևերն ու բնութագրերը,
- Ծառայությունների շրջանակները և շահագործման հնարավորությունը,
- Օբյեկտի՝ համակարգի շահագործման հեռանկարները,
- Համակարգի շահագործման ընթացքը,
- Թափոնների և արդյունաբերական կեղտաջրերի հեռացումը, և
- Օբյեկտի կառուցապատման և շահագործման ընթացքում աշխատանքի ընդունման ենթակա անձիք:

Ծրագրի նկարագրության մեջ կնշվեն նաև կառուցապատման համար հատկացվելիք տարածքները, պահպանման ենթակա տարածքները, ինչպես նաև այն գործողություններն ու առանձնահատկությունները, որոնք ռիսկ են պարունակում և հնարավոր ազդեցություն (բացասական և դրական) կունենան շրջակա միջավայրի վրա: Այստեղ պետք է ընդգրկել քարտեզների օգտագործումը, տարածքի գծագիրը, կատարված լուսանկարները և համապատասխան օժանդակ գծագրերը և նկարները, միաժամանակ ներառել գտնվելու վայրի, ընդհանուր տեղակայման և չափերի մասին տեղեկությունները, լրացուցիչ կառույցները, ինչպես նաև մինչ շինարարական, շինարարության և հետ շինարարական նախագծերը:

Ակնկալվում է, որ փուլերով իրականացվող ծրագրերի համար կտրվեն բոլոր փուլերի հստակ սահմանումները, կմշակվեն համապատասխան ժամանակացույցերը և կներառվեն փուլերի քարտեզները, գրաֆիկները և համապատասխան դիդակտիկ օժանդակ նյութերը:

Պետք է նաև համառոտ նկարագրվի կեղտաջրերի մաքրման համակարգին, հոսող ջրերի ու անձրևաջրերի հավաքմանը և հեռացմանը վերաբերվող ծրագրերը:

#### **4 Առկա շրջակա միջավայրի նկարագիրը**

Ծրագրի ազդեցության գոտում ֆիզիկական և բնական միջավայրի բնորոշ կողմերի նկարագիրը, սոցիալական և սոցիալ-տնտեսական պայմանների նկարագիրը, որոնք հիմք կծառայեն ազդեցության գնահատման համար: Համապատասխանաբար պետք է նկարագրվեն հետևյալ առկա ազդեցությունը և ազդեցության աղբյուրները.

- Կլիմայական պայմանները,
- Ժողովրդագրությունը և աշխարհագրությունը,
- Հողերի օգտագործումը և բնակեցման միտումները,
- Զրային ռեսուրսները՝
  - արտաքին,
  - ստորգետնյա,
- Հիդրոլոգիական պայմանները (շեշտը դնելով անձրևաջրերի հեռացման, դրենաժային համակարգի վրա),
- Բիոլոգիական և էկոլոգիական ռեսուրսները՝
  - Հիմնական բուսական և կենդանական աշխարհը,
  - Պահպանվող, գրանցված կամ ոչնչացման եզրին գտնող կենդանիների տեսակները,

- Բնական միջավայրը,
- Էկոհամակարգի խնդիրները,
- Առկա շրջակա միջավայրի ճնշումները (ներառյալ կլիմայական հարմարեցումը),
- Լանդշաֆտը և տեսանելի խնդիրները (ներառյալ լույսի ազդեցությունը, եթե բնորոշ է),
  - Օդի որակը և արտանետումների բեռը, ներառյալ մասնակի արտանետումները անշարժ և շարժական աղբյուրներից, NOx, SOx, քամու արագությունը և ուղղությունը, տեղումները, օդի հարաբերական խոնավությունը և մթնոլորտային ջերմաստիճանները,
  - Աղմուկն ու տատանումները,
  - Առկա արտանետումների աղբյուրները և աղտոտվածության աստիճանը,
  - Կոշտ թափոնների կառավարման օբյեկտների պիտանելիությունը,
  - Սոցիալական և սոցիալ-տնտեսական խնդիրները,
    - Դեմոգրաֆիան (բնակչություն, միտումները, սեռատարիքային նկարագիրը, միգրացիան),
    - Սոցիալական կազմը (էթնիկական պատկանելությունը, տոհմային և ցեղական կառուցվածքը, փոքրամասնության խմբերը),
    - Քաղաքական հարաբերությունները և կառավարման խնդիրները,
    - Կոնֆլիկտները և սոցիալական լարվածությունը,
    - Թափոններ հավաքողները (թափոնների հավաքման գործունեությամբ զբաղվող մարդկանց թիվը, որքան մարդ է, որ իր ապրուստի միջոցների մասը վաստակում է թափոններ հավաքելով, ապրուստի միջոցների ձեռքբերման այլընտրանքային հնարավորությունները և առկա սոցիալական օգնության ծրագրերը նույնպես պետք է ուսումնասիրվեն),
    - Հողի և անշարժ գույքի սեփականություն, այդ թվում ապօրինի բնակեցման և վերաբնակեցման, բնակելի տարածքների առաջարկի և պահանջարկի վերաբերյալ խնդիրներ,
    - Ներկա և առաջարկվող հողերի օգտագործումը,
    - Տնտեսական գործունեության տեսակները (ֆորմալ և ոչ ֆորմալ),
    - Եկամուտների, ապրանքների և ծառայությունների բաշխումը,
    - Կրթական համակարգը,
    - Բնակչության առողջական վիճակը,
    - Գենդերային խնդիրները,
    - Խոցելի խմբերը,
    - Մշակույթային ժառանգությունը,
    - Քաղաքակրթության առանձնահատկությունները,
    - Ձգտումները և վերաբերմունքը,
    - Համայնքների առողջապահության վիճակը, ապահովությունն և անվտանգությունը,
    - Աշխատանքի հիգիենան և անվտանգությունը,
- Աշխատուժի խնդիրները և աշխատանքային պայմանները (համաձայն ՏՊ 2-ի):



## **5 Այլընտրանքների վերլուծությունը**

Գտնվելու վայրի, ծրագրի տեխնոլոգիայի կամ հնարավոր բնապահպանական ազդեցությանը առնչվող նախագծի հետ կապված ծրագրի հնարավոր այլընտրանքների համակարգային համեմատությունը: Այն պետք է ընդգրկի նաև «Ոչինչ չանել» տարբերակը: Հնարավորության դեպքում պետք է վերլուծվի արտադրության նվազագույն ծախսեր պահանջող այլընտրանքային ձևերը (օրինակ՝ էներգիա արտադրելու ծրագրերը):

## **6 Ազդեցության և խնդիրների դասակարգումը**

Հայտնաբերել առաջարկված ծրագրի և դրա հնարավոր այլընտրանքների հետ առնչվող հավանական բնապահպանական և սոցիալական ազդեցությունը, այդ թվում՝ անուղղակի և ընդհանուր: Ողջամիտ հիմնավորմամբ պետք է անտեսվի անհավանական կամ ոչ նշանակալից ազդեցությունը:

- Տեղական ազդեցությունը,
- Ազգային ազդեցությունը, և
- Միջսահմանային և համընդհանուր ազդեցությունը:

Այս բաժնում պետք է հայտնաբերվեն և դասակարգվեն չափերի, կարևորության, հակադարձելիության, սահմանների և տևողության հետ առնչվող շրջակա միջավայրի վրա դրական և բացասական ազդեցությունը: Պետք է քննարկվի նաև կուտակվող ազդեցության հնարավորությունը: Առավելագույնս պետք է օգտագործվեն քանակական տվյալները: Այս բաժնում պետք է նաև վեր հանվեն շրջակա միջավայրի բարելավման հնարավորությունները և հայտնաբերվեն հիմնական անորոշ տվյալները ու տվյալների պակասը:

Հարկավոր է հայտնաբերել և դասակարգել շրջակա միջավայրի վրա և սոցիալական ազդեցությունը ծրագրի համապատասխան փուլերում, օրինակ՝

- Նախաշինարարական փուլ,
- Կառուցապատում,
- Շահագործում և սպասարկում, և
- Շահագործման դադարեցում կամ փակում և վերագործարկում:

Երրորդ անձանց որպես կապալառուներ ներգրավելու դեպքում պետք է քննարկվեն նրանց դերն ու կարողությունները, և նրանց նկատմամբ ծրագրի հնարավոր վերահսկողության աստիճանը:

**Մատակարարման շղթայի խնդիրները**, որոնք կարևոր են ծրագրի հիմնական գործառույթների համար, պետք է քննարկվեն այն դեպքում, երբ ծրագրի իրականացման նպատակով օգտագործվող ռեսուրսները էկոլոգիապես կարևոր են, կամ աշխատուժի ցածր արժեքը հանդիսանում է ծրագրի մրցունակության վրա ազդող գործոն:

### *Շրջակա միջավայրի վրա ազդեցությունը և խնդիրները*

- Դրենաժային համակարգի փոփոխությունը,

- Հեղեղումների հավանականությունը,
- Պեղումների և կառուցապատման ազդեցությունը լանդշաֆտի վրա
- Խմելու ջրի, վերգետնյա և ստորգետնյա ջրերի աղտոտվածությունը
- Օդի աղտոտվածությունը
- Կեղտաջրերի հավաքումը և հեռացումը (արդյունաբերական կեղտաջրեր)
- Սոցիալ տնտեսական և մշակույթային ազդեցությունները, այդ թվում՝ հնարավորության դեպքում հողի ձեռքբերման և դրա հետ կապված վերաբնակեցման, և տնտեսական վիճակի վերականգնման անհրաժեշտությունը
- Վտանգի հանդեպ խոցելիությունը
- Աղմուկը
- Տհաճ հոտը
- Վտանգավոր նյութերի և բժշկական թափոնների տարածումը (մաքրման կայանների և աղբահավաք բեռնատարների շրջակայքում)
- Աշխատանքի հիգիենայի և անվտանգության խնդիրներ
- Տեսանելի ազդեցությունները, այդ թվում՝ հիմնական ճանապարհից երևացող տեսադաշտը
- Բուսական և կենդանական աշխարհի բազմազանությունը
- Բնական ռեսուրսների կայուն կառավարումը
- Ջերմոցային էֆեկտ ստեղծող գազերի արտանետումը
- Կլիմայական փոփոխությունը և հարմարեցումը:

Ծրագրի գործողություններն և ազդեցություններն պետք է ներկայացվեն աղյուսակի ձևով: Ազդեցության աղյուսակը պետք է ընդգրկի հնարավոր ազդեցությունը, ազդեցության սահմանները, ազդեցությունը մեղմացնող միջոցները և ազդեցությունը մեղմացնող միջոցները կիրառելուց հետո մնացորդային ազդեցության սահմանները:

ՇՄՍԱԳ-ը պետք է բնութագրի առկա տվյալների շրջանակները և որակը՝ բացատրելով տեղեկատվության զգալի պակասը և ազդեցությունների կանխագուշակման հետ կապված անորոշությունները:

#### *Սոցիալական հետևանքները և խնդիրները*

Համայնքներին վերաբերվող առողջապահական և սոցիալ-տնտեսական հետևանքներն և խնդիրներն ամենայն հավանականության կառաջանան տարբեր ժամանակաշրջաններում և կարող են փոխկապակցված լինել միմյանց հետ, ինչպես նաև շրջակա միջավայրի ազդեցության և խնդիրների հետ, հետևաբար հարկավոր է կատարել հետևանքների ամբողջական գնահատում:

#### *Աշխատուժը և աշխատանքային պայմանները*

Տես ՏՊ 2-ը:

#### *Բնակչության տեղաշարժը*

- Ժամանակավոր կամ մշտական հողի, գույքի, տնտեսական ակտիվների ձեռքբերումն (տես Պարտադիր վերաբնակեցման ուղեցույցը), և
- Տարածքին առնչվող արտագաղթը և ներգաղթը:

### *Տնտեսությունը*

- Ազդեցությունը տնտեսական ակտիվների, այդ թվում՝ հողի վրա,
- Աշխատանքի կորուստը,
- Աշխատատեղերի ստեղծումը՝ ժամանակավոր աշխատատեղեր՝ շինարարության ընթացքում, և մշտական աշխատատեղեր՝ շահագործման ընթացքում,
- Հնարավոր աշխատատեղերի ստեղծում անուղղակի ձևով, օրինակ ենթակապալի միջոցով, և
- Հատկապես կարևոր է ուշադիր հետևել հնարավոր ազդեցությանը ոչ ֆորմալ սեկտորի վրա: Ոչ ֆորմալ սեկտորը կարևորվում է նրանով, որ այս ոլորտում կատարվող փոփոխությունները կարող են կարևոր հետևանքներ ունենալ խոցելի խմբերի կենսամակարդակի վրա:

### *Համայնքների առողջապահական համակարգի վիճակը, ապահովությունն և անվտանգությունը*

ՇՄՍԱԳ-ի համար միգուցե կարիք լինի պարզելու, թե ինչպես ծրագիրը կարող է ներգործել անբարենպաստ ազդեցության տակ գտնվող համայնքների առողջապահության վրա: Ուշադրություն պետք է դարձնել գոյություն ունեցող մի շարք հետևանքների վրա.

- Վարակիչ հիվանդությունների տարածման հնարավորությունը,
- Ծրագրի կողմից առաջացրած շրջակա միջավայրի պայմանները, որոնք հնարավոր է վատթարացնեն առողջությունը, և
- Ծրագրի ազդեցությունը բժշկական օգնություն ստանալու հնարավորության վրա: Արդյո՞ք Ծրագիրը կհանգեցնի բնակչության հեռացմանը առողջապահական հաստատություններից:

Կարևոր է այն հանգամանքը, որ առկա են ազդեցության գոտու համայնքների առողջապահական վիճակի վերաբերյալ նախնական ելակետային տվյալները: Դա հնարավորություն կընձեռի ավելի ճշգրիտ չափելու և գնահատելու բնակչության առողջապահական վիճակի փոփոխությունները:

### *Կրթական համակարգը*

- Ծրագրի ազդեցությունը կրթական հաստատությունների վրա: Արդյո՞ք Ծրագիրը կհանգեցնի կրթական հաստատությունների առանձնացմանը, և
- Ինչ՞ օգուտներ կարող են ստանալ ծրագրից կրթական հաստատությունները:

### *Սոցիալական կոնֆլիկտները*

Ծրագրի հետ կապված զարգացումները և ռեսուրսների օգտագործումը հաճախ կարող են լարվածություններ առաջացնել համայնքների միջև կամ համայնքների ներսում, հատկապես այն իրավիճակում, երբ տնտեսական զարգացման ցածր մակարդակի հետևանքով անբարենպաստ ազդեցության տակ գտնվող բնակչության շրջանում պայքար է մղվում ռեսուրսերի հասանելիության համար: Սոցիալ-տնտեսական

իրավիճակը բնութագրող ցուցանիշների և սոցիալական զարգացումների վերաբերյալ ելակետային տեղեկատվության օգտագործման արդյունքում պարզ կդառնա, թե արդյոք կարիք կա իրականացնելու կոնֆլիկտների մանրամասն վերլուծություն: Դիտարկվող խնդիրները ներառում են.

- Շահառուների շահերը և նրանց միջև փոխհարաբերությունները,
- Շահառուների միջև կոնֆլիկտների հնարավոր պատճառները, և
- Արդյո՞ք ծրագիրն ազդեցություն կունենա ռեսուրսների բաշխման վրա:

ՍԱԳ-ի ժամանակ պետք է հաշվի առնել գոյություն ունեցող սոցիալական և տնտեսական խնդիրների հետ կապված լարվածությունը, և ծրագրի իրագործման արդյունքում այնպիսի հնարավոր իրավիճակի ստեղծումը, որտեղ այս լարվածությունը կարող է խորանա և վերածվել կոնֆլիկտի:

### *Գենդերային խնդիրները*

Սոցիալական խնդիրները հաճախ արտահայտվում են տարբեր կերպ տղամարդկանց և կանանց միջև: ՍԱԳ-ի նպատակը պետք է լինի հիմնական գենդերային խմբերը, որոնց հետ առնչվող խնդիրները պետք է քննարկվեն վերլուծության (գնահատման) ամբողջ ընթացքում, այլ ոչ թե կատարվի առանձին գենդերային խմբերի վերլուծություն: Որոշակի հանգամանքներում ծրագիրը կարող է վնասակար ազդեցություն ունենա տղամարդկանց, այլ ոչ թե կանանց վրա, կապված ծրագրի բնույթի կամ հասարակության սոցիալ-մշակութային և տնտեսական հանգամանքների հետ: Որքան է կարևոր գենդերային վերլուծություններում՝ տղամարդկանց և կանանց վրա տարանջատված ազդեցությունները հասկանալու համար: Անհարժեշտ հարցադրումները ներառում են.

- Ունենա՞նք կանանց և տղամարդկանց սոցիալական և տնտեսական դերը ազդեցության տարածքում:
- Արդյո՞ք ծրագիրն վնասակար ազդեցություն կունենա տղամարդկանց և կանանց սոցիալական և տնտեսական դերի վրա:
- Ի՞նչ քայլեր պետք է ձեռնարկել կանանց հետ խորհրդակցելու համար:
- Արդյո՞ք կանայք և տղամարդիկ ծրագրից օգտվելու հավասար հնարավորություններ ունեն:
- Արդյո՞ք կան արգելքներ համայնքներում կանանց մասնակցության համար, և ինչպես կարող են դրանք հաղթահարվել՝ առանց լարվածություններ ստեղծելու:

### *Տեղաբնակները*

Եթե նախնական ուսումնասիրությունը ցույց է տալիս տեղաբնակների (ՏԲ) ներկայությունը, ապա ելակետային տվյալների բազայի մանրամասն տեղեկատվությունը թույլ կտա որոշելու, թե արդյոք անհրաժեշտություն կա տեղաբնակների մասին ծրագրի: ՏԲ-ի վրա ծրագրի ազդեցության վերաբերյալ մանրամասն պահանջների համար տես ՎՋԵԲ-ի տեխնիկական պահանջների 7-րդ կետը:

## **7 Հետևանքների և խնդիրների մեղմացնող միջոցները և կառավարումը**

Այս բաժնում պետք է շարադրվեն հնարավոր ծախսերն արդարացնող

միջոցառումները՝ կանխելու կամ ընդունելի մակարդակի նվազեցնելու շրջակա միջավայրի վրա ազդեցությունները, և այլ բնապահպանական խնդիրներ, ինչպես օրինակ՝ աշխատողների առողջության և անվտանգության բարելավման կարիքը, պետական կառավարման մարմինների միջև համագործակցությունը, համայնքների ներգրավվածությունը, ենթակառուցվածքների ուժեղացումը, կամ ծրագիրը հովանավորողների կողմից համայնքային մակարդակով դասընթացների կազմակերպումը իրականացնող կազմակերպությունների, պետական կառավարման մարմինների շրջանում: Պետք է շարադրվեն նաև չափորոշիչներ, որոնք կբարելավեն ծրագրի կողմից վնասակար ազդեցության ներքո գտնվող տարածքի բնապահպանական իրավիճակը: Այս բաժնում պետք է բնութագրվի շրջակա միջավայրի վրա մնացած ազդեցության բնույթը կամ չքննարկված բոլոր այլ խնդիրները: Պետք է նաև նկարագրվեն հնարավոր ռիսկերի հետ առնչվող ֆինանսական դրույթները (օրինակ դեպոնացված հաշիվների և ապահովագրության օգտագործումը, որոնց հաշիվն այլ խնդիրների լուծման հետ համատեղ կփոխհատուցվեն՝ լքված բնակավայրերի, օբյեկտների շահագործման դադարեցման, տարածքների վերականգնման, թափված նավթի մաքրման և այլ արտակարգ իրավիճակների հետ կապված ծախսերը):

- Նախաշինարարական փուլ,
- Կառուցապատման փուլ,
- Շահագործում և սպասարկում, և
- Շահագործման դադարեցում կամ փակում և վերագործարկում

Ինչ վերաբերվում է սոցիալական խնդիրներին, ապա հարկավոր է մշակել ներքին և/կամ արտաքին քաղաքականության շրջանակներին վերաբերող բացասական ազդեցությունը մեղմացնող միջոցներ: Ներքին քաղաքականության շրջանակները կարող են համապատասխանել պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների մակարդակին, օրինակ՝ այն դեպքերում երբ երկիրն ունի աղքատության նվազեցման ռազմավարություն, կամ համապատասխան քաղաքականություն է մշակվել գյուղատնտեսության զարգացման նպատակով: Այն կարող է վերաբերվել այլ ենթակառուցվածքների զարգացմանը, ինչպիսիք են ճանապարհների բարելավումը կամ էներգամատակարարման բարելավումը: Հատկապես կարևոր է, որ կրթական և առողջապահական բնագավառներում բացասական ազդեցությունը նվազեցնող միջոցները կապված լինեն պետական հատվածին վերաբերվող դրույթների հետ՝ դրական ազդեցությունը առավելագույնս մեծացնելու և կայունությունը ապահովելու համար: Արտաքին քաղաքականության շրջանակները կարող են մշակված լինեն այնպիսի կազմակերպությունների կողմից ինչպիսիք են ՄԱՄՀ (UNICEF), ՄԱԶԾ (UNDP), ՄԱԿՓԳՀԳ (UNHCR), և/կամ ԱՀԿ (WHO):

*Մնացորդային հետևանքները և ռիսկերը*

Հարկավոր է նկարագրել հիմնական մնացորդային հետևանքները և գնահատել նրանց կարևորությունը:

Հարկավոր է քննարկել բնապահպանական ռիսկերը, ինչպիսիք են վթարների և դժբախտ պատահարների հավանականությունը (օրինակ՝ նավթի արտահոսքը,

պայթյունները, աղտոտիչ նյութերի արտանետումները, ամբարտակի վթարը և այլն): Պետք է նկարագրել առաջարկված արտակարգ իրավիճակներում գործողությունների պլանը և միջոցառումները ու գնահատել նրանց պատշաճ լինելը:

Սոցիալական ռիսկերը շատ են կախված հատուկ հանգամանքներից և պետք է ընդգրկեն հետևյալ գործոնները.

- Տնտեսական զարգացումները, օրինակ՝ սղաճի միտումները,
- Այն քաղաքական փոփոխությունները, որոնք կդժվարացնեն բացասական ազդեցությունը նվազեցնող որոշակի միջոցառումների իրականացումը,
- Չնախատեսված դեպքերը, ինչպիսիք են բնական աղետները, և
- Բացասական ազդեցությունը նվազեցնող միջոցների կիրառումը ապահովող հմուտ մասնագետների բացակայությունը:

### **Ծրագրի ընդլայնման բնապահպանական և սոցիալական հնարավորությունները**

*Բնապահպանական այդ թվում.*

Բնական միջավայրի ընդլայնում

Նոր հողերի օգտագործման սահմանափակում

Տարածքների վերականգնում և մաքրում

Էներգիայի և պաշարների արդյունավետ օգտագործում

Ավելի մաքուր արտադրություն

Ենթակառուցվածքների ուժեղացում

Կարողությունների զարգացում

*Սոցիալական*

Քանի դեռ սոցիալական ազդեցության գնահատականները հիմնականում վերաբերվում են բացասական ազդեցությունների նվազեցմանը, դրանք նույնպես հնարավորություն են ընձեռում բացասական ազդեցության ենթարկված մարդկանց օգտվել ծրագրից: Ծրագրի առավելություններն են.

- ծրագրի միջոցով ժամանակավոր և մշտական աշխատատեղերի ստեղծումը,
- տեղական ընկերությունների համար ենթակապալի հնարավորությունները,
- տեղական ընկերությունների համար ապրանքներ մատակարարելու

հնարավորությունը,

- վերաբնակեցման անհրաժեշտության դեպքում վերաբնակեցվածների

բնակարանային պայմանների բարելավումը,

- ծրագիրը կարող է ազդեցություն ունենա տեղական դպրոցների վրա՝ հնարավորություններ ստեղծելով ուսուցման համար:

Ամեն մի ծրագիր հատուկ հնարավորություն կընձեռի զարգացման արդյունքում ավելի մեծ օգուտներ ստանալու, և այդ հնարավորությունները պետք է ուշադիր քննարկվեն համայնքի հետ: Զարգացման հնարավորությունների ռազմավարությունը ուսումնասիրելու ժամանակ հատուկ ուշադրություն պետք է դարձվի ազդեցության գոտում գտնվող խոցելի խմբերին: Առանձնահատուկ միջոցներ չձեռնարկելու դեպքում, դրանք ամենայն հավանականությամբ կզրկվեն զարգացման դրական արդյունքներից:

Այս հարցը ավելի մանրամասն ներկայացված է խոցելի խմբերի գնահատմանը վերաբերվող Հավելված Ա-ում: Մասնավորապես այս խմբերի դեպքում կարևոր է հիշել, որ մասնակցության կամ համայնքի պահանջների վրա հիմնված մոտեցումը չի երաշխավորի այս խմբերի համար դրական արդյունքներից օգտվելու հնարավորությունը: Ավելին, հատուկ չափորոշիչները հնարավորություն կտան հասարակության որոշակի խմբերին մասնակից դարձնելու գործողություններում, օրինակ՝ հաշմանդամ մարդկանց համար աշխատատեղերի ստեղծման համար կպահանջվի հատուկ հարմարությունների ստեղծում:

### **8 Գործողությունների ծրագիրը և կառավարման համակարգը**

Ամբողջական և բազմակողմանի ուսումնասիրության ենթակա կառավարման պլանները, ծրագրերն ու համակարգերը, բնապահպանական և սոցիալական հետևանքները, խնդիրներն ու հնարավորությունները պետք է հիմնվեն անհրաժեշտ հստակ նշված արդյունքների կամ թիրախների, ժամանակահատվածների, պարտականությունների և ռեսուրսների վրա: Այս հարցը ուսումնասիրելու ուղղությամբ կօգնի Բանկի կողմից թողարկված «Բնապահպանական և սոցիալական գործունեության ծրագրի մասին» մեթոդական ցուցումը:

Պլանը պետք է ներառի ճկուն կառավարման գործելակերպը և մոնիտորինգի իրականացման համապատասխան գործողությունները՝ ապահովելու համար.

- ազդեցությունները նվազեցնող միջոցների արդյունավետությունը,
- անսպասելի բացասական ազդեցությունների կամ ուղղությունների հայտնաբերումը և ուսումնասիրությունը,
- ծրագրից ակնկալվող օգուտների և դրական արդյունքների ստացումը:

Մոնիտորինգը պետք է կենտրոնացվի ծրագրի կատարման սոցիալական և շրջակա միջավայրի վրա ազդեցության հիմնական ցուցանիշների վրա: Յուրաքանչյուրը պետք է համեմատվեն մինչև ծրագրի իրականացումը գոյություն ունեցող ցուցանիշների հետ և լինեն ճշգրիտ, չափելի, իրագործելի, տեղին և վերանայվեն պատշաճ հաճախականությամբ:

Հարկավոր է մշակել դրոյթներ՝

- կարողությունների զարգացման, օրինակ կապված ծրագրի աշխատողների կամ երրորդ անձանց ուսուցման հետ (անհրաժեշտության դեպքում)
- արտակարգ իրավիճակներում գործողությունների պլանների և միջոցառումների (ընդգրկելով բավարար ռեսուրսները)

### **8 Հավելվածներ**

- ՇՄԱԳ-ը մշակող անձանց անունները,
- Տեղեկատվության աղբյուրները և հղումները,
- Հասարակական ժողովների և քննարկումների արձանագրությունները,
- Հիմնավորող տեխնիկական տվյալները,
- Նկարները:

**ՀԱՎԵԼՎԱԾ Ա. Խոցելի խմբերի հայտնաբերումը և նախնական ուսումնասիրությունը**

Նախնական գնահատման արդյունքում ծրագրերի գործունեության տարածքում պետք է հայտնաբերվեն խոցելի մարդկանց լայն խմբերը:

Խմբերի սահմանումը ամեն անգամ չէ, որ հեշտ է կատարվում և կարող է փոփոխվել կապված դրանց գտնվելու վայրից: Օրինակ՝ գտնվելու վայրի հետ կապված կարող է տարբերվի էթնիկական խմբի խոցելիությունը: Նախնական գնահատման փուլում հարկավոր է միայն գնահատել խոցելիության հնարավորությունը: Խմբերը կարող են լինել ոչ տեսանելի և/կամ “թաքնված”:

Խմբերի դասակարգումը ըստ խոցելիության տարբեր տեսակների կարող է կատարվել հետևյալ կերպ.

Խմբերը	Հիմնական առանձնահատկությունները, ցուցանիշները
<p><b>Խումբ Ա</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• Տարեցներ</li> <li>• Երիտասարդներ</li> <li>• Ֆիզիկական արատներով</li> <li>• Մտավոր արատներով</li> <li>• ՄԻԱՎ/ՁԻԱՀ վարակակիրներ</li> <li>• Այլ քայքայիչ հիվանդություններ</li> </ul>	Մարդկային ֆիզիկական հատկանիշները
<p><b>Խումբ Բ</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• Անօրինական բնակություն հաստատած անձինք</li> <li>• Հանրային սեփականություն հանդիսացող հողեր օգտագործողներ</li> <li>• Թափառաշրջիկներ</li> <li>• Տեղաբնակ արտեզյան ձկնորսներ</li> <li>• Արտեզյան հանքափորեր</li> <li>• Աղքատության եզրին գտնվող մարդիկ</li> <li>• Մարմնավաճառներ</li> </ul>	Տնտեսական և զբաղվածության
<p><b>Խումբ Գ</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• Փախստականներ</li> <li>• Ներքին տեղաշարժի ենթարկվող մարդիկ</li> <li>• Համայնքների նոր բնակիչներ</li> <li>• Անօրինական միգրանտներ</li> </ul>	Միգրացիոն



<p><b>Խումբ Դ</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• Տեղաբնակներ</li> <li>• Ազգային փոքրամասնություններ</li> <li>• Կրոնական պատկանելիության խմբեր</li> </ul>	<p>Սոցիալական խմբերին ուղղված</p>
<p><b>Խումբ Ե</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• Կանայք</li> </ul>	<p>Գենդերային</p>
<p><b>Խումբ Ժ</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• Աշխարհագրական տեղաբաշխվածության տարածքներ</li> <li>• Բնական աղետների ենթարկվող տարածքներ</li> <li>• Կանխամտածված չօգտագործվող տարածքներ</li> <li>• Սահմանափակ ենթակառուցվածքներով տարածքներ</li> </ul>	<p>Տարածքային տեղաբաշխվածության</p>

**Սոցիալ-տնտեսական հիմնական բնութագրերը**

Քանակական և որակական տվյալների հավաքագրումը թույլ կտա հասկանալ ծրագրի ազդեցության վայրում խոցելի խմբերի սոցիալ-տնտեսական բնութագրերը և նրանց հարաբերությունները համայնքի մնացած ներկայացուցիչների հետ: Ստորև բերվող աղյուսակը ներկայացնում է սոցիալ-տնտեսական տեղեկատվության շրջանակը և դրա ներկայացման ձևերը:

Խոցելի խմբեր	Տարաքային տեղաբաշխվածությունը	Բնութագրական կողմերը	Համայնքների այլ ներկայացուցիչների հետ հարաբերությունը
Տարեցներ	30 մարդ՝ բնակեցված x, y, z գյուղերում	Մեծամասնության մոտ շարժունակության անկում, տեսողության և լսողության հետ կապված հնարավոր դժվարություններ	Հնարավոր է, որ հարգանքի են արժանանում Հնարավոր է, որ ուշադրության չեն արժանանում, Հնարավոր է, որ բանեցվում են
Հաշմանդամներ		“	Պաշտպանված են

			համայնքների կողմից, բայց միևնույն ժամանակ ծաղրի են ենթարկված: Որոշ դեպքերում կարող է պահանջվի խնամակալի թույլտվությունը:
--	--	--	---

**ՀԱՎԵԼՎԱԾ 2**  
**ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ և ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՁևԱԶԱՓԸ**

No	Գործողությունը	Պարտավորությունների ռիսկերը/ Օգուտները	Օրենսդրական պահանջները/Լավագույն փորձ	Ներդրումներ ի կարիքը/Ռեսուրսները	Գործողությունների ժամանակացույցը՝ մինչև տարեվերջ ըլրացման ենթակա	Բարեհաջող իրականացման համար թիրախները և գնահատման չափանիշները	Մեկնաբանություններ
<b>1</b>	<b>Բնապահպանական և Սոցիալական կառավարումն և ուսուցումը</b>						
1.1	Մշակել և իրականացնել Բնապահպանական կառավարման համակարգը (ԲԿՀ).	Բնապահպանական կառավարման օպտիմալացում ձևավորված համակարգի միջոցով: Միջոցներ տրամադրել արտանետումների ուսումնասիրման և ուսուցման համար:	Կամավոր և լավագույն փորձը	Սեփական միջոցները, արտաքին խորհրդատուներ, ծախսերը	2009	Մշակել ԲԿՀ –ն՝ հասնելով ISO 14001 կամ համարժեք չափանիշներին: Ձեռք բերել վկայականը մինչև xxx թ. տարեկան ԲևՍ հաշվետվության ներկայացումը Բանկին:	

**ՀԱՎԵԼՎԱԾ 3**

**ՎՋԵԲ-ի ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԱՐՅՈՒՍԱԿԻ ԱՌԱՋԱՐԿՎԱԾ ՁԱՁՍՓԸ**

<b>ՏՊ համարը</b>	<b>ՏՊ պահանջը / խնդիրը</b>	<b>Պահանջների կատարման կարգավիճակը,</b>	<b>Չկատարված պահանջները</b>	<b>Մեկնաբանություններ/ Առաջարկություններ</b>
	Կիրառելի պահանջների համառոտ նկարագիրը կամ հղումները ՏՊ-ի հոդվածին կամ պարագրաֆի համարին	Պահանջների կատարման կարգավիճակը	Չկատարված պահանջները (եթե կան) լրացուցիչ կուսումնասիրվեն կամ որպես գործողությունների կետ կարտացոլվեն ԲՍԳԾ-ում	Նշել լրացուցիչ ուսուցման, տեղեկատվության, գործողությունների կարիքը ՎՋԵԲ-ի պահանջներին համապատասխանելու համար

**Աշխատողների ցանկը և ծախսերի բաշխումը  
(Բոլոր գումարները ներկայացվում են առանց անուղղակի հարկերի, որոնք կարող են պահվել Խորհրդատուի կողմից, այդ թվում՝ ԱԱՀ-ի)**

**Հայաստան. Կոշտ թափոնների կառավարումը Կոտայքի մարզում- Բնապահպանական և սոցիալական տեխնիկատնտեսական հիմնավորում**

**ԵՎՐՈ**

**1. Հոնորար:**

<b>Փորձագետի անունը</b>	<b>Զբաղեցրած պաշտոնը</b>
Կրիստեն Բերնստեյն	Կոշտ թափոնների կառավարման փորձագետ
Նունե Դարբինյան	Հասարակական քննարկումների փորձագետ
Լարիսա Լաուիրթզեն	Բնապահպանական և սոցիալական տեխնիկատնտեսական հիմնավորման փորձագետ
Ալբերտ Մանուկյան	Տարածքների հետազոտման փորձագետ
Գևորգ Մարտիրոսյան	Նախագծման և դիդակտիկ ներկայացման փորձագետ
Արմինե Սիմոնյան	ՇՄԱԳ և Բնապահպանական օրենսդրության փորձագետ
Կարստեն Սկոլ	Աղբավայրերի փորձագետ
<b>Ընդամենը հոնորարները:</b>	<b>120,000.00</b>

Հաշիվ-ապրանքագրերը պետք է պատրաստվեն կցված Հաշիվ-ապրանքագրերի պատրաստման կանոնների համաձայն: Բանկը և պատվիրատուն պատասխանատու չէ հաշիվ-ապրանքագրերի վճարումների ուշացումների համար, եթե Խորհրդատուի հաշիվ-ապրանքագիրը չի համապատասխանում կցված կանոններին: Եթե այլ բան նախատեսված չի Պայմանագրով, պայմանագրով նախատեսված և Խորհրդատուի կողմից ձեռքբերված յուրաքանչյուր սարքավորում Բանկի որոշմամբ դուրս կգրվի Պայմանագրի ավարտման ժամանակ:

## ՀԱՇԻՎ-ԱՊՐԱՆՔԱԳՐԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ

Հաշիվ-ապրանքագրերի ներկայացման դեպքում պետք է պահպանվեն հետևյալ դրույթները:

- **Կանխավճար ստանալու համար բոլոր հաշիվ-ապրանքագրերը պետք է հասցեագրվեն և ուղարկվեն հետևյալ կերպ.**

Հաշիվ-ապրանքագրի բնօրինակը և հիմնավորող փաստաթղթերը պետք է ուղարկվեն Պատվիրատուին հետևյալ հասցեով՝

Քաղաքաշինության նախարարություն նախարարի տեղակալ,  
Կառավարական տուն 3, Հանրապետության հրապարակ  
ԵՐԵՎԱՆ  
0010  
Հայաստան

Պատճեն միաժամանակ պետք է ուղարկվի Բանկ հետևյալ հասցեով.

Invoice Control  
European Bank for Reconstruction and Development  
One Exchange Square  
London EC2A 2JN  
UK

Ի ծանոթություն Խորհրդատուին հաշիվ-ապրանքագրերի պատճենները Բանկ են ուղարկվում միայն վերջինիս իրազեկման նպատակով: Խորհրդատուն սույնով տեղեկացվում է, որ Բանկը իրավասու չէ կատարել հաշիվ-ապրանքագրերով հիմնավորված վճարումները մինչև հաշիվ-ապրանքագրի բնօրինակը չհաստատվի և Պատվիրատուի կողմից չփոխանցվի Բանկ:

Կանխավճար կատարելու համար հաշիվ-ապրանքագիրը պետք է հասցեագրվի և ուղարկվի անմիջապես ՎՋԵԲ-ին:

- Հաշիվ-ապրանքագրում պարտադիր պետք է նշել Պայմանագրի համարը՝ **C20636/EBSF-2010-09-140REV:**
- Հաշիվ-ապրանքագրերը պետք է պարունակեն Խորհրդատուի գործունեության հասցեն, հաշիվ-ապրանքագրի համարը և ամսաթիվը: Հաշիվ-ապրանքագրում պետք է նշվի հարցումներ ուղարկելու համար կոնտակտային անձի անունը և հեռախոսի համարը:
- Բանկը վճարումներ կկատարի միայն հետևյալ պայմանների կատարման դեպքում. (i) ստորագրված Պայմանագրի բնօրինակը ուղարկվել է Խորհրդատվական Ծառայությունների Բաժին, (ii) բնօրինակ հաշիվ-ապրանքագրերը և ծախսերը հիմնավորող բնօրինակ

անդորրագրերը ուղարկվել են (Ֆաքսիմիլե հաղորդումները կամ պատճենները չեն ընդունվի) և (iii) Պատվիրատուն հաստատել է հաշիվ-ապրանքագրի պատշաճ լինելը:

- Հաշիվ-ապրանքագրերով հիմնավորված վճարումները կատարվելու են բանկային հաշվին ուղղակի փոխանցման միջոցով:
- Հաշիվ-ապրանքագրում պետք է նշվեն վճարումների ստացման համար նախատեսված բանկային հաշվի բոլոր մանրամասները, այդ թվում՝ հաշվարկային հաշվի արտարժույթը:
- Պետք է նշվի նաև ծառայությունների մատուցման ժամանակաշրջանը:
- Հաշիվ-ապրանքագրերը պետք է դասակարգվեն Ծրագիր Բ-ում սահմանված կարգով:
- Ծախսերը և օրապահիկը պետք է ներկայացվեն հաշիվ-ապրանքագրերում Պայմանագրի 3.04 կետով սահմանված կարգով:
- Տարադրամի փոխարժեքները պետք է նշվեն հաշիվ-ապրանքագրերում:
- Պայմանագրի հետ կապված ցանկացած փոփոխություն, որի հետևանքով պետք է փոփոխվի պայմանագիրը, պետք է կատարվի մինչև հաշիվ-ապրանքագրի ներկայացումը:
- Ծառայությունների մատուցման համար Խորհրդատուների կողմից ներկայացվող վերջին հաշիվ-ապրանքագիրը (կամ որոշ դեպքերում, միակ հաշիվ-ապրանքագիրը) պետք է անվանվի «Վերջնական հաշիվ-ապրանքագիր»՝ համապատասխան գրառում կատարելով հաշիվ-ապրանքագրում: Վերջնական հաշիվ-ապրանքագիրը պետք է ներկայացվի միայն Խորհրդատուի կողմից, Ծառայությունների մատուցման բոլոր պարտականությունները կատարելուց հետո, և Պատվիրատուի կողմից Ծառայությունների մատուցումն ավարտելու փաստը հաստատելու դեպքում: «Վերջնական հաշիվ-ապրանքագիրը» պետք է ներկայացվի Ծառայությունների մատուցման ավարտման կամ Պայմանագրի գործունեության ժամկետի ավարտման պահից երեք ամսվա ընթացքում:
- Փոխհատուցվող ծախսերը, այդ թվում՝ օդային տրանսպորտից օգտվելու ճանապարհաձախսը, տեղական ճանապարհաձախսը և այլ ծախսերը պետք է ներկայացվեն հաշիվ-ապրանքագրերում Պայմանագրի տարադրամով՝ համաձայն Պայմանագրի 3.04 կետի: Օդային տրանսպորտից օգտվելու ճանապարհաձախսը փոխհատուցելու համար հարկավոր է ներկայացնել տոմսի բնօրինակը, նստելու կտրոնի և ճանապարհորդական գործակալության անդորրագրի հետ միասին:
- Փոխհատուցման ենթակա բոլոր ծախսերը պետք է ներկայացվեն համարակալված ցուցակով՝ կցելով համապատասխանորեն համարակալված բնօրինակ անդորրագրերը:
- Ապրանքների գնումները պետք է համապատասխանեն Բանկի գնումների քաղաքականությանը և կանոններին, մասնավորապես՝ 3.12 և 3.13 կետերին:
- Վճարման ենթակա բոլոր ծախսերը, այդ թվում՝ Խորհրդատուի կողմից պահվող ԱԱՀ-ն, պետք է առանձնացվեն հաշիվ-ապրանքագրերում. այդ գումարները ենթակա չեն վճարման Դրամաշնորհի միջոցների հաշվին և պետք է փոխհատուցվեն Պատվիրատուի կողմից:
- Այս կանոնների վերաբերյալ բոլոր հարցերը պետք է հասցեագրվեն Բյուջետային հարցերով զբաղվող մասնագետին, Խորհրդատվական ծառայությունների բաժին (Senior Budget Officer, The Consultancy Services Unit) հեռախոս. + 44 20 7338 6927.